ԿՂԵՄԷՍ ԳԱԼԱՆՈՍՆ ՈՒ ՀԱՅԵՐԸ

Մերուժան Կարապետեան

ԿՂԵՄԷՍ ԳԱԼԱՆՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ (1641-1643)

Դարեր շարունակ Հայ եկեղեցին անցել է բազմատեսակ խոչընդոտների միջով՝ միշտ հաւատարիմ մնալով իր ստացած ժառանգութեանը, պահելով Առաքելական հաւատքը, որ Սուրբ Հայրերի շնչով օծուն աւանդ էր թողնուած իրեն: Այս հաւատարմութիւնը դարերի ընթացքում կարողացել է ապացուցել իր կենցաղով՝ ծաղկեցնելով հազարաւոր վանքեր, շինելով գեղարուեստական կոթողներ, իսկ հարկ եղած դէպքում ապացուցել է նաեւ արեան վկայութեամբ:

Այսպէս ահա իր հազար դժուարութիւններով, Քրիստոսի այլ եկեղեցիների կողքին, մեր եկեղեցին էլ ունեցել է իր ինքնուրոյն ընթացքն ու պատմութիւնը, ու այսօր, երբ յետադարձ ակնարկ ենք նետում նրա պատմութեանը, չենք կարող չտեսնել այնտեղ նաեւ որոշ անձանց խաղացած ժխտական դերը, որոնք ուզել են փոխել ընթացքը համայն եկեղեցու մէջ՝ տարուած նախանձախնդրութիւնից կամ ճշմարտութեան, սիրոյ սխալ ըմբռնումներից, հասնելով խոտոր ու ծայրայեղ եզրակացութիւնների:

ԺԷ. դարում մեր եկեղեցին գտնուում էր Պարսկական եւ Օսմանեան լծի տակ, ու քանի որ չկար քաղաքական ամբողջական կազմակերպութիւն, ազգի մասին հոգ տանելը ստանձնել էր եկեղեցական դասը, յատկապէս՝ նրա գլուխը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Այս իսկ պատճառով նոյն դարում մեր եկեղեցու հայեացքը դարձել էր դէպի Արեւմուտք՝ լինի քրիստոնեայ թագաւորներին, թէ նրա եկեղեցական պետին, խաղաղ ապրելու համար առօրեայ կեանքը՝ սպասելով նրանցից յատկապէս բարոյական օժանդակութիւն՝ տիրող բռնութեանը տոկալ կարողանալու համար:

Հակառակ այս աննպաստ պայմաններին, ԺԷ. դարը կարող ենք համարել վերականգնման շրջան մեր ազգային պատմութեան մէջ: Հայ եկեղեցու ծոցում փայլում է երեւելի եկեղեցականների մի շարք, կրկին ծաղկում է հայ վանականութիւնը եւ վերածնւում ուսման սէրը, աճում է ծարաւը տարածուելու եւ ընդարձակուելու բոլոր ասպարէզներում[1]: Յատկապէս այս դարում է, որ լատին միսիոներները, թափանցելով Հայաստան, գտնում են գործելու ազատ ասպարէզ, ու գիտութեանն ու ուսմանը ծարաւի մեր եկեղեցականները, մօտենում են նրանց՝ ջանալով օգտուել նրանց ներկայութիւնից, գնահատելով նրանց մտաւոր պատրաստութիւնը: Այս կերպով ծայր է առնում յարաբերութիւնը երկու եկեղեցիների միջեւ:

* * *

Բազմաթիւ են այս ուղղութեամբ հաւատասփիւռի դիւանից հաւաքուած մեր ունեցած վկայութիւնները, որոնց օգնութեամբ փորձում ենք վերականգնել պատմական այն կամ այն դրուագը: Այս աշխատութեան նպատակն է համադրել եւ գիտական հանրութեանը ներկայացնել տարինե-

---

1 ԺԷ. դարի առաջին քառորդից սկսուած վերանորոգչական շարժման մասին աւելի մանրամասն տե՛ս **Հ. Ներսէս Ակինեան,** *Մովսէս Գ. Տաթեւացի Հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը*, Վիեննա, 1936 (Ազգային մատենադարան, ՃԼԹ): **Կարապետ եպս. Ամատունի,** *Մովսէս Գ. Տաթեւացի կաթողիկոս Էջմիածնի*, Վենետիկ-Ս. Ղազար, 1992 (Հայագիտական մատենաշար «Բազմավէպ» 39):

րի աշխատութեամբ ձեռք բերուած պատմական բազմաթիւ տուեալներ ու վկայութիւններ՝ առանց, սակայն, յատուկ ու մասնական նպատակ հետապնդելու, այլ այն թողնելով ընթերցողի հետեւութեան ու եզրակացութեանը: Մեր այս կերպ գործելու գլխաւոր նպատակն է գրի յանձնել ԺԷ. դարի 30-60-ական թուականների պատմութեան «մի դրուագ», որ ծածկուած է Հաւատասփիւռի դիւանում, բացայայտելով աղբիւրներն եւ տեղիները:

Մենք ամենեւին չենք յաւակնում, որ սպառել ենք հետազօտութեան նիւթ հանդիսացած Հաւատասփիւռի Ժողովի դիւանի բոլոր փաստաթղթերը: Նրանք շատ յաճախ կարող են գտնուել այլ երկրամասերի (Լեհաստան, Ռուսենիա, Բալկաններ եւն.) կամ հեռաւոր Արեւելքում բնակուող ժողովուրդներին վերաբերող հատորներում եւ վրիպած լինել մեր ուշադրութիւնից:

* * *

ԺԷ. դարի առաջին քառորդին (1622) Հռոմում հիմնւում է Հաւատքի տարածման կամ Հաւատասփիւռի Ժողովը, որի գլխաւոր նպատակն էր Հռոմի եկեղեցու հաւատքի տարածումն աշխարհում՝ ի խնդիր եկեղեցիների միութեան[2]: Միսիոներների բազմութիւնը տարածւում է յատկապէս Արեւելքում (Օսմանեան կայսրութիւն, Հայաստան, Կովկաս, Սեֆեան Իրան եւն.)՝ ուղղելու եկեղեցիները, սրբագրելու եւ շտկելու նրանց վարդապետական սխալները, հաստատելու նրանց ճշմարտութեան մէջ:

Այս էր դարի մտայնութիւնը, եւ սրա համաձայն էլ գործում էին: Առանց դատաւորի պաշտօն կատարելու՝ փորձենք հետեւել Հաւատասփիւռի ժողովի պատմական դիւանում պահուող եւ մեզ հասած փաստաթղթերին՝ հիւսելու համար պատմութիւնը, ի յայտ բերելու մեր եկեղեցու կեանքի զանազան փուլերը:

Կղեմէս Գալանոսի առաքելութեան սկզբնաւորութիւնը

Ս. Գաէտանոսի կողմից ԺԵ. դարի առաջին քառորդում հիմնուած Թէաթինեան միաբանութիւնը նպատակ ունէր քարոզելու քրիստոնէութիւնն անհաւատ երկրներում: ԺԷ. դարում բաւականին թուով Թէաթինեան միսիոներներ տարածուել էին յատկապէս Հնդկաստանում, ունէին նաեւ մի մասնաճիւղ Հայաստանի հիւսիսում, Վրաստանում[3]:

1636 թ. մարտի 13-ին, արդէն քսանհինգամեայ Կղեմէս Գալանոսը գրաւոր դիմում է իր մեծաւորներին՝ Վրաստան առաքելութեան մեկնելու խնդրանքով[4]: Մեծաւորները Հաւատասփիւռի Ժողովին են փո-

---

2 Հաւատասփիւռ ժողովի հիմնադրման, գործունէութեան աշխարհագրութեան, ուղղութիւնների ու ծրագրերի մասին տե՛ս *Sacra Congregationis De Propaganda Fide. Memoriā Rerum, 350 anni a servizio delle missioni. 1622-1972.* Vol. I, 1622-1700, Herder: Rom-Freiburg-Wien, 1971.

3 Վրաստանում թէաթինեան առաքելավայրի մասին համառօտ տե՛ս **Carlos Alonso**, *I missionari teatini in Georgia nel secolo XVII*,- "Oriente Moderno", Nuova serie, Anno 88 (2008), pp. 15-23. Նոյն ուսումնասիրողի կողմից շարունակաբար հրատարակուեցին նաեւ առաքելավայրի թէաթինեան մեծաւորների ու հոգեւորականների նամակագրական հսկայական ժառանգութիւնը (1625-1644 թթ. վերաբերող մօտ 241 նամակ եւ ընդարձակ գրութիւններ)՝ տե՛ս **P. Carlos Alonso, OSA.** *Documentación inédita las Misiones se los Teatinos en Georgia*,- "Regnum Dei", Collectanea Theatina, n. 122 (1996), pp. 21-117; n. 123 (1997), pp. 119-209; n. 124 (1998), pp. 269-372; n. 125 (1999), pp. 3-90; n. 126 (200), pp. 109-183; n. 127 (2001), pp. 285-355: Այս փաստաթղթերը, ինչպէս նաեւ թէաթինեան առաքելութեան պատմական ժամանակագրութիւնները (տե՛ս **P. Bartolomeo Ferro,** *Istoria delle Missioni de' Chierici Regolari Teatini...*, Tomo I, Roma, 1704) մեծապէս օգնում են օրեցօր վերականգնելու Գալանոսի եւ վիրահայոց յարաբերութիւնները Գորիում եւ Վրաստանի այլ բնակավայրերում:

4 Տե՛ս Archivio della S. Congregazione de Propaganda Fide, Scritture Originali riferite nelle Congregazioni Generali (այսուհետեւ՝ SOCG), vol. 209, f. 401.

խանցում Գալանոսի խնդրագիրը, որը զեկուցւում է 1636 թ. ապրիլի 14-ի նիստում, եւ Գալանոսի միսիոներութիւնը հաստատւում է: Սրան նպաստում է նաեւ այն, որ նոյն ժողովին ներկայացւում է Հ. Պիետրո Ավետաբիլէի (P. Pietro Avetabile)՝ թէաթիններին Վրաստանի առաքելավայրի մեծաւորի նամակը, թէ իբր գործունէութեամբ «քարոզում ենք թուրքերէն, լսում ենք վրացիների, ինչպէս նաեւ հայերի խոստովանանքը, որոնց եպիսկոպոսները միսիոներներին են ուղարկում իրենց հաւատացեալներին՝ ասելով. եթէ քաշւում էք մերոնց խոստովանել, ապա գնացէք ֆրանք քարոզիչներին [խոստովանէք]»[5]:

Վրաստանի ճանապարհով միսիոներները թափանցում են նաեւ Հայաստան[6], եւ այստեղից լուրերը, դիտուած իրենց տեսանկիւնից, հասցնում են Հաւատասփիւռի Ժողովին: 1636 թ. ապրիլի 29-ին Գորիից թէաթին P. Giusto Prato-ն գրում է. «Այստեղից անցաւ դոմինիկեան Fr. Pietro Perivello-ն, որ երկու տարի մնացել էր Հայոց կաթողիկոսի մօտ (իմա՛ Փիլիպպոս կաթողիկոս — Մ. Կ.)՝ շատ հոգիներ առաջնորդելով դէպի կաթողիկէ ճշմարտութեան, եւ նոյն կաթողիկոսը նրան բանտարկելուց եւ ձեռքերն ու ոտքերը շղթայելուց, զգեստները պատռելուց եւ նզովելուց յետոյ՝ վռնդել էր նրան Երեւանից՝ ազդարարելով բոլորին, թէ նա թշնամի է թէ՛ իր եւ թէ՛ հայոց օրէնքներին: Բայց Fr. Pietro-ն չէր դադարում գրաւոր կերպով ցոյց տալ նրանց սխալները»[7]:

Ուսումնասիրողների կողմից բազմիցս նկատուել է իտալացի միսիոներների՝ կողմից հոգեւոր եւ առաքելական նպատակով հայոց եկեղեցի ներթափանցելու ձգտումը: Այսպիսի մթնոլորտում է 1636 թ. Կղեմէս Գալանոսը մտնում Վրաստան, ուր սկսում է սովորել թուրքերէն, վրացերէն եւ հայերէն խօսել[8]: Կղեմէս Գալանոսն այս առաքելավայրում մնում է մինչեւ 1640 թ. հոկտեմբեր ամիսը, երբ Հալէպից թէաթիններեանների գաւառական մեծաւոր Հ. Պիետրո Ավետաբիլէն հրահանգում է Վրաստանի թէաթիններին մեծաւոր Հ. Ջուզեպէ Ջուդիչէին (P. Giuseppe Giudice) Կղեմէս Գալանոսին ուղարկել Կ.Պոլիս՝ հայոց լեզուին առաւելագոյնս տիրապետելու եւ հայերէնով գրքեր շարադրելու համար: Կղեմէս

5 Տե՛ս SOCG, vol. 209, f. 411+412:

6 Վրաստանում, Հայաստանում, ինչպէս նաեւ լեհահայոց մէջ թէաթիններեանների գործունէութեան համառօտ ուրուագիծը տես **Aleksander Iwaszezonek.** *La Presenza Teatina tra gli Armeni,*- Regnum Dei,- "Collectanea Theatina", 142, 2019, pp. 11-30:

7 Տե՛ս SOCG, vol. 106, f. 276:

8 Արտակարգ ընդունակութիւններով օժտուած երիտասարդ Կղեմէս Գալանոսը խօսակցական հայերէնը սկսում է սովորել տեղի ծխական քահանայ Մինասի օգնութեամբ, որի աջակցութեամբ էլ սկսում է հայերէն ձեռագրեր կարդալ (տե՛ս **P. Bartolomeo Ferro,** *Istoria delle Missioni de' Chierici Regolari Teatini...,* Tomo I, Roma, 1704, p. 300-301): Միշտ այս օրերից Գալանոսը լրջօրէն սկսում է նաեւ հայ հոգեւոր գրականութեան ուսումնասիրումը: Դրան յատկապէս նպաստում է նրա տեղափոխութիւնը հայաբնակ Թիֆլիս, ուր ապրելով մեծաքանակ հայ հոգեւորականների միջավայրում, շնորհիւ իր հայախօսութեանն ու հայ հոգեւոր ժառանգութեան իմացութեանը, ինչպէս նաեւ հայոց ծիսակարգին հաւատարմութեանը, վերջիններիի կողմից ստանում է «Վարդապետ» կոչումը (տե՛ս **P. Bartolomeo Ferro,** *Istoria delle Missioni de' Chierici Regolari Teatini...,* Tomo I, Roma, 1704, p. 301):

Տասնամեակներ յետոյ Գալանոսը, նոյն օրերին իր գործունէութեան մասին վկայում է. «Դարձեալ ի գիրս այլ **քարոզգիրք** կոչեցեալ, որ կայր յեկեղեցին հայոց ի յաշխարհին Վրաց **ի քաղաքն Կօրի**, ընթերցեալ եմ հայ գրով զպատմութիւնս զայս ի միոյ քարոզի: Եթէ մինչդեռ ճգնաւոր ոմն քահանայ մատուցանէր զպատարագ վասն հոգւոյն վաղճանեալ ազգակցին իւրեան. երեւեցաւ նմա մեռեալ ազգակիցն շրջապատեալ ի թիւնաւոր օձից, որք խայտէին զանձն նորա եւ ծանոյց զքահանայն, եթէ ընդվայր պատարագէր վասն հոգւոյն, որ դատապարտեալ էր ի յաւիտենական տանջանս դժոխոց: Նա եւ ի յայլ գիրսն հայոց. մանաւանդ ի յայնմ, որ **Հարանց վարք** ասի. բազում այլ պատմութիւնք գտանին զայսպիսեացս» (տե՛ս **Կղեմէս Գալանոս,** *Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն* Հռովմայ, հտ. 2, մաս 2, Հռոմ, 1661, էջ 120):

Գալանոսի վերաբերեալ Պիետրո Ավետաբիլէի սկզբնական ծրագիրը նրան Երեւան ուղարկելն էր, որովհետեւ Հայաշատ քաղաք էր, մօտ էր կաթողիկոսական աթոռին եւ մանաւանդ՝ չկային ուրիշ միսիոներներ: Կղեմէսը սիրով պիտի ցանկանար կատարել նման առաքելութիւնը, եթէ աւելի վաղ նոյն քաղաքից անցած չլինէր դոմինիկեան Հ. Պօղոս Փիրոմալին, որ նախ իբր մտերիմ՝ թափանցեց կաթողիկոսարանից ներս, աշակերտներ ունեցաւ, սակայն աւելի ուշ հաւատքի հարցերի քննարկումները փոխուեցին վէճերի, եւ Փիրոմալին կաթողիկոսի կողմից նզովուեց ու վռնդուեց Հայաստանից:

Երիտասարդ Կղեմէս Գալանոսը 1641 թ. մայիսի 7-ի իր նամակում այս բոլորը պատմելիս յստակ կերպով դրսեւորում է խոհեմութիւն՝ գրելով, թէ Երեւան մտնող միսիոները պէտք է շատ ճկուն լինի՝ «հետամուտ լինելով միայն փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան ուսուցմանը այն երիտասարդներին, որոնք թուով շատ-շատ են, եւ որոնք ուսուցչի համար այս ու այն կողմ են գնում, սովորելու թէ՛ այս ու թէ՛ ուրիշ գիտութիւններ, որոնց մասին ունեն աղօտ պատկերացում, եւ այդ էլ՝ հազար տգիտութեամբ լցուած, որից էլ առաջանում են նրանց սխալները»: Կղեմէսի երկրորդ դժուարութիւնը Վրաստանից Երեւան անցնելու՝ քաղաքական կամ տնտեսական շարժառիթն էր: Վրաստանի իշխանը, Դադիանի երկրամասի շահերից ելնելով, գլխաւորապէս մետաքսի վաճառականութեան պատճառով, թոյլ էր տուել, որ Կղեմէսն ուղղուի Կ. Պոլիս, եւ ոչ այլուր:[9]

Վրաստանի թէաթինեան մեծաւորը՝ Հ. Ջուզեպէ Ջուդիչէն, 1640 թ. հոկտեմբերի 10-ին տեղեկացնում է Հաւատասփիւռի ժողովին, թէ Հ. Կղեմէսը ճանապարհ է ընկել դէպի Կ. Պոլիս մետաքսի մի վաճառականի հետ դաշինք կնքելու նպատակով՝ Վրաստանի իշխանի շահի համար: Միաժամանակ խնդրում է, «որ դիւրութիւն ընծայուի իրեն՝ լաւագոյն կերպով սորվելու հայերէն լեզուն, որի հանդէպ ցոյց է տալիս մասնաւոր հակում. արդէն առաջին դրսեւորումները այստեղ երեւաց, յատկապէս՝ գրական լեզուին մէջ»[10]:

Գալանոսը Պոլիս է հասնում 1641 թ. ապրիլի 12-ին եւ ջանքեր է գործադրում գտնելու հայոց լեզուի լաւ ուսուցիչ, որպէսզի ամբողջապէս տիրապետի լեզուի հմտութիւններին: Երբ տեսնում է, որ նման անձ գտնելն անհնար է, մտածում է Փիրոմալիի նման անցնել Երեւան՝ մի որոշ ժամանակ այնտեղ բնակուելով լեզուն սովորելու: Բայց միսիոները չէր կարող առանց Հռոմի Հաւատասփիւռի ժողովի բացայայտ հրահանգի ինքնագլուխ տեղաշարժուել մի քաղաքից միւսը, քանզի հրահանգի հետ էին կապուած նաեւ տարեկան վճարումները եւ ծգուտները:

Պոլսում, բացի հայերէնի ուսուցիչ գտնելու դժուարութիւնից, Գալանոսն ապ-

9 Կղեմէս Գալանոսի վերաբերեալ հիմնաւորումները պատասխան էին Թէաթինեանների դէպի Երեւան տարածուելու վերաբերեալ տիրող մտայնութիւններին, որոնք հանգեցրին Հաւատասփիւռի ժողովի որոշմանը (Acta-ի հրատարակութիւնը տե՛ս **P. Carlos Alonso, OSA.** *Documentación inédita las Misiones se los Teatinos en Georgia*,- "Regnum Dei", Collectanea Theatina, n. 127 (2001), pp. 290-291), որ այդպէս էլ կեանքի չկոչուեց:

10 Տե՛ս SOCG, vol. 120, f. 251: Նոյն այդ նամակով Հ. Ջուզեպէ Ջուդիչէն հրաման է խնդրում Կղեմէս Գալանոսի համար «պատարագելու հայերէնով, որ գործածում են Ալինճայի (իմա՛ Երնջակի – Մ. Կ.) դոմինիկեան հայերը, որովհետեւ, անտարակոյս, այս կերպով աւելի պիտի բացուի ճանապարհը դէպի հայ հերետիկոսները»: Հաւատասփիւռի ժողովը 1641 թ. սեպտեմբերի 9-ի նիստում քննում է այս կէտը, եւ այն, հաւատքի վերաբերեալ հարց համարելով, փոխանցում Հաւատաքննութեան ժողովին (տե՛ս Acta, vol. 14, f. 437, n. 33):

րելու տեղի դժուարութիւն ունէր: Իր միաբանութեան՝ Պոլսում ունեցած տունը փակուած էր, ուստի վարձով տեղաւորւում է Ֆրանկիսկեանների վանքում, ուր եւս պէտք եղած հիւրասիրութիւնը չգտնելով՝ մի պահ փորձում է վերադառնալ Իտալիա: Սակայն յոյսը, որ պիտի կարողանայ հայերէն սովորել եւ ծառայել հայերին, օգնում է նրան դիմանալ ամեն նեղութեան[11]:

Կ. Պոլիսը Կղեմէս Գալանոսի ժամանման նախօրէին

Պօղոս Փիրոմալին, Երեւանից հալածուելով, Կ.Պոլիս է հասնում 1637 թ. յունուարի 25-ին: Նա շահել էր երիտասարդ հայ աբեղաների համակրանքը: Ուսման ծարաւով տարուած՝ նրանք զանազան ճանապարհներով հասնում են իրենց ուսուցչի մօտ՝ Արեւմուտք անցնելու եւ իրենց ուսումը կատարելագործելու նպատակով[12]: Փիրոմալին հետամուտ էր հիմնելու հայկական վարժարան, ուր կը կարողանար հաւաքել հայ աշակերտներին: Իր այս ծրագրի իրագործման համար նա սպասում էր Հռոմի հրահանգներին:

Դատելով Փիրոմալիի ինքնակենսագրութիւնից՝ նա Կ. Պոլսում մնացել է տասնութ ամիս՝ 1637 թ. յունուարից մինչեւ 1638 թ. ապրիլ, ինչը համընկնում է Զաքարիա Վանեցու պատրիարքութեան շրջանին (1636-1639): Թէ՛ Զաքարիա պատրիարքի եւ թէ՛ նրա նախորդի՝ Յովհաննէս Խուլ պատրիարքի յարումը Հռոմի Աթոռին կանխում է Փիրոմալին: Նիւթից չշեղուելու համար չենք քննի սրա արմատները[13]:

Այսպիսով, Փիրոմալին, Կ. Պոլիս մտնելով, գտնում է իր համար նպաստաւոր մի շրջանակ՝ յանձինս Զաքարիա պատրիարքի:

Պօղոս Փիրոմալին 1637 թ. փետրուարի 12-ին՝ Պոլիս հասնելուց հազիւ 20 օր յետոյ, գրում է Հռոմ. «Մի մեծ դուռ է բացուել ինձ համար Կ. Պոլսում. հայերը հրաւիրում են ինձ իրենց եկեղեցի, ու ինձ էլ են յիշատակում իրենց պատրիարքի [անուան] հետ, իսկ իրենց գլխաւորներից մեկը գալիս է մօտս՝ լատիներէն սովորելու»[14]: 1637 թ. ապրիլի 3-ին Փիրոմալին գրում է Հաւատասփիւռի կարդինալներին. «Բազում անգամ հրաւիրուեցի Ղալաթիայի հայոց եկեղեցին եւ գնացի: Ինձ պատուով ընդունեցին, 5 անգամ քարոզեցի, ու սկսեցին համակրանք ցոյց տալ ինձ: Սակայն սատանան էլ սկսեց գործել: Տեսնելով, որ բոլորը Ֆրանք պիտի դառնան՝ հայերից ոմանք գնացին պատրիարքի մօտ՝ ասելով. «Եթէ ուզում ես մնալ մեր առաջնորդը, այս մարդուն վանք ուղարկիր: Պատրիարքն ինձ իմ վանքս ուղարկեց՝ մինչեւ որ լսի նաեւ իմ կողմնակիցներիս»[15]: Յովհաննէս Մոլինոյի միջամտութեամբ պատրիարքից հրաման է ստացւում,

11 Հմմտ. Կղեմէս Գալանոսի 1641 թ. մայիսի 7-ի նամակը՝ գրուած Պոլսից (տե՛ս SOCG, vol. 166, f. 215):

12 Մանրամասները տե՛ս **Կ. Ամատունի**, *Ոսկան վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը*, Վենետիկ-Ս. Ղազար, 1975, էջ 73-80:

13 Որոշ դիտարկումներ տե՛ս մեր յօդուածներից մեկում՝ **Մ. Մ. Կարապետեան**, *Հռոմի հայ գաղթօջախի պատմութիւնից*,- ՊԲՀ, 1998, թիւ 1-2, էջ 173-174:

14 Տե՛ս SOCG, vol. 293, f. 10: Նոյն օրերին Պոլսում էր գտնուում Յովհաննէս Մոլինոն, որ 1637 թ. մարտի 9-ին գրում է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին՝ նախ տեղեկացնելով Զաքարիա պատրիարքի ունեցած բարի տրամադրութիւնների մասին, թէ իրեն ուզում է Հռոմ ուղարկել, որպէսզի անձամբ պապին տանի իր հնազանդութեան նամակը, ապա աւելացնում է. «Այստեղ հանդիպեցի Պօղոս Կալաբրիացուն (իմա՛ Պօղոս Փիրոմալի – Մ. Կ.), որ Զաքարիա պատրիարքից լաւ ընդունելութեան արժանացաւ՝ տալով հրաման, որ քարոզի Բերայի հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում: Իրեն յաճախող Հայոց կողմից շատ սիրուած է. երանի թէ մի որոշ ժամանակ մնար Պոլսում, որովհետեւ սկսել է աշակերտներ ունենալ: Հայերը հիացած են՝ տեսնելով մի իտալացու, որ երկու տարուայ մէջ այսքան կատարեալ կերպով սովորել է հայերէն» (տե՛ս SOCG, vol. 156, f. 279):

15 Տե՛ս SOCG, vol. 156, f. 206:

որ Փիրոմալին յաճախի Հայոց եկեղեցիները, բայց՝ առանց քարոզելու իրաւունքի[16]:

Մինչ այս Յովհաննէս Մոլինոն ճանապարհւում է Հռոմ Զաքարիա պատրիարքի 1637 թ. ապրիլ 22-ի յանձնարարական գրով[17]: Փիրոմալու աշակերտները, որոնց թիւը նրա վկայութեան համաձայն շուրջ տասն էր, սկսում են Պոլիս հասնել: 1637 թ. ապրիլի 29-ին Փիրոմալին գրում է Հաւատասփիւռի Ժողովին. «Եթէ ես քարոզել կարողանայի, երկու քարոզից յետոյ ամբողջ ժողովուրդը հետս պիտի լինէր, որովհետեւ առհասարակ ժողովուրդն ասում է, թէ դժբախտութիւնն իրենց եկեղեցականներն են: ես քարոզում եմ իրենց գրքերից յղումներ կատարելով»[18]:

1637 թ. մայիսի 2-ին Փիրոմալու աշակերտներից Կիրակոս Արեւելցին՝ Կ. Պոլսի ապագայ պատրիարքը, Հռոմ է ուղարկում իր դաւանական հնազանդութեան գրութիւնը: Կ. Պոլսի Ֆրանսիացի դեսպանը 1637 թ. յունիսի 13-ին Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին տեղեկացնում է, թէ Փիրոմալիին «բիրտ կերպով» արգելուել է եկեղեցիներում քարոզելը, «սակայն նրա աշակերտը, որի անունն է տէր Կիրակոս, օգտակար կերպով նուիրուել է նոյն գաղափարին»[19]: Հռոմից Կիրակոս վարդապետին հրահանգւում է մնալ Պոլսում ու չհեռանալ քաղաքից մինչեւ կարգադրուի Հայոց վարժարան բացելու հարցը[20]:

Չնայած Փիրոմալին այլեւս չէր քարոզում, սակայն Կ. Պոլսում Ֆրանսիացի դեսպան Cesi-ն[21] 1637 թ. օգոստոսի 1-ի գրութեամբ հաղորդում է. «Շատ հայեր եմ տեսնում, որոնք գալիս են նրա մօտ դաս առնելու համար»[22]: Փիլիպոս կաթողիկոսը, վախենալով, որ Փիրոմալիի գործունէութիւնը աւելի կարող է ծաւալուել, 1637 թ. սեպտեմբերի 3-ին գրում է Զաքարիա պատրիարքին՝ հրահանգելով Պոլսի սահմաններից վռնդել «սատանայի ծառային», որպէսզի չշփուի մեր ազգի հետ՝ նրա հետ հեռացնելով նաեւ այն եկեղեցականներին, որոնք յարել էին նրան[23]:

Փիրոմալին եւ նրա աշակերտները Հռոմից հրահանգի էին սպասում՝ ըստ այդմ գործելու համար: 1637 թ. հոկտեմբերի առաջին օրերին Կիրակոս վարդապետը երեք այլ ընկերների հետ մեկնում է Լեհաստան: Մինչ Փիրոմալին սպասում էր Ոսկան վարդապետին եւ տէր Յովհաննէսին, այն է՝ Կիրակոս վարդապետի հօրը: Ոսկան վարդապետը Պոլսում ամբողջ մի գիշեր վիճաբանում է քահանաների հետ, որոնք, հասկանալով, որ Ոսկան վարդապետի ուսուցիչը Փիրոմալին է, մտածում են նրան էլ քաղաքից հեռացնել. «Ապա թէ ոչ, Մեծ Հայքի բոլոր վարդապետները ի մի պիտի գան եւ Հայ

16 Տե՛ս Փիրոմալիի 1637 թ. ապրիլի 4-ի նամակը Պոլսից Հաւատասփիւռի ժողովի քարտուղար Ինկոլիին (տե՛ս SOCG, vol. 156, f. 205): Նոյն թուականի ապրիլի 24-ին P. Gulielmo-ն գրում է Հաւատասփիւռի ժողովին. «Փիրոմալին այստեղ սիրուած է հայ պատրիարքի կողմից, որ թոյլատրում է նրան քարոզել իր եկեղեցիներում. նա շատ լաւ հայերէն գիտի» (տե՛ս SOCG, vol. 156, f. 118):

17 Տե՛ս SOCG, vol. 180, f. 284: Պոլսի լատին առաքելական նուիրակը, 1637 յունիսով թուագրուած մի նամակով տեղեկացնում է Հաւատասփիւռի ժողովին, թէ «Հայոց [Զաքարիա] պատրիարքը ինքն իր կողմից շարադրեց Պապին (Ուրբանոս Ը.) ուղղուած նամակը եւ յանձնեց Մոլինոյին, որ այստեղից Պայլի (իմա՛ Վենետիկի դեսպանի – Մ. Կ.) հետ պիտի մեկնի երկուշաբթի: Նամակն իր բովանդակութեամբ գրեթէ նոյնական է այն նամակի հետ, որ Զաքարիա պատրիարքը նախկինում գրել էր բարեյիշատակ քահանայապետ Պօղոս Ե.-ին» (տե՛ս SOCG, vol. 156, f. 121):

18 Տե՛ս SOCG, vol. 156, f. 15:

19 Տե՛ս SOCG, vol. 156, f. 15:

20 Տե՛ս Lettere volgari, vol. 17, f. 74:

21 Իմա՛ Philippe de Harlay, comte de Cézy:

22 Տե՛ս SOCG, vol. 156, f. 11.

23 Տե՛ս SOCG, vol. 159, f. 170: Այս ընդարձակ նամակը Փիրոմալին թարգմանել է իտալերէն եւ ուղարկել Հռոմ: Հայերէն բնագիրը չենք գտել:

եկեղեցին ... պիտի վարակուի»[24]*: Փիրոմալիի համբաւը տարածուելուն պէս, նրանից դասեր առնելու ցանկութիւն է յայտնում նաեւ Երզնկայի եպիսկոպոսը*[25]*: 1638 թ. ապրիլին Պոլիս է հասնում Փիլիպպոս կաթողիկոսի վերոյիշեալ 1632 թ. սեպտեմբերի 3-ի նամակը: Փիրոմալին նոյն ամռանը շտապում է թողնել Կ. Պոլիսը եւ աշակերտներով ուղեւորւում է Լեհաստան:*

Այս համառօտ թուարկումները կարեւոր համարեցինք անել՝ տեսնելու համար, թէ ինչ շարժում էր ծաւալել Փիրոմալին Պոլսում եկեղեցականների շրջանում Գալանոսի Պոլիս հասնելու նախօրէին:

Գալանոսը եւ Պոլսի Կիրակոս Պատրիարքը

Փիրոմալիի՝ Պոլիս գտնուած շրջանում Հայոց պատրիարքն էր Զաքարիա Վանեցին, որ բազմիցս ընդառաջեց նրան: Զաքարիային յաջորդում է Դաւիթ Արեւելցին, որ Զաքարիայի հակառակ հոսանքին էր պատկանում: Նա գահակալում է 1639-1641 թթ.: Երբ Կղեմէս Գալանոսը Պոլիս է հասնում, Դաւիթն արդեն զիջել էր աթոռը եւ նրան յաջորդել էր Փիրոմալիի աշակերտներից Կիրակոս Արեւելցին, որն անցեալում նամակագրական հաղորդակցութեան մէջ էր գտնւում Հռոմի աթոռի հետ[26]*:*

Կիրակոս Պատրիարքը սիրով է ընդունում Գալանոսին՝ ցանկանալով ի նպաստ հայ եկեղեցու օգտուել նրա գիտութիւնից: Կղեմէսը հաւանաբար ծրագրում էր անցնել Մեծ Հայք՝ կատարելագործելու իր հայերէնը, շարադրելու համար գրքեր, նախապատրաստելու համար եկեղեցիների միութիւնը:

Կիրակոս պատրիարքը Ուրբանոս Ը. Պապին ուղղուած նամակում յայտնում է իր գոհունակութիւնը՝ Կղեմէս Գալանոսի մասին գրելով[27]*. «Իմաստութեան արք ոչ գոն ի միջի մերում, եւ ցանկամք թարգմանել զփիլիսո[փայութիւն եւ զաստուածաբանութիւնն ի լատինէ արամբք մերովք]: Կան բազումք ոմանք բնակեալք աստ պատրիք [բայց ոչ ճանաչեն զգիր եւ զլեզու մեր]. այլ է ոմն աստ ի Թէատին կարգէ Պատրէ Կլէմէնթ անուն յոյժ հմուտ, [որ գիտէ եւ մեկնէ զգիրս մեր], վասն զի սակաւ ինչ զոր ինչ խնդրեցաք [առատապէս մեկնեաց մեզ]: Այլ կամի գնալ ի վերին աշխարհն Հայաստանեայց, եւ գիտեմք [քաջ՝ զի ոչ այլ ինչ փափաքէ քան զմահ կամ զփախուստ], նա այժմ մեծ մասն Հայոց է ի Կոստանդնուպօլիս՝ քան անդր, վասնորոյ երես անկեալ աղաչեմ՝ հաստատել զսա աստ՝ վասն մերոյ օգտի»*[28]*:*

---

24 Տե՛ս SOCG, vol. 159, f. 178. Փիրոմալին գրում է 1638 թ. յունուարի 8-ին:

25 Տե՛ս SOCG, vol. 159, f. 186.

26 1641 թ. սեպտեմբերի 10-ին հայազգի դոմինիկեան Յովհաննէս Դոմինիկոս Նազարին (Giovanni Dom. Nazario) Պոլսից անցնելիս գրում է Հաւատաստիւնի քարտուղարին, թէ տեղի Պատրիարքը (իմա՛ Կիրակոսը) ծածուկ կերպով դարձել է կաթողիկէ, սակայն, Երեւանի մեծ Կաթողիկոսից եւ Երուսաղէմի պատրիարքից մերժուել է, որովհետեւ ընդունել է Քաղկեդոնի ժողովը (տե՛ս SOCG, vol. 166, f. 246-7):

27 Նամակի հայերէն բնագիրը չափազանց վնասուած է՝ մաշուածութեան պատճառով (հմմտ. SOCG, vol. 180, f. 384): Կայ նոյն օրերին կատարուած լատիներէն թարգմանութիւնը: Մէջբերումը կատարում ենք հայերէն բնագրից՝ փակագծի մէջ առնելով վնասուած մասերը, որոնք փորձել ենք վերականգնել՝ օգտուելով ժամանակի լատիներէն թարգմանութիւնից (տե՛ս SOCG, vol. 180, f. 377-378):

28 Նամակը թուագրուած է «ՌՂԱ, ի քաղաքս Ուսկուդար, նոյեմբերի ամսոյ Ե [5]»: Անհաւանական չէ, որ թուականը լինի ՌՂ (1641) եւ ոչ ՌՂԱ (1642), որովհետեւ այս նամակի պատասխանը՝ գրուած Հաւատաստիւնի ժողովի նախագահի կողմից, կրում է 31 մայիս 1642 թուականը (տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 43): Յայտնւում է, թէ տրուած է պահանջուած հրահանգը, որ Կղեմէս Գալանոսը համագործակցութեան նպատակով մնայ Պոլսում: Բացի սրանից, Կղեմէս Գալանոսը 1642 թ. յուլիսի 18-ին գրում է Հաւատաստիւնի ժողովին, թէ յունիսի կէսին, որ է՝ 1642 թ. յունիսին, «Կիրակոս պատրիարքը մեռաւ. այն, որ պապին

Այս կապակցութեամբ դեկտեմբերի 11-ին Պոլսից ֆրանսիական դեսպանատան քարտուղարը տեղեկացնում էր Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին, թէ «օրեր առաջ չորս հայեր եկան խնդրելու (ֆրանսիացի – Մ. Կ.) դեսպանից, որ թոյլ չտայ Գալանոսին Երեւան մեկնել, որովհետեւ այնտեղ չպիտի կարողանայ բերել այն օգուտը, որ այստեղ է բերում: Դեսպանը խոստացաւ ընդառաջել նրանց ցանկութեանը»[29]:

Գալանոսի ամբողջ հոգսը, ինչպէս ամեն միսիոնների, դարձի բերել եւ հաւատոյ դաւանութիւն անել տալն էր որեւէ անձի, առաւել եւս՝ նրա ղեկավարներին կամ եկեղեցական դասի պատկանողներին: Նոյն դարում լատին եկեղեցու մտայնութիւնը չէր կարող յարգել Արեւելեան եկեղեցին, նրա աւանդութիւնը եւ ծէսը, նրա նուիրապետական կազմը. էականն այն էր, որ նրա անդամներն ընդունէին հաւատքի ճշմարտութիւնները Հռոմի առաջարկած բանաձեւով, քանի արեւելեան եկեղեցիները բոլորը անխօս ունէին հերետիկոսութիւններ եւ շեղումներ: Երեսնամեայ Կղեմէս Գալանոսը Պոլիս հասնելուց եօթ ամիս յետոյ, այն է՝ 1641 թ. դեկտեմբերի 9-ին, գրում է Հաւատասփիւռի Ժողովի նախագահ, կարդինալ Բարբերինիին, թէ այնքան է լուսաւորել Կիրակոս պատրիարքին, որ վերջինս տրամադրուած է հաւատի դաւանութիւն անելու եւ Հռոմ ուղարկելու, նամակի հետ՝ ուղղուած Ուրբանոս պապին. ոչ միայնակ, այլ Կիրակոսին միացած Միջագետքի Յովհաննէս եդեսացի արքեպիսկոպոսի հետ մտածում են բաժանուել Էջմիածնի Աթոռից, քանի նա թէ՛ հերձուածող է եւ թէ՞ պարսիկներին ենթակայ[30]:

Ֆրանսիացի հիւպատոսը եւ Գալանոսը 1641 թ. դեկտեմբեր ամսի սկզբին այցելում են Կիրակոս պատրիարքին, եւ հիւպատոսը դեկտեմբերի 11-ով թուակիր նամակով հաղորդում է Հաւատասփիւռի Ժողովին, թէ պատրիարքը ծայրաստիճան տրամադրուած էր յօգուտ Հռոմի եկեղեցու եւ մօտ ժամանակներս պիտի գրի Ուրբանոս Ը. պապին[31], իսկ Գալանոսը դեկտեմբերի 9-ին Հաւատասփիւռի Ժողովից խնդրում է հայերէնով պատարագելու հրաման՝ սրբագրելու համար հայ եկեղեցու պատարագի սխալները, մանաւանդ որ իր ցուցմունքներով Կիրակոսը կատարել էր սրբագրութիւններ՝ հոգիների վերաշինութեան համար[32]: Յաջորդ տարին, այն է՝ 1642 թ. յունուարի 15-ին Գալանոսը Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին տեղեկացնում է. «Այս նամակաբերով ֆրանսիացի դեսպանը պապին է ուղարկում Կիրակոս պատրիարքի նամակը եւ հաւատոյ դաւանութիւնը: Դեսպանը ինձ կարդալ տուեց նամակը, իտալերէն թարգմանութիւն ունենալու համար: Գրուած է այնպիսի շեշտով, որ քարերն անգամ լացում են, իսկ հաւատոյ դաւանութիւնը գրուած է այնպիսի ոճով, որ անգամ ես աւելի լաւը չէի կարող գրել»[33]:

Կիրակոս պատրիարքի՝ 1641 թ. նոյեմբերի 5-ով թուակիր նամակը՝ ուղղուած Ուրբանոս Ը. պապին, եւ հաւատոյ դաւանութիւնը ֆրանսիացի դեսպանն ուղարկում է Հռոմ, եւ 1642 թ. յունուարի 18-ին մի ընդարձակ տեղեկագիր է ուղարկում Հաւատասփիւռի Ժողովին, որ պատմական կարեւորութիւն ունենալու պատճառով մէջբերում ենք ամբողջութեամբ.

նամակ եւ հաւատի դաւանութիւն էր ուղարկել» (տե՛ս SOCG, vol. 162, f. 149):

29 Տե՛ս SOCG, vol. 167, f. 335-336:

30 Տե՛ս SOCG, vol. 167, f. 167+172: Միջագետքի Յովհաննէս Վրդ. Եդեսացու, վերջինիս յարաբերութիւնների մասին Գալանոսի եւ Հռոմի պոռոի հետ տե՛ս նաեւ **Կարապետ եպս. Ամատունի**, *ԺԷ. դարու երեւելի վարդապետներ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1989 (Հայագիտական մատենադարան «Բազմավէպ» 28), էջ 57-62:

31 Տե՛ս SOCG, vol. 167, f. 335-336:

32 Տե՛ս SOCG, vol. 167, f. 167+172:

33 Տե՛ս SOCG, vol. 167, f. 144:

ary of Armenia

«Մեծարգոյ Կիրակոս հայը Երեւանի քաղաքացի է, քահանայ եւ վարդապետ, այսինքն՝ քարոզիչ (սա այդ ազգի մէջ եկեղեցական բարձրագոյն պատիւն է), հայոց մէջ եղած փայլուն անձերից է, քանի որ գիտի աստուածային գիտութիւնը: Նոյն քաղաքի մէջ Աստուծոյ ներշնչումով ճանաչեց հայոց խաբէական սխալները եւ Հռոմէական կրօնի ճշմարտութիւնը, եւ նոյնը սկսեց ցոյց տալ ուրիշներին, պատճառաբանելով՝ սկսեց համոզել շատերին, որի հետեւանքով Երեւանի կաթողիկոսը եւ նոյն քաղաքից շատ վարդապետներ իր դէմ ելան, եւ միասնաբար բանադրեցին իրեն իբրեւ հերետիկոս եւ Հռովմէական: Երբ ջանացին իրեն նաեւ սպանել, ապահովութեան համար ստիպուեց փախչել Երեւանից՝ որ ենթակայ էր Պարսիկներին. փոխադրուեց Պոլիս, որ ենթակայ էր Թուրքին:

Պոլիս հասնելով, սկսեց քարոզել եկեղեցիներում եւ յայտնել իր ուղիղ վարդապետութիւնը, եւ որովհետեւ ունէր տաղանդ եւ գիտելիք, խոնարհութիւն եւ հեզութիւն, գրաւեց ժողովրդի համակրանքը, յատկապէս՝ իշխանների: Այս բանը չկարողացաւ հանդուրժել Դաւիթ պատրիարքը, որ մի տգէտ եպիսկոպոս էր, ինչպէս նաեւ կղերական այն դասը, որ յարում էր Երեւանի կաթողիկոսին: Սրանք էլ 1640 թ. հոկտեմբեր ամսին, մի մասնաւոր ժողով անելով, բանադրեցին իրեն, ուզելով սպանել: Կիրակոսը ստիպուած փախաւ մի Թուրքի տուն, ուր շաբաթներով թաքնուած մնաց:

Այս շրջանում հայոց մեծ մասը իրեն ի նպաստ յայտնուեցին, յատկապէս կարող անձինք, որոնք հիացած լինելով Կիրակոսի քարոզներից եւ վարմունքից ու տեսնելով իրենց պատրիարքի տգիտութիւնն ու հպարտութիւնը 30.000 դահեկան (piastre) Թուրքերին տալով, գահընկէց արին Դաւթին եւ տեղը դրին Կիրակոսին՝ ամբաստանելով Դաւթին, որ ցանկանում է հայերին ենթարկել Երեւանի կաթողիկոսին, որ պարսիկների ենթակայութեան տակ է: Ու, Աստծոյ կամքով, 1641 թ., Ս. Կոյսի մաքրագործման տօնին (իմա՛ փետրուար 2 – Մ. Կ.), Թուրքը տուաւ Կիրակոսի պատրիարքութեան որոշումը, եւ նա նոյն օրն իսկ գրաւեց Աթոռը, իսկ երեք-չորս օր յետոյ ստացաւ արքունի հրամանագիրը:

Դաւիթն ամէն միջոցի դիմեց վերահաստատուելու համար: Թուրքից հրահանգ տրուեց, որ Դաւիթը հեռանայ Թուրքական սահմաններից. նա իսկոյն գործադրեց վճիռը, քանի որ կեանքի վտանգ կար:

Կիրակոսն իշխանութեան անցնելով, Կ. Պոլիսից վռնդել տուեց այն բոլոր եկեղեցականներին, որոնք հակառակ էին իրեն: Այս գործում իրեն յատկապէս օգնեց Դիարբէքիրի Յովհաննէս արքեպիսկոպոսը, որ Դաւթի մեծ հակառակորդներից էր:

Այս երկուսը դրամի զօրութեամբ ջանում էին Պոլսի պատրիարքի իշխանութիւնը տարածել Օսմանական պետութեան տարածքի վրայ՝ արգելելով, որ Երեւանի պատրիարքը (իմա՛ կաթողիկոսը – Մ. Կ.) որեւէ կերպով այստեղ միջամտի:

Կիրակոսի բարի ծրագրերի մասին տեղեկացնում է պապին ուղղուած նամակում՝ դրանց իրագործման համար խնդրելով, որ պապը Պոլսում հաստատի Հ. Կղեմէս Գալանոսին՝ մեծ ուղղամտութեամբ օժտուած մի կրօնաւորի, որը քաջածանօթ է հայոց լեզուին, հայերի որդիներին Ս. Հաւատքը սովորեցնելու համար:

Կիրակոս պատրիարքը միաժամանակ խնդրում է, որ իր այս արարքը պահուի գերագոյն գաղտնապահութեամբ»[34]:

Այս բոլորը արդիւնքն էր Պողոս Փիրոմալի դոմինիկեան քարոզչի՝ Հայաստանում կատարած առաքելութեան, որի հետեւանքով նա հալածուել էր Փիլիպոս կաթողիկոսից, ինչպէս ակնարկուեց վերեւում:

34 Տե՛ս SOCG, vol. 167, f. 169-170:

Պոլսում էլ նոյն երկճիւղ հոսանքն էր արմատաւորուել, եւ այժմ Փիրոմալիի առաքելութիւնը շարունակում էր Գալանոսը՝ առանց համարձակուելու Երեւան անցնել: Ահա թէ ինչ է գրում Գալանոսը 1642 թ. մարտի 8-ին Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին. «Ներկայումս գտնուում եմ հայոց պատրիարքարանում, ուր հրաւիրուեցի պատրիարքական փոխանորդ Դիարբեքիրի հայ արքեպիսկոպոսի (Յովհաննէս) կողմից, որի հովանաւորութիւնը ունեմ: Պատրիարքն այժմ Պոլսից դուրս է, թեմական այցելութեան: Քառասնորդաց պահքի շրջանում սկսեցի պահել հայոց ծոմերը՝ չուտելով ո՛չ "ձուկ եւ ո՛չ ձէթ, եւ ինչ որ ամենից դժուարինն է ինձ համար՝ գինի, որովհետեւ ստամոքսս թղթից է շինուած: Ղալաթիայից Պոլիս՝ պատրիարքի բնակավայրը տեղափոխուելս կատարեցի Ֆրանսիացի եւ վենետիկցի դեսպանների հաւանութեամբ, որոնք թէեւ տեսան, որ այս բանը վտանգաւոր է կեանքի համար, բայց հաւանեցին՝ տեսնելով օգտակարութիւնը (կաթողիկէ) հաւատքի համար: (Կիրակոս) պատրիարքի եւ Յովհաննէս արքեպիսկոպոսի թշնամի մի շարք հայ եկեղեցականներ ատում են իմ այստեղ տեղափոխուելս՝ հերետիկոս անուանելով Յովհաննէս արքեպիսկոպոսին, որ ինձ այս կերպ հիւրասիրեց, տալով ձրի կերակուր, ինձ սեղանակից անելով իրեն, տալով առաջին տեղը: Յուսանք հանդարտութիւն եւ գործը լաւ ընթանայ:

Մի քանի օրից ի վեր այս արքեպիսկոպոսը եւ ուրիշ եկեղեցականներ սկսեցին պատարագին մէջ չյիշատակել Փիլիպոս կաթողիկոսի անունը: Երեք-չորս պատարագ այս կերպով մատուցուելուց յետոյ, երբ լուրը տարածուեց, հակառակ խումբը երբ լուրը տարածուեց, հակառակ խումբը աղմկել սկսեց, եւ ապա կրկին սկսեցին յիշատակել Փիլիպոսի անունը»[35]:

Ապա շարունակում է նամակը՝ հրաման խնդրելով ամեն կերպով հետեւել հայ եկեղեցու աղօթքներին, ծէսերին, պատարագին, ժամերգութեանը եւ ծոմերին, յիշատակում է յատկապէս հայկական ծէսով պատարագել կարողանալը, որովհետեւ «այստեղ իրենց մէջ չեմ կարող լատիներէն պատարագել. խնդրում եմ շտապել տալու հրամանը, որպէսզի իրենց մէջ հաստատուելով՝ աւելի օգտակար լինեմ հաւատքի տեսանկիւնից...: Աւելորդ է մնալ այստեղս ձեռքերը բաց, երբ հունձքը պատրաստ է, եւ մանգաղը ձեռքին՝ երբ հրաման չէք տար գործելու: Պոլսում մինչեւ այժմ չի լսուած, որ հայերը իրենք կանչեն ֆրանկ միսիոներներ, որ իրենց սովորեցնի, ինչպէս է ներկայումս, որովհետեւ թէ՛ գլուխը եւ թէ՛ նրա աթոռակալը կաթողիկէ են»[36]:

Հռոմից Գալանոսը դիտողութիւն էր ստացել չկրել հայոց տարազն ու չհագնել հայ վարդապետների հագուստը, այլ մնալ թէաթին միաբանութեան իր սքեմով: Գալանոսը սրան պատասխանում է 1642 թ. հոկտեմբերի 31 եւ նոյեմբերի 28 թուակիր նամակներով՝ տալով անհրաժեշտ լուսաբանութիւններ. «Գործնականում արգելում էք, որ քարոզութիւնս շարունակեմ... զգեստի նկատմամբ՝ անկարելի է [չյարմարուել], որովհետեւ [հայերը] ինձ չեն ընդունի՝ եթէ իրենցից չլինեմ. ու ես փոխեցի զգեստս՝ հարցնելով վեղարաւորներին ու դոմինիկեան կրօնաւորներին, ֆրանսական եւ վենետիկեան դեսպաններին: Այստեղ, ուր ամբողջ շրջանակը հայկական է, եթէ ես մնայի իմ լատինական տարազով՝ ինձ կարող էին մատնել իբր լրտես, մանաւանդ որ իսպանական հպատակութիւն ունեմ, եւ կամ ինձ պիտի նկատէին իբր պապից ուղարկուած անձ՝ հայերը դարձի բերելու, մի բան, որ մահապատժի արժանի է: Երբ հարկը լինի, զգեստի փոփոխութիւնը այստեղ միշտ գործածական է, յատկապէս՝ Հալէպի մէջ: Հալէպից դէպի Վրաստան ճանապարհորդութեան ընթացքում մենք միշտ հայոց

35 Նոյն տեղում:

36 Տե՛ս SOCG, vol. 167, f. 146:

նման էինք հագնում, մի բան, որ այստեղ՝ Պոլսում, ամենեւին գայթակղութիւն չի առաջացնում, որովհետեւ բոլորը համարում են, որ աշակերտներովս գնում եմ Ղալաթիա՝ յիսուսեաններին կամ վեղարաւորների եկեղեցին պատարագելու համար: Հայ հոգեւորականների մէջ ապրելով՝ չեմ կարող ոչ հայկական զգեստ կրել»[37]:

Գալանոսը չէր դադարում Հռոմից խնդրել հայերէն պատարագելու հրաման, մանաւանդ որ լսել էր, թէ նոյնպիսի հրաման Փիրոմալուն էլ էր տրուել: Այս հարցը էական էր Գալանոսի համար՝ ուսումնական ու կրթական մարզերում առաւել արդիւնաւէտ գործելու նպատակով: Հաւատասփիւռի ժողովը 1642 թ. յուլիսի 11-ի նիստով քննում է այս հարցը, հակառակ նրան, որ մարտի 12-ին քննել էր եւ հայկական ծէսով պատարագելու հարցը փոխանցել Հաւատաքննութեան ժողովին[38]: Յուլիսի 11-ի ժողովի արձանագրութեան մէջ ասւում է. «Ներկայացուեց Կղեմէս Գալանոսի խնդրանքը՝ ապրելու եւ պատարագելու հայկական ծէսով: Ժողովը յարմար համարեց տեղեկութիւններ հաւաքել, թէ արդեօք Պոլսում կա՞ն ուրիշ կրօնաւորներ, որոնք նոյն կերպ են ապրում: Իսկ պատարագելու վերաբերեալ մերժողական է պատասխանում, որովհետեւ լատին ծէսից ուրիշ ծէս, մանաւանդ հերձուածողների ծէսին անցնելու թոյլտուութիւն չի շնորհւում Հաւատաքննութեան ժողովի կողմից»[39]:

Գալանոսը եւ Ուռհայեցի Յովհաննէս արքեպիսկոպոսը

Պոլսում Կիրակոս պատրիարքի պաշտպանը եւ նեցուկը Յովհաննէս արքեպիսկոպոս Ուռհայեցին էր, որ բնականաբար Գալանոսին էլ էր օգնում կատարել իր առաքելութիւնը:

Յովհաննէս արքեպիսկոպոս Ուռհայեցու կեանքին նախկինում անդրադարձել է Կարապետ եպ. Ամատունին[40], որն ընդարձակ տեղեկութիւններ է հաղորդում նրա մասին եւ թէ ինչ խորութեան էր հասցրել իր յարաբերութիւնները Հռոմի եկեղեցու հետ: Այդ տուեալների վրայ փորձենք աւելացնել հետեւեալ մանրամասնութիւնները՝ աւելի եւս բացայայտելու համար նրա կապը Գալանոսի հետ:

Յովհաննէս արքեպիսկոպոսը Հռոմի տէրութեան հետ յարաբերութիւնները սկսել էր մշակել, միշտ միսիոներների միջնորդութեամբ, դեռ 1627 թ., երբ Հալէպում էր գտնւում: Լատին վեղարաւոր Fr. Pacifico Scaligero-ն 1627 թ. մայիսի 20-ին գրում է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին. «Ահա Ս. Ժողովիդ ձեռքով նորին սրբութեանը ուղարկում եմ երկու արքեպիսկոպոսների նամակները. մեկը մի մարոնիտ..., միւսը՝ ամենագիտուն մի հայ արքեպիսկոպոսի, հռետոր ու քարոզիչ իր ազգի մէջ, մեր ամենօրեայ քարոզների շնորհիւ ճանաչեց Հռոմի եկեղեցւու գլխաւորութիւնը, պապի՝ Պետրոսի յաջորդ եւ Քրիստոսի տեղապահ լինելը: Իր դաւանութիւնը ուղարկում է գրաւոր եւ մեծ յոյսեր եմ ակնկալում այս եկեղեցականից»[41]:

Այս նամակի հետ Հռոմ է ուղարկւում Յովհաննէս արքեպիսկոպոս Եդեսացու 1627 թ. ապրիլի 5-ի նամակը՝ գրուած Հալէպից եւ ուղղուած Ուրբանոս Ը. պապին[42]: Հռոմում հայերէն այս նամակը բանտում լատիներէնի է թարգմանում այդ օրերի պաշտօնական թարգման փրանկիսկեան հայր Գասպարը ու վերադարձնում է

37 Տե՛ս SOCG, vol. 168, f. 328+331, հմմտ. նաեւ SOCG, vol. 168, f. 329+330:

38 Տե՛ս Acta, vol. 15, f. 42, n. 6:

39 Տե՛ս Acta, vol. 15, f. 133, n. 16:

40 Տե՛ս **Կարապետ եպ. Ամատունի**, *ԺԷ. դարու երեւելի վարդապետներ*, էջ 57-62:

41 Տե՛ս SOCG, vol. 147, f. 222:

42 Այս անտիպ նամակը տե՛ս յաւելուածում:

Հաւատասփիւռի կարդինալին 1627 թ. հոկտեմբերի 26-ի կից մի նամակով՝ խնդրելով, որ հաշուի առնուի իր ծերութիւնն ու բանտից ազատուի[43]: *Յովհաննէս արքեպիսկոպոսի նամակը կարդինալ Ուբալդինոյի կողմից զեկուցւում է Հաւատասփիւռի Ժողովի 1628 թ. փետրուար 4-ի նիստին ու որոշւում պատասխանել Հալէպի վեղարաւորներից նրա տուած պաշտօնական հաւատոյ դաւանութիւնը ստանալուց յետոյ միայն*[44]:

Հաւատասփիւռի 1630 թ. յուլիսի 8-ի նիստին զեկուցւում է Սուրիայի վեղարաւորներից Simone Nosinio Polacco-ի՝ Արեւելքում առաքելութեան վերաբերեալ տեղեկատուութիւնը, ուր ընդարձակ կերպով խօսւում է Յովհաննէս արքեպիսկոպոս Եդեսացու մասին, թէ ինչպէս է չափազանց ջերմ յարաբերութիւններ հաստատել միսիոներների, յատկապէս՝ վեղարաւոր P. Pacific-ի հետ, որ Պարսկաստան մեկնելու ժամանակ յանձնարարական գրութիւն էր տուել իրեն՝ ուղղուած խոճա Նազարին, որ Պարսկաստանում համարւում էր Շահի փոխանորդը: Խոճայ Նազարն ու նրա ընտանիքը միսիոներներին ապահովել են բնակութեան վայրով եւ յարգանք ու աջակցութիւն ցուցաբերել: Սա են վկայում հէնց իրենք՝ միսիոներները:[45] *Միշտ նոյն փիլիսոփայութեան համաձայն՝ Յովհաննէս արքեպիսկոպոսը ծրագիր է մշակում մի շարք գրքեր տպագրելու պատրուակով Եւրոպա գնալու, նախ՝ Փարիզ եւ ապա Հռոմ, ներկայանալու համար պապին, ու միշտ՝ խոճայ Նազարի ծախսերով: Գրութեան հեղինակը Հաւատասփիւռի Ժողովին յանձնարարում է այս լուրերը գաղտնի պահել՝ նկատել տալով, թէ Հռոմի հայերը կարող են լուրերը հաղորդել Երուսաղէմի հայոց պատրիարքին եւ Կիլիկիոյ կաթողիկոսին: Իսկ վերջիններս թշնամութեամբ են վերաբերւում կաթողիկէ եկեղեցուն, եւ կարող են խանգարել Յովհաննէս արքեպիսկոպոսին հասնել իշխանութեան գլուխ, ինչն իրականանալու պարագայում պիտի ծաղկի կաթողիկէ հաւատը Հայոց մէջ: Յովհաննէս արքեպիսկոպոսի ծրագիրն էր գաղտնի կերպով, բայց յուսալի միջոցներով, այն է՝ ապահովելով թուրքերի վճիռը եւ Հռոմի պապի հեղինակաւոր միջամտութիւնը, տիրանալ Աթոռին*[46]:

Յաջորդ տարում՝ 1630 թ. մայիսի 8-ին, Հալէպից կարմեղական P. Prospero-ն գրում է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղար Ինկոլիին, թէ Հայոց Փիլիպպոս կաթողիկոսը պատրաստւում է բոլոր եպիսկոպոսների եւ վարդապետների ներկայութեամբ Ժողով գումարել: Այս լուրը ստացել էր այն եպիսկոպոսից, որի մասին նախապէս գրել էր Հռոմ, թէ իբր հայոց մէջ ամենագիտունն է եւ որը, իր կաթողիկէ համոզմունքների համաձայն ապրելու համար հեռացել էր Հալէպից: Անտարակոյս, ակնարկը Յովհաննէս արքեպիսկոպոս Եդեսացու մասին է, որի անունը չի գրում[47]:

Այս Յովհաննէս արքեպիսկոպոս Եդեսացին Պոլսի Կիրակոս պատրիարքի աթո-

---

43 Տե՛ս SOCG, vol. 1, f. 307:

44 Տե՛ս Acta, vol. 64 f. 10, n. 9:

45 Հայր Պացիֆիկը եւս իր ուղեգրութեան մէջ մանրամասն նկարագրում է Նոր Ջուղայում խոջա Նազարի (Cogeà-Nazar) փեսայի՝ խոջա Մուշեղի եւ նրա միակ որդու՝ խոջա Ղազարի (Cogeà-Mouchiac, որոնց իրենք նախկինում հիւրընկալել էին Փարիզում) տանը իրենց ցոյց տրուած ընդունելութիւնը, Նոր Ջուղայի առաջնորդ Խաչատուր վրդ. Կեսարացու հետ հանդիպումն ու ընդունելութիւնը (տե՛ս **R. P. Pacifique de Provins**, *Relation du Voyage de Perse*, Paris, 1631, pp. 250-270): Խոջա Նազարի ընտանիքի մասին աւելի մանրամասն տե՛ս **Յարութիւն Քիւրտեան**, *Ջուղայեցի Խոջայ Սաֆար եւ Խոջայ Նազար եւ իրենց գերդաստանը*,- «Բազմավէպ», 1975, թիւ 3-4, էջ 379-396, 1976, թիւ 1-2, էջ 52-73, թիւ 3-4, էջ 375-395:

46 Տե՛ս SOCG, vol. 195, f. 261-262:

47 Տե՛ս SOCG, vol. 115, f. 336:

ռակալն էր, երբ հանդիպեց Գալանոսին Պոլիս մուտք գործելիս: Նրա խնդրանքով է Գալանոսը տեղափոխուել բնակուելու Հայոց պատրիարքարանում: Գալանոսը հետեւեալն է գրում նրա մասին 1642 թ. մարտի 28-ին. «Յովհաննէս արքեպիսկոպոսը մեծապէս փափագում է Հռոմի հետ միութիւնը, բայց աստիճանաբար, որովհետեւ հակառակ խումբը կարող է օգտագործել առիթը եւ Թուրքին ասել, թէ հայերը յետամուտ են, որ ֆրանկները գան եւ տիրեն: Յովհաննէս արքեպիսկոպոսը գիտի յոյների Կիւրեղ պատրիարքի արած սխալը, որ անգլիական դեսպանին չափազանց մօտենալով՝ Թուրքերը իրեն ծովում խեղդեցին. մանաւանդ որ այստեղ բոլորին ծանօթ է Երեւանի (Փիլիպպոս) կաթողիկոսի Հռոմ գրած բոլոր նամակները եւ մէջտեղ չեն շրջում նրանց օրինակները. ուստի այստեղ ծածուկ ենք պահում Կիրակոսի թէ՛ նամակը եւ թէ՛ տուած հաւատոյ դաւանութիւնը, որպէսզի որեւէ դժբախտութիւն չպատահի»[48]:

Փոխադարձաբար փոքր չէր նաեւ Գալանոսի ազդեցութիւնը Յովհաննէս արքեպիսկոպոսի վրայ. սա փաստում է հէնց Գալանոսը 1642 թ. մայիսի 14-ի նամակում. «Ղալաթիայի հայոց եկեղեցում էի, Յովհաննէս արքեպիսկոպոսի հետ եւ հայերը պատարագի մէջ յիշում էին Գրիգոր Տաթեւացուն՝ իբր սուրբ: Յովհաննէս արքեպիսկոպոսը Պոլսի հինգ եկեղեցիներում հանել տուեց նրա անունը... Ես էի, որ դա թելադրեցի նրան եւ ինքն իր ունեցած հեղինակութեամբ ջնջել տուեց նրա յիշատակումը»[49]:

Յովհաննէս արքեպիսկոպոսը 1642 թ. յուլիսի 30-ին Հաւատասփիւռի Ժողովին ուղղուած նամակում, գովասանքով է խօսում Գալանոսի մասին. «Էք դուք... անշէջք լապտերք, որք ծագիլ տայք փայլատակմունս պայծառս անստուէր լուսոյն շնորհացն ձեր ընդ ամենայն տեղիս, որ ի նոյն ծագմանէ նշուլից սիրոյն ճառագայթեալ է հեռուստ՝ առ թշուառացեալ անարժանութիւնս ողջոյն սիրոյ գծագրեցիք, որ յայտնեաց մեզ սիրելի եւ պատուական եղբայր մեր ի կարգէ թէաթինաց պատր Կղէմէս վարդապետն, որ է ճշմարիտ քարոզող եւ քրտնաջան մշակ աւետարանին Քրիստոսի, լոյս աչաց եւ մխիթարութիւն ծերութեան մերոյ»[50]:

Թէ՛ Յովհաննէս արքեպիսկոպոսի եւ թէ՛ Կիրակոս պատրիարքի մասին ստացուած լուրերը բնականաբար գոհունակութեամբ էին ընթերցւում Հաւատասփիւռի ժողովին կողմից: Նոյն այս օրերին էր, որ Անկիւրացի Յովհաննէս Մոլինոն Վենետիկի մէջ նուիրուել էր Սաղմոսարանի *ու* Ցիսուս որդի *տպագրութեանը եւ խնդրում էր Հռոմից սրբագրուած աւետարանը՝ նրա էլ տպագրութիւնը կատարելու համար: Հռոմի մէջ սրբագրութեան աշխատանքները շատ դանդաղ էին առաջ գնում. այնպէս որ, Հաւատասփիւռի քարտուղարը՝ Ինկոլին, 1642 թ. մարտի 29-ին գրում է Մոլինոյին. «Գովում եմ Պոլիս վերադառնալու մտադրութիւնդ, քանի որ այնտեղ պիտի գտնես Կիրակոս պատրիարքին, որ սիրով պիտի ուզի տեսակցել հետդ. յուսով եմ նաեւ, որ պիտի օգնես թէաթին հայր Կղեմէս Գալանոսին բարի դիտաւորութիւն իրագործելու, քանի որ մեծ է նրա նպաստը հայոց լեզուին, ի նպաստ հայ ազգին»[51]:*

Գալանոսի եւ Պոլսի ֆրանսիացի դեսպանների նամակները բազմաթիւ անգամ զեկուցուել են Հաւատասփիւռի ժողովական

48 Տե՛ս SOCG, vol. 167, f. 147:

49 Տե՛ս SOCG, vol. 167, f. 148+157:

50 Տե՛ս SOCG, vol. 167, f. 26: Նամակի ամբողջական հրատարակութիւնը տե՛ս **Ամատունի եպս. Կ.**, *ԺԷ դարու երեւելի վարդապետներ*, էջ 61-62:

51 Մոլինոյի 22 մարտ 1642 թուակիր նամակն ուղղուած է Հաւատասփիւռի քարտուղար Ինկոլիին, որը նոյն նամակի թղթի վրայ համառօտել է տրուելիք պատասխանը, որտեղից էլ քաղեցինք այս հատուածը (տե՛ս SOCG, vol. 34, f. 310+317):

նիստերին: 1642 թ. մայիսի 31-ին գրում է երեք նամակ, որոնցից առաջինը՝ Կղեմէս Գալանոսին. «Ժողովը ճանաչեց Կիրակոս պատրիարքի դարձը կաթողիկէ հաւատքին, ինչն արդիւնք է հայրութեանդ աշխատանքին: Կարդինալները ճիշտ են համարում, որ մնաս Պոլսում եւ շարունակես նոյն ազգին սովորեցնել սրբազան գիտութիւնները, ինչը մեծ օգուտ պիտի անի հոգիներին»[52]: Երկրորդ նամակն ուղղուած է Ֆրանսիացի դեսպանին. «Իմացանք Կիրակոս պատրիարքի դարձը, նաեւ թէ Հ. Կղեմէս Գալանոսը մեծ օգուտներ պիտի ունենայ Հայոց համար, եթէ Պոլսում մնայ: Այստեղ կարդինալները յարմար նկատեցին, որ ինքը շարունակի այդ գործը: Փափագում ենք, որ աջակցես նոյն Հօրը բնակութիւն հաստատել Բերայում՝ այս կերպով աւելի նպաստելու Աստծոյ ծառայութեան գործին»[53]:

Երրորդ նամակն ուղղուած էր Կիրակոս պատրիարքին, որը գովեստի խօսքերի էր արժանանում գրած նամակի եւ տուած կաթողիկէ դաւանութեան համար՝ քաջալերելով շարունակել ընթանալ նոյն ուղով, որպէսզի իր օրինակով եւ քարոզութեամբ լուսաւորի հայոց ազգին՝ արթնացնելով նրա մէջ այն ազնուական հոգին, որ ունէին նախնիները: Խոստանում են ընդառաջել պատրիարքի ցանկութեանը՝ հրահանգելով Գալանոսին, որ մնայ Պոլսում եւ գործակցի նրա հետ իր բոլոր կարողութիւններով[54]:

Գալանոսի բացած վարժարանը Պոլսում

Միսիոներ Գալանոսի՝ հայերէնին նուիրուելու գլխաւոր շարժառիթը հայերէնով գրքեր շարադրելու ցանկութիւնն էր՝ այդ կերպով իրագործելու համար իր առաքելութիւնը, այն է՝ պատրաստել մտքեր, դրականօրէն տրամադրել հոգիները Հռոմի եկեղեցու հանդէպ: Պոլիս մտնելիս արդէն բաւականաչափ գիտէր հայերէն լեզուն, այն աստիճան, որ 1641 թ. դեկտեմբերի 9-ի նամակով տեղեկացնում է Հաւատասփիւռի Ժողովի նախագահին, թէ իր տրամադրութեան տակ ունի մի քանի աշակերտ, որոնց Կիրակոս պատրիարքի յանձնարարութեամբ փիլիսոփայութիւն է դասաւանդում: Աշակերտներից անուանապէս յիշատակում է քսանամեայ Յովհաննէսին, որը թողած հայրենի տունը, հետեւում է իրեն[55]: Սա ապագայ տէր Յովհաննէս Աբդալն էր՝ առաքուած Հալէպից:

Գիտութեան ծարաւ հայ երիտասարդների այս խումբը հաւաքւում է Գալանոսի շուրջը: Վերջինս արդէն նոյնիսկ մտածում էր մի առանձին վարձու վարժարանի մասին՝ այնտեղ հաւաքելու համար գոնէ չորս աշակերտներ: 1641 թ. դեկտեմբերի 9-ին նա գրում է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին, թէ արդէն իսկ շարադրել է հայերէնով Տրամաբանութեան *դասագիրքը եւ յետամուտ է թարգմանելու* Քերականութեան *դասագիրքը, որպէսզի տպագրութեան համար ուղարկի Հռոմ[56]: Շուրջ մէկ ամիս յետոյ՝ 1642 թ. յունուարի 15-ին, Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին տեղեկացնում է հայ եկեղեցականների խնդրանքով շարադրուած* Քերականութեան *դասագրքի աւարտելը, եւ թէ այն իր աշակերտ Յովհաննէսի միջոցով ուզում է շտապով հասցնել Հռոմ, ուր նա հսկելու էր տպագրութեան ընթացքին: Գալանոսը կը ցանկանար անձամբ հետեւել իր գրքի տպագրութեանը, որովհետեւ գիտէր նրա կարեւորութիւնը, «բայց չեմ ուզում հեռանալ քաղաքից՝ ինձանից չհեռացնելու համար այս իմ սիրելի հայ ժողովուրդս»[57]:*

52 Տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 44:

53 Տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 45:

54 Տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 43:

55 Տե՛ս SOCG, vol. 167, f. 167+172:

56 Տե՛ս SOCG, vol. 167, f. 168:

57 Տե՛ս SOCG, vol. 167, f. 144. իտալերէն բնագրում ասում է. «Per non assandonare questo mio diletto popolo armeno»:

Պոլսահայութեան մէջ աւելի արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալելու համար Գալանոսն անհրաժեշտ էր համարում ամեն կերպ հայանալ, այն է՝ հետեւել հայոց ծէսին, պատարագին, ժամերգութեանը, ծոմերին, զգեստին, ու այս ուղղութեամբ նամակների տարափ էր տեղում Հռոմ՝ խնդրելով հրաման. «Գրեցի ձեզ յունուարի 15-ին եւ պատասխանի եմ սպասում,- գրում է Գալանոսը 1642 թ. փետրուարի 5-ին.- հայերը խանդավառ կերպով պնդում են՝ ասելով, թէ ինձ ուզում են տեսնել պատրիարքական եկեղեցում՝ իրենց զաւակներին կրթելու համար, իսկ ես անելիքս չգիտեմ, որովհետեւ գնալու պարագայում պէտք է պահեմ իրենց ծէսն ու ծոմերը, պատարագեմ հայերէնով»[58]: 1642 թ. մարտի 8-ին դեռ պաշտպանում է վարժարանի գաղափարը՝ գրելով Հաւատասփիւռի քարտուղարին. «Այժմ հետամուտ եմ ստանալ բնակութիւն Ղալաթիայում: Դուք էլ կարող էք նպաստել այս գործին՝ գրելով Վենետիկի դեսպանին: Տունը ստանալով՝ ուսման նկատմամբ մեծ օգուտ պիտի տամ հայերին, որովհետեւ ոչ մի միսիոներ չի կարողացել ցարդ օգտակար լինել այս ուղղութեամբ: Նմանապէս այդ տունը օգտակար պիտի լինի ինձ, եթէ հայերը ինձ վռնդելու լինեն իրենց միջից, ինչ-որ այժմ [հաւանական] չեմ կարծում»[59]:

Մինչ այս, 1642 թ. մարտին Յովհաննէս արքեպիսկոպոսի պնդումով, ֆրանսիացի եւ վենետիկցի դեսպանների խորհրդով Գալանոսը վեղարաւորների վանքից բնակութիւնը փոխադրում է Հայոց պատրիարքարան՝ փոխելով նոյնիսկ տարազը, հագնելով հայ վարդապետների զգեստներ, մասնակցելով հայոց ժամերգութեանն ու ծոմերին[60]: Գալանոսը 1642 թ. մարտի 28-ին գրում է, թէ Պատրիարքարանի մէջ «դասաւանդում եմ իմաստասիրութիւն եւ աստուածաբանութիւն, քանի որ տգէտ են այս մարզի մէջ, բոլորը զարմանում են իմ յաջողութեան վրայ, քանի որ չլսուած բան է. զարմանում են յատկապէս միսիոներները, որոնք յուսահատուած էին հայերից եւ իրենց չէին նուիրուել նրանց լեզուն սովորելու: Ներկայումս բազում հայերի սովորեցնում եմ քերականութիւն, ուրիշներին՝ տրամաբանութիւն»[61]:

Նոյն այդ օրերին, այն է՝ 1642 թ. մայիս ամսին, հովուական այցելութեամբ Պոլսից դուրս էր գտնուում Կիրակոս պատրիարքը, որը «լսելով թէ ես պատրիարքարան եմ փոխադրուել,- գրում է Գալանոսը, 1642 թ. մայիսի 14-ին,- եւ հայ վարդապետի նման եմ հագնուում, գրել է իր հօրը (իմա՝ տէր Յովհաննէս քահանային – Մ. Կ.) եւ իր մտերիմներին, որ իր մօտ գնամ, այսինքն Պուրսա, որովհետեւ այնտեղ գտել է ուշիմ աշակերտներ, նրանց դասաւանդելու համար: Սիրով կը գնայի, եթէ հրաման ունենայի Պոլիսից հեռանալու»[62]:

Այս բոլոր վկայութիւնները ցոյց են տալիս, որ Գալանոսը ոչ միայն լիովին տիրապետում էր մեր լեզուին, այլ սկսել էր տիրել նաեւ կացութեանը՝ ստեղծելով դպրոց, սիրուած էր որոշակի շրջանակի կողմից: Երբ այդ օրերին քաղաքում ժանտախտի համաճարակ է տարածւում, եւ նա ֆրանսիացիների հիւանդանոց է տեղափոխւում, ինչպէս ինքն է գրում. «Աշակերտներս ամեն օր ինձ այցելութեան էին գալիս»[63]: Գալանոսն արդէն իսկ ստեղծել էր Հռոմի համակիրների մի շրջանակ եւ յուսով էր, որ նրանք պիտի յաջողդաբար զբաղեցնէին Պատրիարքական Աթոռը: Այս

58 Տե՛ս SOCG, vol. 167, f. 145:

59 Տե՛ս SOCG, vol. 167, f. 146:

60 Գալանոսը այս լուրը հաղորդում է 1642 թ. մայիսի 14-ի թուակիր նամակով ու, խօսելով ծոմերի մասին, գրում է, թէ հետեւում է հայկական աւանդութեանը. «Բայց գաղտնի խմում եմ մի քիչ գինի՝ ստամոքսիս համար, իսկ գինին ինձ ուղարկում է Դիարբեքիրի Յովհաննէս արքեպիսկոպոսը» (տե՛ս SOCG, vol. 167, f. 148+157):

61 Տե՛ս SOCG, vol. 167, f. 147:

62 Տե՛ս SOCG, vol. 167, f. 148+157:

63 Նոյն տեղում:

նպատակով էլ ուզում էր հաստատել մի վարժարան, մանաւանդ որ առաջարկը գալիս էր հէնց իր աշակերտներից: Ահա թէ ինչ է գրում Գալանոսը Հաւատասփիւռի Ժողովին 1642 թ. յուլիսի 18-ին՝ Կիրակոս Պատրիարքի մահից անմիջապէս յետոյ. «(Կիրակոսը) շատ սիրուած էր բոլորի կողմից, 32 տարեկան էր, առողջ կազմուածքով, հաւատքի պահապան, որ իր ուղիղ հաւատքի համար նզովուեց եւ վտարուեց Երեւանի կաթողիկոսից եւ Պոլիսից...: Յուսանք այժմ երկնքից բարեխօս լինի եւ արդէն արդիւնքները երեւում են, որովհետեւ ինձ դիմեցին հայ եկեղեցականները, որոնց մէջ կան թէ՛ իմ աշակերտներից եւ թէ՛ Կիրակոսի աշակերտներից, որոնց գլխաւորն է իր եղբայրը՝ Կարապետ վարդապետը եւ հայրը, որ քահանայ է՝ տէր Յովհաննէս անունով: Սրանք դիմեցին ինձ, որ կա՛մ Պոլիս եւ կա՛մ դուրսը հաւաքուենք եւ ապրենք կրօնաւորական կեանքով՝ դաւանելով Հռոմէական հաւատքը, հնազանդուելով գերագոյն քահանայապետին, սրբագրելով հայ հերետիկոսական գրքերը, ինչ որ Կիրակոս Պատրիարքի ամբողջական ծրագիրն էր: Այս բոլորը ինձ մեծապէս մխիթարեցին...: Երազանքս է ձեր օգնութեամբ գտնել մի բնակավայր եւ յիշեալ հայ կաթողիկէ անձերի հետ ապրել. եւ այս կարող է լինել իբր մի վարժարան, որ եթէ իրագործուի՝ ապահովուած կլինի Հայոց հոգեւոր կեանքը, իրենցից ընտրելով պատրիարքներ...: Նման ոսկի առիթ եթէ փախցնելու լինենք՝ այլեւս չենք ունենայ»[64]:

Պոլսի վարժարանը Կիրակոս Պատրիարքի մահից յետոյ

Կիրակոս Պատրիարքը 1642 թ. յունիսի կէսին հովուական այցելութիւնից վերադառնում է Պոլիս եւ երեք օր յետոյ 37 տարեկանում վախճանւում է ժանտախտից՝ առանց կարողանալու կարդալ Հռոմ ուղարկած իր նամակի պատասխանը, որ Գալանոսը յանձնում է Կիրակոսի հարազատներին: Կիրակոսի մահուան լուրը Հռոմ հաղորդողը Գալանոսն է՝ 1642 թ. յուլիս 18-ին. «Յունիսի կէսին Կիրակոս Պատրիարքը վախճանուեց. նա, որ Պապին նամակ եւ հաւատոյ դաւանութիւն էր ուղարկել: Մեռաւ ժանտախտից՝ խոստովանուելուց եւ հաղորդուելուց յետոյ»[65]: Նոյն լուրը հաղորդում է նաեւ Ֆրանսիացի հիւպատոսը՝ Յուլիսի 14-ին Հաւատասփիւռի քարտուղարին գրելով. «Լուր եմ տալիս, որ Կիրակոս Պատրիարքը վախճանուեց. յոյս ունեմ սպասուած արդիւնքը կը կայանայ, որովհետեւ կարեւոր հարց է (իմա՛ եկեղեցիների միութիւնը – Մ. Կ.). Գալանոսն էլ յուսով է, որ հարցը լաւ կերպով է վերջանալու»[66]:

Գալանոսի սպասումն ու ակնկալիքն այն էր, որ պատրիարքական Աթոռը ժառանգէր իր պատրաստած խմբից որեւէ մէկը: Յուլիսի 18-ին նա գրում է Հաւատասփիւռի Ժողովին. «Պատրիարքութեան երեք թեկնածուներից երկուսը հաւատքով կաթողիկէ են, որոնցից մէկը աշակերտս է՝ Խաչատուր անունով, միւսը՝ Կիրակոսի աշակերտ տէր Թոմասը, այն որ ուզում էր հետս վանք գնալ, իսկ երրորդը՝ նախկին պատրիարք Դաւիթն է»[67]:

Այս դէպքերի ընթացքում պատրիարքութեան աշխատանքները վարում էր հիմնականում ծերունի եղեսացի Յովհաննէս Արքեպիսկոպոս Միջագետացը, որին առաջարկւում է պատրիարքութիւնը, եւ նա, համաձայն Գալանոսի, յանձն է առնում ի դէմս իր Խաչատուր աշակերտի, որ Պատրիարք է դառնում 1642 թ. յուլիսի 27-ին: Երեք օր յետոյ Յովհաննէս Արքեպիսկոպոսը գրում է Հռոմ յուլիսի 30-ի թուակիր նա-

64 Տե՛ս SOCG, vol. 167, f. 149:

65 Տե՛ս SOCG, vol. 167, f. 149:

66 Տե՛ս SOCG, vol. 167, f. 318:

67 Տե՛ս SOCG, vol. 167, f. 149:

մակը, որի մասին ակնարկեցինք վերեւում[68]: Գաղատացի Խաչատուրի վերաբերեալ Գալանոսը վկայում է, որ «մեծ փափաք ունի եկեղեցիների միութեան, ներկայումս չկարողացաւ գրել Հռոմ, որովհետեւ զբաղած է, յատկապէս՝ Հռոմի հակառակորդ խմբի հետ, որոնք ջանում են, թուրքի միջամտութեամբ, նրան վռնդել»[69]:

Գալանոսն անկասկած գոհ էր, որ Պատրիարքական Աթոռին նստել էր իր աշակերտներից մեկը, 36 տարեկան հասակում, որ նախկինում աշակերտել էր նաեւ Յովհաննէս Արքեպիսկոպոսին: Գոհ էր նաեւ Պոլսի ֆրանսիական դեսպանը, որ 1642 թ. օգոստոսի 15-ին գրում է Հաւատասփիւռի Ժողովի նախագահին. «Կիրակոս Պատրիարքի մահից յետոյ մտահոգ էի, սակայն նրան յաջորդող Խաչատուրը, որ ընտրութիւնից յետոյ աւետիս տուեց ինձ՝ ուղարկելով որդուն, ասելով, թէ տրամադիր է մնալու իր նախորդին ուղղութեանն հաւատարիմ, տածելով ջերմ յարաբերութիւն Հռոմի եկեղեցու հետ»[70], ասել ուզելով թէ ինքն էլ է ապաւինում ֆրանսիական դեսպանին՝ խնդրելով իր հովանաւորութիւնը:

Գալանոսը 1642 թ. օգոստոսի 10-ով թուագրուած նամակով գրում է Հաւատասփիւռի Ժողովին. «Ժամանակին Խաչատուրին ծանօթացրի ֆրանսիական դեսպանի հետ, եւ միասին ճաշեցինք: Այժմ (պատրիարք) ընտրուելուց յետոյ՝ իր որդիներից մեկին ուղարկել է դեսպանի մօտ, իսկ դեսպանը Խաչատուրին փոխայցելութեան ուղարկել է իր քարտուղարին՝ Lampror-ին»[71]: Գալանոսի եւ ֆրանսիացի դեսպանի նամակները, որոնք աւետում են Խաչատուրի պատրիարք ընտրուելը, գոհունակութեամբ զեկուցւում են Հաւատասփիւռի Ժողովի 1642 թ. նոյեմբերի 24-ի նիստին, ուր որոշւում է ողջոյնի նամակներ ուղարկել երկուսին[72]:

Հաւատասփիւռի Ժողովը, առանց Խաչատուր Պատրիարքից նամակ ստացած լինելու, միայն լսելով Հռոմի եկեղեցու հանդէպ նրա ունեցած ներքին տրամադրութիւնների մասին, հիմնուելով Գալանոսի եւ ֆրանսիական դեսպանի արձագանքների վրայ՝ 1642 թ. դեկտեմբեր 6-ին գրում է յատուկ նամակ՝ քաջալերելով, որ Հռոմի Ս. Աթոռի հանդէպ նա մնայ նոյն տրամադրութիւններով, որ հաստատուած է աստուածային իմաստութեամբ եւ անսխալ ուսուցիչ է ճշմարիտ հաւատքի..., մաղթում է, որ իր վարդապետութեամբ եւ օրինակով լոյսի նման ճառագի եւ լուսաւորի Հայաստանեայց եկեղեցու իրեն յանձնուած հոգինե-

68 Եդեսացի Յովհաննէս Արքեպիսկոպոսի 1642 թ. յուլիսի 30-ի թուակիր նամակը զեկուցւում է Հաւատասփիւռի Ժողովի 1642 թ. նոյեմբերի 24-ի նիստում (տե՛ս Acta, v. 15, f. 224, n. 25), իսկ պատասխանը տրւում է նոյն թուի դեկտեմբերի 6-ին՝ հետեւեալ բովանդակութեամբ. «Օգոստոսին գրած նամակդ կարդացուեց Ս. Ժողովում, պապի ներկայութեամբ: Ուրախութեամբ գնահատում ենք ձեր միութեան փափաքը: Եւ որպէսզի իմանաք, թէ որ կէտերի մէջ է կայանում (միութիւնը – Մ. Կ.), հարկաւոր լուսաբանութիւնները պիտի ստանաք Ս. Ժողովիս միսիոներ Կղեմէս Գալանոսից, որ պապի եւ կարդինալների կողմից պիտի բացատրի ձեր անելիքը» (տե՛ս Lettere volgari, vol. 21, ff. 114-115): Երբ այս նամակը հասաւ Պոլիս, Յովհաննէս Արքեպիսկոպոսը վախճանուած էր: Երբ ադիթ է ներկայանում եւ Հռոմից ֆրանցիսկեան P. Bartolomeo Stallini-ն ուղղւում է Միջագետք, Հաւատասփիւռի ժողովի քարտուղարը 1643 թ. Յունուար 17-ին գրում է Գալանոսին, որպէսզի միջնորդի եւ Յովհաննէս Արքեպիսկոպոսից, որը յայտնի էր իբր Հռոմի Ս. Ժողովին քաջածանօթ անձ, ստանայ մի յանձնարարական գիր P. Stallini-ի համար Միջագետքում կատարելիք առաքելութեան գործում (տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 128): Հաւատասփիւռի քարտուղարը նոյն այս նամակը տարբեր բառերով կրկնել է Կղեմէս Գալանոսին 1643 թ. Յունուարի 17-ին (տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 175):

69 Տե՛ս SOCG, vol. 167, f. 163:

70 Տե՛ս SOCG, vol. 167, f. 324:

71 Տե՛ս SOCG, vol. 167, f. 163:

72 Տե՛ս Acta, vol. 15, f. 224, n. 25:

ը՝ այս կաթողիկէ հաւատքին մէջ, որի բանաձեւը նրան պիտի յանձնուի Կղեմէս Գալանոսի կողմից, *եւ յանձնարարելով, որ գործադրի բոլոր այն հրահանգները, որ պիտի տրուեն նրան Ս. Ժողովի, Պապի եւ կարդինալների անունից*[73]:

Յաջողութեան այս ընթացքի մէջ է, որ յառաջանում էր Գալանոսի նաւը՝ ծրագրելով դեռ աւելի ընդարձակել գործունէութեան ասպարէզը: 1642 թ. օգոստոսի 10-ին նա գրում է Հաւատասփիւռի Ժողովի կարդինալներին. «Այստեղ սովորեցնում եմ հայերին. եւ օր օրի աշակերտներս բազմանում են. բոլորն էլ ուշիմ են, ուզում են թողնել ամեն բան եւ ինձ հետեւել: Մխիթարական երեւոյթ է, բայց անգործադրելի, որովհետեւ թէեւ հրաման էք տուել տուն ունենալու, սակայն կարօտ եմ նաեւ եռանդուն օգնականների. միայն այդ ժամանակ է, որ հայերի համար տունը կարելի է վերածել նաեւ վարժարանի: Այնուհետեւ հեշտ պիտի լինէր նման ենթականերով այս կողմերը հաստատել հայ քարոզիչների համար մի նոր միսիոներութիւն, չասելու համար մի նոր կարգ, որոնք սահմանուին դառնալու քարոզիչներ իրենց ազգի մէջ: Աշակերտներիցս շատերն ուզում են կրօնաւոր դառնալ, սակայն այստեղ ոչ մի հայկական կրօնաւորական հաստատութիւն գոյութիւն չունի, իսկ իրենց առաջարկել, որ դառնան լատին կրօնաւորներ, յարմար չէ. անպարկեշտ բան է դուրս ելնեն իրենց ազգից: Եօթ հոգի, որոնց սովորեցնում եմ, կաթողիկէ են, նրանց մէջ է նաեւ 36 տարեկան Խաչատուրը, որ 13 օր առաջ պատրիարք դարձաւ»[74]:

Գալանոսն իր խանդավառ ծրագրերի եւ ցանկութիւնների մասին, բացի Հաւատասփիւռի Ժողովից, գրում էր անշուշտ նաեւ Հռոմում իր միաբանութեան մեծաւորին, որը շարադրել է մի խնդրագիր՝ Գալանոսի կողմից 1642 թ. օգոստոսի 10-ով թուագրուած: Այն ուղղուած է Հաւատասփիւռի Ժողովին՝ նոյն Ժողովին ծանօթ բառամթերքով եւ հոգեբանութեամբ. «(Կղեմէս Գալանոսը) ուշադրութիւն է հրաւիրում, թէ շատ են կաթողիկէ հայ երիտասարդները, որոնք մեծ ցանկութիւն ունեն հմտանալու կաթողիկէ վարդապետութեան եւ սրբազան գիտութիւնների մէջ: Այս աշխատակերպով կարելի պիտի լինէր պատրաստելու շատ կաթողիկէ տարրեր, որոնք կարճ ժամանակում պիտի կարողանային տարածել մեր սուրբ հաւատքը իրենց ազգին մէջ: Սրա համար խնդրում է, որ իրեն համար սահմանուի տարեկան մի եկամուտ՝ որոշ թուով հայ աշակերտներ պահելու համար, որովհետեւ հայերը, թէեւ ջերմեռանդ, բայց շատ աղքատ լինելով՝ չեն կարող նպաստել այս գործին: Այս առիթով կարելի է ժառանգաւորաց մի վարժարան հաստատել՝ Թէաթինեանների տանը»[75]:

Պոլսում Ժառանգաւորաց առանձին վարժարան բացելու առաջարկը ու յատկապէս նրան թոշակ սահմանելու կալանոսեան ցանկութիւնը զեկուցւում է Հաւատասփիւ-

73 Տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 115: Խաչատուրը պատրիարքութիւնից վաղուց գահընկէց էր արուել, երբ այս նամակը հասնում է Պոլիս: Հաւատասփիւռի Ժողովը 1642 թ. դեկտեմբերի 6-ին գրել էր նաեւ Կղեմէս Գալանոսին՝ ողջունելով Խաչատուրի Պատրիարքութիւնը եւ եղեսացի Յովհաննէս Արքեպիսկոպոսի գրած նամակը, ապա յանձնարարելով, որ երկուսին էլ ներկայացնի կաթողիկէ դաւանանքի բանաձեւերը, որպէսզի երկուսն էլ առանձին-առանձին ստորագրեն եւ կնքեն՝ իր (իմա՛ Կղեմէս Գալանոսի) եւ Պոլսի լատին առաքելական նուիրակի ներկայութեամբ: Նամակն ապա ուղարկուելու էր Հռոմ: Այս նամակը Պոլիս է հասնում, երբ Յովհաննէս Արքեպիսկոպոսը վախճանուել էր, իսկ Խաչատուր Պատրիարքն էլ՝ աքսորուել: Գալանոսը 1643 թ. փետրուարի 22-ին տեղեկացնում է, թէ նրանց փոխարէն հաւատոյ դաւանութիւն է տուել իր աշակերտներից Թոմաս վրդ. Հալէպցին (իմա՛ Բերիացին), որը 1644 թ. պիտի ընտրուէր Պոլսի Պատրիարք:

74 Տե՛ս SOCG, vol. 167, f. 163:

75 Տե՛ս SOCG, vol. 39, f. 438:

ռի ժողովի 1642 թ. նոյեմբերի 24-ի նիստին, Պապի ներկայութեամբ: Վարժարանի կապակցութեամբ որոշւում է գումարել մասնաւոր մի ժողով, ուր մանրամասնօրէն պիտի քննուէր հարցը[76]: Յաջորդաբար, 1643 թ. յունուարի 13-ին դարձեալ Հաւատասփիւռի ժողովի նիստում արծարծւում է նոյն հարցը եւ կրկին յետաձգւում մինչեւ մասնաւոր ժողովի գումարումը[77]. իսկ սահմանուելիք թոշակի վերաբերեալ Հաւատասփիւռի ժողովի քարտուղարը արձանագրել է հետեւեալը. «Շատ տարիներ ի վեր 2.000 սկուդ է ուղարկուել Հռոմ՝ հայերի համար վարժարան հիմնելու, ու տարեկան 150 սկուդ Հռոմից ուղարկուել է Ալինճա (իմա՛ Երնջակ – Մ. Կ.) հայ դոմինիկեաններին, սակայն ոչ մի արդիւնք չտեսնելով՝ վճարումը դադարեցուել է: Ներկայումս Իսպանիայից սպասւում է 12.500 ոսկի[78] (pezze da 8) Հռոմի (Հայոց) վարժարանի համար: Մինչեւ այս, մինչեւ հայոց վարժարանի հիմնուելը, կարելի է երկու հայ եկեղեցական բերել տալ Հաւատասփիւռի վարժարանը, որոնք կ'ուսանեն 2.000 սկուդի բերած եկամուտով, այն յոյսով, որ տեղ կը հասնի նաեւ 12.500 ոսկին եւ կը հիմնուի Հայոց վարժարանը»[79]:

Խաչատուր վարդապետի պատրիարքութիւնը տեւում է մի ամսից էլ պակաս, ու, ի վերջոյ, Աթոռը գրաւում է Դաւիթ Արեւելցին: Ակնյայտ է, որ զօրացել էր միւս խումբը՝ հակառակ լատինասէրների խմբակին, որոնք, անշուշտ, ուզում էին ամբողջապէս տիրել կացութեանը: Կարապետ վարդապետը, Կիրակոս Պատրիարքի եղբայրը, լաւ չէր դիտւում Դաւթի համակիրների կողմից, ինչպէս նաեւ Գալանոսի սիրելի աշակերտը՝ Յովհաննէս Աբդալը, իրեն փոխանցուած դեռ Կիրակոս Պատրիարքից: Լաւագոյն լուծումն էր, որ երկուսով միասին լքէին քաղաքը՝ ապաստանելով Հռոմում: Պոլսի Ֆրանսիացի դեսպանի քարտուղարը՝ Lempreur-ը, 1642 թ. օգոստոսի 24-ին յանձնարարական նամակի ձեւով հետեւեալն է գրում Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին. «Այս նամակը քեզ բերում է պարոն Յովհաննէս հայը՝ կաթողիկէ, առաքինի եւ բարի վարքով, շատ յարգուած մեր դեսպանի կողմից: Յովհաննէսը Գալանոսի աշակերտն է: Իր հետ, հաւանաբար, ճանապարհ կ'ընկնի նաեւ Կարապետը՝ հանգուցեալ Կիրակոս Պատրիարքի եղբայրը: Երկուսն էլ ատելի են բոլոր հայերից»[80]:

Մի յանձնարարական նամակ էլ գրում է նաեւ Գալանոսը, 1642 թ. օգոստոսի 25-ով թուագրուած, ուղղուած Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին, տալով աւելի ընդարձակ տեղեկութիւններ երկու ճանապարհորդների մասին. «Հռոմ են գալիս աշակերտներից երկուսը. մեծը՝ տէր Կարապետը, կուսակրօն վարդապետ է, հանգուցեալ Կիրակոս Պատրիարքի եղբայրն է: Քանի դեռ եղբայրը ողջ էր, իրեն ապահով էր զգում. այժմ հալածուած է, մանաւանդ նոր պատրիարքից՝ Դաւթից, որ յաջորդեց իմ կաթողիկէ աշակերտիս՝ Խաչատուր պատրիարքին: Խնդրում եմ, որ

76 Տե՛ս Acta, vol. 15, f. 224, n. 25:

77 Տե՛ս Acta, vol. 15, f. 267, n. 38:

78 Անկասկած, խօսքը Նախիջեւանում Հայոց վարժարան հիմնելու համար Պօղոս-Մարիա Չիտտադինոյի հաւաքած գումարի մասին է (աւելի մանրամասն տե՛ս «Հայոց վարժարանի համար Չիտտադինոյի թողած գումարը» բաժինը, **Հ. Սահակ Ճեմճեմեան**, *Նախիջեւանի Հայոց վարժարանը եւ Հռոմը* (Վենետիկ-Ս.Ղազար, 2000, էջ 51-56)): Հմմտ. **Carlos Alonso,** *Angel Maria Cittadini, arzobispo de Naxiwan (†1629)*, Roma, 1970:

79 Հաւատասփիւռի ժողովի քարտուղարը, որ, երեւում է, փայլուն տեղեակ էր կացութեանը, այս արձանագրութիւնը կատարել է խորհրդածութեան ձեւով՝ Գալանոսի անունով ներկայացուած խնդրագրի կողքին (տե՛ս SOCG, vol. 39, f. 438):

80 Տե՛ս SOCG, vol. 168, f. 178: Նոյն նամակի տակ կայ Հաւատասփիւռի քարտուղարի պատասխանի համառօտութիւնը. «Այստեղ հասաւ Յովհաննէս հայը եւ ամէն ինչ պիտի անեմ իրեն տեղաւորելու Հաւատասփիւռի վարժարանը, որպէսզի սովորի մեր հաւատքը. 31 յունուարի, 1643»:

նրա համար ապրուստի միջոց գտնես: Հայերէնին հմուտ անձ է. եթէ Հռոմի մէջ սովորի ֆռանք լեզուն, կարող է օգտակար լինել Հաւատասփիւռի Ժողովին: Նրա հայրը (իմա՛ Յովհաննէս երէցը – Մ. Կ.) այստեղ դեռ ողջ է. յաջորդաբար նրան էլ պէտք է Հռոմ կանչել: Երկրորդի անունն է Յովհաննէս: Պոլսի իմ առաջին աշակերտն է, որ սովորեց քերականութիւն եւ տրամաբանութիւն: Կաթողիկէ է: Նրան սովորեցրի ծածուկ պահել իր հաւատքը. համարձակ կերպով խօսելու պատճառով այժմ չի կարող փողոցով անցնել: Հայերը ուզում են նրան դատի տալ, սակայն նա չի վախենում դրանից: Նրան խորհուրդ տուեցի փախչել, ապա թէ ոչ կարգը պիտի ինձ էլ հասնէր, ինչ որ անօգուտ է նոր հաւատքի տարածման համար: Զգիտեմ, արդեօ՞ք պիտի ուզենայ մտնել Հաւատասփիւռի վարժարանը, որովհետեւ սիրում է ազատ ապրել, թէեւ՝ սուրբ կերպով, ինչը վկայում եմ, որովհետեւ մի տարի է, որ ինձ է խոստովանում եւ հաղորդւում»[81]:

Կարապետ վարդապետի եւ Յովհաննէս Աբդալի՝ Պոլսից փախուստը նշան էր, թէ Գալանոսի եւ խմբակի տկարանալով, յաղթանակը երկար չէր տեւելու: Գալանոսը բնակութիւն էր հաստատել Պատրիարքարանում եւ առայժմ դեռ այնտեղ էր մնում: 1642 թ. հոկտեմբերի 31-ին Գալանոսը գծագրում է նոյն օրերի պատկերը՝ պատմելով, թէ իբր Խաչատուր Պատրիարքը պատրաստւում էր գրել Հռոմ՝ իր հպատակութեան գիրը՝ «հետեւելով իր նախորդի օրինակին, թուրքերը դրամի զօրութեամբ գահընկէց արեցին նրան եւ վերահաստատեցին Դաւիթ Արեւելցուն»: Բնականաբար, Դաւիթը պիտի ուզէր իր կողքից վռնդել Գալանոսին, ինչպէս վերջինս է գրում, «կաթողիկէ քարոզիչ լինելուս համար», սակայն պատկառում էր նոյն անձերից, այսինքն՝ Գալանոսի աշակերտներից՝ եդեսացի Յովհաննէս Արքեպիսկոպոսից, Խաչատուր նախկին պատրիարքից, հանգուցեալ Զաքարիա պատրիարքի աշակերտներից, Պօղոս վարդապետ Տիւրիկեցուց, Պոլսոյ քաջ քարոզչից (որը մի քարոզի ընթացքում Գալանոսի մասին ասել էր, թէ նա պապից ուղարկուել է՝ հմտացնելու հայերին սրբազան գիտութիւնների մէջ), Գալանոսի համակիր աշխարհականներից, որոնց մէջ նշանաւոր է Սկանտար Զէլէպին: Վերջինիս հայրը եղել էր Հալէպի Emin-ը: Այս կացութեան մէջ Դաւիթը, պատրիարքական Աթոռը գրաւելով հանդերձ, հետեւում էր խաղաղ քաղաքականութեանը, մանաւանդ որ 70.000 ոսկի պարտք ունէր թուրքերին եւ արդէն մի անգամ բանտարկուած էր եղել[82]:

Գալանոսն, անշուշտ, խոհեմութիւնից դրդուած՝ թողնում է բնակութիւնը Պատրիարքարանում եւ քաշւում Սկանտար Զէլէպիի տունը, ուր իրեն սենեակ է տրամադրւում, այն յոյսով, որ վերջապէս պիտի յաջողուի հիմնել հայոց վարժարանը՝ Վենետիկի դեսպանի Պոլիս հասնելուն պէս: Երբ Գալանոսը բժշկում է մի դիւահարի, քաղաքի մէջ տարածւում է նրա համբաւը, աճում է նաեւ աշակերտների թիւը: Նրա աշակերտներից երկուսը վէճի են բռնւում Կիրակոս Պատրիարքի համակիրների հետ՝ պատրիարքական Աթոռը գրաւելու խնդրով, Գալանոսը հաշտեցնում է նրանց՝ հակառակ Դաւիթ Պատրիարքի, որ սկսել էր դառնալ Գալանոսի եւ նրա գործի հալածողը[83]:

Դիւրին չէր, ուրեմն, Գալանոսի գործը. վերեւի վկայութիւնից երեւում է, որ նրա համակիրների մէջ էլ համերաշխու-

81 Տե՛ս SOCG, v. 168, f. 323:

82 Հմմտ. SOCG, v. 168, f. 328+331:

83 Հմմտ. Գալանոսի 1642 թ. հոկտեմբերի 28-ի նամակը Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին (տե՛ս SOCG, vol. 168, f. 329+330):

թեան ոգին բացակայում էր, եւ յանուն իշխանութեան ու Պատրիարքական Աթոռի՝ ծայր էր առել երկպառակութիւնը: Ֆրանսիացի դեսպանը շատ շօշափելի կերպով է խօսում այս մասին, երբ 1642 թ. նոյեմբերի 29-ին գրում է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին. «Կիրակոս պատրիարքի մահուան դժբախտութեանը յաջորդեց ուրիշ մի մեծ դժբախտութիւն, այսինքն՝ գահընկէց եղաւ նրա յաջորդը (իմա՛ Խաչատուրը – Մ. Կ.), որ համակրանք էր ցոյց տալիս Հռոմի եկեղեցուն՝ վռնդուելով նախկին հերձուածող պատրիարքի խմբակից: Ու դեռ այս օրերին վախճանուեց մի ուրիշ հեղինակաւոր վարդապետ (իմա՛ Բարսեղ եպիսկոպոս Դիարբէքիրի – Մ. Կ.)՝ Կիրակոս պատրիարքի ընկերը եւ Հ. Գալանոսի մեծ պաշտպանը: Այս կերպ մեր բոլոր յոյսերն ի դերեւ են ելնելու»[84]:

Նոյն այս օրերին Պօղոս Փիրոմալին, Լեհաստանից Պոլիս գալով, գրում է Հաւատասփիւռի Ժողովին. «Կորցրեցինք ոչ միայն Կիրակոսին, այլ նաեւ՝ Դիարպէքիրի Բարսեղ եպիսկոպոսին: Հալածուելու վախից տէր Կարապետը ուրիշ երկու (!) հոգով ճանապարհուել է Հռոմ: Ընդունէք նրանց իբրեւ որդիներ եւ ամեն ինչ արէք, որ նուիրուեն ուսմանը: Այստեղ Կղեմէս Գալանոսը շատ զարգացել է հայերէնի մէջ, տխուր է Կիրակոսի եւ Ուրհայի վարդապետի մահուան առիթով: Եթէ ես մեռնելու լինեմ, այս առաքելութիւնը լքուած պիտի չմնայ, քանի կայ Կղեմէս Գալանոսը»[85]:

Մինչեւ 1643 թ. յունիս ամիսը Գալանոսի դպրոցը գործում է, եւ վերջինս «...Հռոմից սպասում է դրամական օժանդակութեան»: 1643 թ. փետրուարի 22-ին նա գրում է, թէ տեղաւորուել է իր աշակերտներից մեկի տանը[86], իսկ մայիսի 30-ին գրում է Հաւատասփիւռի քարտուղար Ինկոլիին. «Քեզ մեծապէս ուրախացնող մի լուր պիտի հաղորդեմ, որովհետեւ անկեղծ կերպով հետամուտ ես մեր սուրբ հաւատքի տարածմանը: Ֆրանսիական դեսպանի հաւանութեամբ եւ հաճութեամբ, Գաղատիոյ Բերա թաղամասի մէջ մի տուն վարձեցի, հինգ աշակերտների հետ: Իմ միջոցներով կարող եմ գործը չորս տարի առաջ տանել, սակայն յաջորդաբար պէտք է Հռոմից տարեկան 200 սկուդ տրամադրուի մեզ, որպէսզի գործը հիմնաւորուի: Յոյսս դրել եմ Ձեր վրայ եւ պիտի չուզէի, որ աշակերտներս յուսախաբուեն: Կը ներէք, որ գործը այս կերպով սկսելու համար չսպասեցի Ձեր բացայայտ հրամանին, որովհետեւ առիթը այս կերպով ներկայացաւ. Տիրոջ՝ եւ ոչ թէ մեր՝ ուզած պահին: Եթէ այս դպրոցը Հռոմ փոխադրուելու լինի, այն ժամանակ անթիւ աշակերտներ կարող ենք հասցնել...: Երկու տարի է, որ գտնւում եմ հայոց մէջ եւ դրամական օգնութիւն չեմ խնդրել ձեզանից. Աստուած օգնել է ինձ հայոց ձեռքով: Բայց ներկայումս կարօտ եմ նպաստի եւ վա՜յ նրան, որ չօգնի՝ տեսնելով այսքան գործը... ես ոտքերս պիտի թօթափեմ ոչ թէ հայոց վրայ, այլ ձեր վրայ, եթէ չուզենաք նրանց դարձը»[87]:

Հաւատասփիւռի քարտուղարին ուղղուած մտերմական շեշտով գրուած այս նամակից յետոյ Գալանոսը 1643 թ. մայիսի 31-ին շարադրում է աւելի պաշտօնական նամակ՝ ուղղուած Հաւատասփիւռի կարդինալների ժողովին, որոնց հաղորդում է շատ աւելի մանրամասնութիւններ: Տեղեկացնելով, որ ստացել է նոր վարժարանը՝ գրում է, թէ աւանդում է «Հռոմէական հաւատքը, ոմանց՝ փիլիսոփայութիւն, ոմանց՝ քերականութիւն, միշտ հայերէնով, մի գործ, որ բոլորի կողմից գնահատւում է: Ինձ այնպէս է թւում, որ այս ժողովուրդը, եթէ ոչ բոլորը՝ գոնէ մասամբ, իրենց սխալների համար անմեղ են Աստուծոյ դիմաց:

84 Տե՛ս SOCG, vol. 168, f. 127:
85 Տե՛ս SOCG, vol. 168, f. 403:
86 Տե՛ս SOCG, vol. 168, f. 324:
87 Տե՛ս SOCG, v. 168, f. 318:

Սրանք չեն մերժում, երբ ճշմարիտ հաւատքի մասին իրենց լուսաբանութիւն է տրւում: Ամբողջ յանցանքը պիտի ծանրանայ մեր ուսերի վրայ, եթէ չգործակցենք: Ես իմ կողմից արեցի կարողացածս՝ ժանտախտի շրջանում կեանքս երկու անգամ վտանգի ենթարկելով...»[88]: Պոլսի Թէաթինեանների մեծաւոր Հ. Յովսէփ Ջուդիչէն, 1643 թ. յունիսի 1-ին տալով առաջին ծանօթութիւնները Գալանոսի բացած վարժարանի մասին (այն է՝ վարժարանը ունի հինգ աշակերտ, որոնց թիւը սահմանափակ է եւ նոր դիմումները մերժւում են, քանի որ Գալանոսը միջոցներ չունի նրանց պահելու), աւելացնում է. «Աչքերովս տեսայ, որ 60 տարեկան մի ծերունի գնում էր Հ. Գալանոսի մօտ՝ հայերէն քերականութիւն սովորելու համար: Հ. Գալանոսը շարադրել է հայերէնով քերականութիւն եւ տրամաբանութիւն, ու բոլորը ցանկանում են այն ունենալ. ներկայումս մօտ 30 օրինակ (իմա՛ ձեռագիր – Մ. Կ.) շրջում է մէջտեղում եւ կրօնաւորներն անգամ (իմա՛ աբեղաներ – Մ. Կ.) գնում են սովորելու նրանից»[89]:

Կ. Պոլսի վարժարանի փակումը

Մեծ եռանդով սկսուած գործը յանկարծակի կերպով ընդհատւում է. վարժարանը փակւում է, եւ Գալանոսն անակնկալ կերպով մեկնում է Հռոմ:

Եթէ փորձենք քննել վարժարանի փակուելու պատճառները, մեզ հասած փաստաթղթերում սկզբնական շրջանի վերաբերեալ գրեթէ ոչինչ հնարաւոր չէ գտնել: Ֆրանսիացի դեսպանը 1643 թ. յուլիսի 7-ին գրում է Հաւատասփիւռի քարտուղարին. «Տեսել էի վարժարանը, ուր Հ. Գալանոսը դասախօսում էր իր հայ աշակերտներին, սակայն ընթացքը կասեցուեց, որի պատճառները նոյն Հայր Գալանոսը բանաւոր պիտի բացատրի ձեզ»[90]: Յաջորդ մի նամակով՝ գրուած յուլիսի 13-ին, նոյն դեսպանը գրում է Հաւատասփիւռի նախագահ կարդինալ Բարբերինիին՝ նշելով երկու հանգամանք. նախ՝ Կիրակոս Պատրիարքի մահից եւ նրան յաջորդած Խաչատուր վարդապետի աքսորից յետոյ այլեւ յոյս չկար, որ Աթոռը ձեռք կը բերէր սպասուած փառքը: Դաւիթ պատրիարքը՝ «մեծ հերձուածողը,- ինչպէս գրում է Ֆրանսիացի դեսպանը,- ցրեց նոր վարժարանը՝ Հայր Գալանոսին մեծ նեղութիւններ պատճառելով»: Երկրորդ հանգամանքը, որի մասին Գալանոսի նախկին նամակների մէջ էլ ակնարկ կայ, այն է, որ մտածում էին աւելի մեծ արդիւնքներ ստանալ, եթէ վարժարանը, փոխանակ Պոլսում լինելու, գործէր Հռոմում: Եւ ահա, պատրիարքի ճնշումները պատճառ էին դառնում փորձելու այս երկրորդ ծրագիրը:

1643 թ. նոյեմբերի 9-ին Պոլսի Ֆրանսիացի հիւպատոսը գրում է Հաւատասփիւռի քարտուղարին. «Կղեմէս Գալանոսը մեկնեց քաղաքից, որովհետեւ հայ հերետիկոսները սպառնացել էին նրան, ու թէեւ Ֆրանսիացի դեսպանը նրա պաշտպանն է, սակայն վախից աւելի սոսկալի բան չկայ»[91]:

Այս մասին յուլիսի 13-ին Հռոմին է գրում նաեւ Պոլսի Թէաթինեանների մեծաւոր Հ. Ջուզեպէ Ջուդիչէն. «Հ. Կղեմէս Գալանոսին ուղարկում եմ Հռոմ, որպէսզի այնտեղ, եթէ Հաւատասփիւռի Ժողովը յարմար գտնի, Հայոց համար հիմնի մի վարժարան, որովհետեւ յիշեալ Հօր կողմից այստեղ՝ քաղաքիս մէջ բացուած վարժարանը, ընդառաջելով տեղի դեսպանների ցանկութեանը, զանազան պատճառներով փակուեց: Հ. Կղեմէսը իրենից առաջ Հռոմ պիտի ուղարկի մի քանի աշակերտ: Միւսներին հետը պիտի բերի՝ այնտեղ վերսկսելու համար գործը»[92]:

88 Տե՛ս SOCG, v. 168, f. 317:

89 Տե՛ս SOCG, v. 168, f. 298:

90 Տե՛ս SOCG, v. 168, f. 185:

91 Տե՛ս SOCG, vol. 168, f. 120:

92 Տե՛ս SOCG, vol. 39, f. 413:

Բացի յիշեալ վկայութիւններից, Գալանոսի՝ Պոլսից Հռոմ անցնելու առիթով գրեթէ նոյն բովանդակութեամբ գրուել են մի շարք նամակներ. այսպէս՝

ա.- 1643 թ. յուլիսի 6-ին Հ. Զուզեպէ Զուդիչէն տեղեկացնում է Հաւատասփիւռի քարտուղարին. «Հ. Կղեմէսը Պոլսից Հռոմ է մեկնում՝ այնտեղ հայկական վարժարանը բացելու համար՝ հետը տանելով ութ կամ տասը հայ աշակերտներ: Կարծում եմ՝ այս կերպ մեծ օգուտ պիտի ունենայ հայոց համար»[93]:

բ.- 1643 թ. յուլիսի 13-ին Պոլսի ֆրանսիացի դեսպանը գրում է Հաւատասփիւռի նախագահին. «Հայոց կրթութեան համար քրտնաջան աշխատելուց յետոյ Հայր Կղեմէս Գալանոսը այժմ վերադառնում է Հռոմ: Ձեզ կը բացատրի, թէ ինչու հրաժարուեց իր առաջին որոշումից: Յուսով եմ՝ կ'ըմբռնէք, որովհետեւ Հռոմի մէջ գործելը աւելի օգտակար է հայ եկեղեցին միացնելու համար, քան այստեղ՝ Պոլսում»[94]:

գ.- 1643 թ. յուլիսի 26-ին Հ. Զուզեպէ Զուդիչէն զեկուցում է Հաւատասփիւռի քարտուղարին. «Ստիպուած եղայ Գալանոսին Պոլսից հեռացնել՝ յայտնի պատճառով: Յուսով եմ՝ մեծ օգուտ կը տայ Աստուծոյ (գործին), մանաւանդ որ յիշեալ Հայրը ունի հայերէնով շարադրուած մի քանի հատոր, որոնք ուզում է տպագրել: Հետը ունի նաեւ հայեր, որպէսզի նրանց հետ հիմնի հայկական վարժարանը»[95]:

Ճշգրիտ թուականը, թէ Գալանոսը երբ է Պոլսից Հռոմ մեկնել, չունենք: Սակայն ֆրանսիական դեսպանից եւ միաբանական մեծաւորից նրան տրուած յանձնարարական գրութիւնները համապատասխանօրէն կրում են 1643 թ. յուլիսի 12 եւ 13 թուականները: Գալանոսի հետ Պոլսից մեկնում են տէր Յովհաննէս քահանան եւ Կարապետ վարդապետը[96] հանգուցեալ Կիրակոս պատրիարքի հայրն ու եղբայրը, եւ Զաքարիա անունով մեկը, որ ամենայն հաւանականութեամբ Աղամն էր[97]: Գալանոսը նախապէս Հռոմ էր ուղարկել Յովհաննէս Աբդալին: Ճանապարհորդութեան ընթացքում անցնում են Զմիւռնիայով, որի լատին առաքելական փոխանորդը՝ P. Sudiano-ն, 1643 թ. օգոստոսի 15-ին ի նպաստ Գալանոսի նամակ է ուղարկում Հռոմ՝ յարմար տեսնելով, որ Հռոմի մէջ բացուի Հայոց համար մի վարժարան: Երբ պատրաստուելու լինեն ժրաջան վարժապետներ, կարելի է ամբողջութեամբ հայերին յանձնել վարժարանի ղեկը, ու այս պատճառով շատ վաճառականներ պիտի յաճախեն Հռոմ եւ պիտի հեշտանայ եկեղեցիների միութիւնը[98]:

Հռոմի վարժարանը (Propaganda Fide)

Գալանոսի՝ Հռոմ ժամանելուց յետոյ Պոլիս է հասնում Հաւատասփիւռի քարտուղարի կողմից նրան գրուած 1643 թ. յունիսի 17-ի թուակիր նամակը, ուր կան քաջալերական տողեր՝ շարունակելու ձեռնարկը. «Գովում ենք քեզ ամեն տեսանկիւնից, քանի դեռ աշխատում ես աստուածային օրհնութեամբ եւ պտուղները արդէն իսկ տեսնում ենք»[99]:

Հաւատասփիւռի քարտուղարը հաւանաբար դժգոհութիւն էր յայտնել Պոլսի թէաթինեանների մեծաւորին Գալանոսի՝

93 Տե՛ս SOCG, vol. 170, f. 272:

94 Տե՛ս SOCG, vol. 168, f. 120:

95 Տե՛ս SOCG, vol. 168, f. 306:

96 Տե՛ս մեր «*Կարապետ Երեւանցի, Յովհաննէս Աբդալ, Բալասան, Խաչատուր եւ Ազարիա (ճգնաւորներ)*» յօդուածը (Հանդէս ամսօրեայ, 2022, էջ 253-308):

97 Տե՛ս **Կղեմէս Գալանոս**, *Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ*, հտ. 1, Հռոմ, 1650, էջ 183v-184r: Հմմտ. նաեւ մեր «*Զաքարիա Աղամ (1611-1688)*» (Հանդէս ամսօրեայ, 2020, էջ 181-228) յօդուածը:

98 Տե՛ս SOCG, vol. 39, f. 238-239:

99 Տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 204:

Հռոմ վերադառնալու կապակցութեամբ: Մեծաւորը 1643 թ. նոյեմբերի 7-ին պատասխանում է. «Գրում էք, թէ Հայր Գալանոսը չպէտք է Պոլսից Հռոմ վերադառնար, սակայն այս որոշումը կամայական կերպով չի առնուել, այլ երկար մտածուած եւ զանազան անձերի.... հետ խորհրդակցելով. եւ եթէ թուրքերից բռնուէր, ահագին գումար պիտի պահանջուէր նրա ազատութեան համար»[100]: Իսկ 1643 թ. հոկտեմբերի 2-ին նա գրել էր. «Լաւ եղաւ, որ Գալանոսը Պոլսից մեկնեց, որովհետեւ վախ կար, որ հայերը նրան էլ թունաւորէին, ինչպէս թունաւորեցին իրենց հայ պատրիարքին (իմա՛ Կիրակոսին – Մ. Կ.) եւ Դիարբէքիրի եպիսկոպոսին (իմա՛ Յովհաննէսին – Մ. Կ.)»[101]:

Հռոմ հասնելով՝ Գալանոսը սկսում է հետապնդել վարժարան բացելու ծրագիրը, եւ այս կապակցութեամբ Հաւատասփիւռի Ժողովը 1643 թ. սեպտեմբեր 26-ին գումարում է նիստ՝ քննելու ներկայացուած խնդրագիրը: Ժողովի արձանագրութիւնում ասում է. «Ընթերցուեց Պոլսի Ֆրանսիական հիւպատոսի նամակն ու յանձնարարական գրութիւնը, ինչպէս նաեւ՝ Թէաթինեանների Պոլսի մեծաւորի՝ Հ. Ջուզեպէ Ջուդիչէի գրութիւնը, եւ այս նիստին ներկայ էր հայոց միսիոներ Հ. Կղեմէս Գալանոսը, որ չորս հայ աշակերտներով եւ Mengrello անունով մի մանկան հետ[102] փախել է Պոլսից՝ տեղի հայ հերետիկոս պատրիարքի հալածանքներից: Այժմ խնդրանք է ներկայացնում, որ իր այս չորս աշակերտները ընդունուեն Ուրբանեան վարժարան, որպէսզի երեք տարուայ համար նրանց հայերէնով դասաւանդուի փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն, եւ ապա վերադառնան իրենց հայրենիքը: Ժողովն ընդունում է Հ. Գալանոսի խնդրանքը՝ տալով սովորական գումար ապրուստի եւ զգեստի համար: Իսկ մանուկը թող տեղադրուի Յոյների վարժարանը»[103]: Ընդունուած որոշումը Հաւատասփիւռի քարտուղարը հաղորդում է թէ՛ Թէաթինեանների Հ. Ջուզեպէ Ջուդիչէ մեծաւորին եւ թէ՛ Պոլսի Ֆրանսիական դեսպանին, որին յայտնում է նաեւ շնորհակալութիւն ոչ միայն Գալանոսին պաշտպանած լինելու համար, այլ նաեւ՝ խորհուրդ տալու եւ թելադրանքի, որ նա Պոլիսից Հռոմ փոխադրուի[104]:

Չորս աշակերտների՝ Ուրբանեան վարժարան մտնելով՝ հարց է առաջանում նրանց ծէսի պահպանման վերաբերեալ: Գալանոսը լաւ տեղեակ էր հայ եկեղեցու աւանդութեանը եւ ծէսին եւ գիտէր՝ եթէ Հռոմի մէջ աշակերտները չպահէին Հայ եկեղեցու սեփական օրէնքները, աւանդութիւնն ու ծէսը, ոչ միայն անպտուղ պիտի լինէր իր ձեռնարկը, այլեւ գայթակղեցուցիչ ուրիշների համար, եւ նրանք պիտի լատինանային: Շատ հաւանական է՝ Գալանոսը շօշափել էր այս թեման, որ այն քննարկման նիւթ է դառնում Հաւատասփիւռի 1643 թ. նոյեմբերի 6-ի նիստում՝ չորս աշակերտների՝ Ուրբանեան վարժարան մտնելուց մի ամիս յետոյ: Նոյն ժողովի արձանագրութիւնը տեղեկացնում է. «Նկատելի է, որ հայերին չի կարելի կրթել լատինների հետ, մանաւանդ որ տարբեր ծէսերի են պատկանում եւ այս ճանապարհը

100 Տե՛ս SOCG, vol. 170, f. 368:

101 Տե՛ս SOCG, vol. 168, f. 309+310:

102 1644 թ. ապրիլի 25-ով թուագրուած իր խնդրագրում Գալանոսը յայտնում է, որ մտադիր է վերադառնալ Արեւելք եւ ցանկանում է Հռոմում թողնել այն մանկանը, որին իր հետ բերել էր Արեւելքից: Քանի որ տղայի մայրը թուրք էր, վտանգաւոր էր վերադարձնել նրան Արեւելք: Ուստի խնդրում է, որ մի որոշ ամսական վճար նշանակուի նրան, մինչեւ որ Հռոմի մէջ կը բացուի Հայոց վարժարանը եւ մանուկը կը փոխադրուի այնտեղ (տե՛ս SOCG, vol. 408, f. 136): Հաւատասփիւռի Ժողովը որոշում է մանկանը ամսական 2 սկուդ ծախսով դնել որբանոց, մինչեւ մեծանայ եւ փոխադրուի ուրիշ վարժարան (տե՛ս Acta, vol. 16, f. 75, n. 10):

103 Տե՛ս CP, vol. 9, f. 60-61, n. 10

104 Տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 276, 277:

խափանում է (եկեղեցիների) միութիւնը, ուստի որոշուեց, որ երեք կարդինալներ քննեն այս հարցը՝ թէ արդեօք պէ՞տք է Հայոց համար մի առանձին վարժարան հաստատել կամ ոչ»[105]:

Հաւանաբար կարդինալների քննարկումը որեւէ դրական արդիւնք չի տուել, եւ Գալանոսը շարունակել է դասաւանդել Ուրբանեան վարժարանում, նախ չորս աշակերտին եւ ապա՝ երեքին՝ Անտոնի հեռանալուց յետոյ: Մնացած երեք աշակերտներից երկուսը՝ Գրիգոր-Փիլիպոսը եւ Յովհաննէս Աբդալը, վարժարանը թողնում են 1645 թ. սեպտեմբեր ամսին: Նոյն տարուայ (1645) յունուարի 11-ին Թէաթինեանների գործակալ P. Carlo de Palme-ն Հաւատասփիւռի Ժողովին է ներկայացնում մի խնդրագիր՝ հետեւեալ բովանդակութեամբ. «Հ. Կղեմէս Գալանոսը, չկարողացաւ Արեւելքում հայերին սովորեցնել հաւատքը եւ ուղղափառութիւնը: Իր աշակերտները ընդունուեցին Հաւատասփիւռի վարժարանը, որոնք հայերէնով դաս են առնում Հ. Գալանոսից, եւ Ս. Ժողովը իւրաքանչիւրին վճարում է 7 սկուդ: Բայց որովհետեւ ներկայումս նոյն նպատակով այլ հայեր էլ են եկել Հռոմ՝ եւ Հաւատասփիւռի մէջ նրանց համար տեղ չկայ, առաջարկւում է, որ նոյն գումարով բոլոր աշակերտները փոխադրուեն Ս. Մարիամ Եգիպտացու եկեղեցին, ուր կը շարունակեն նոյն ուսումը եւ հայերէնով կը կատարուեն Ս. Խորհուրդները: Այնտեղ կարող է փոխադրուել նաեւ Գալանոսը՝ նրանց ուսուցիչը՝ օգնական ունենալով իր միաբանութիւնից որեւէ մէկին: Նրանցից իւրաքանչիւրի համար կարելի է սահմանել տարեկան 20-50 սկուդ, ու այս կերպով աւելի օգուտ կը լինի հայ ազգին»[106]: Նոյն այս հարցը քննութեան է առնւում նաեւ Հաւատասփիւռի մի յատուկ ժողովում՝ 1645 թ. յունուարի 15-ին եւ շատ վճռական ու չոր գրով մերժւում է՝ մեզ անյայտ պատճառով[107]:

Հաւատասփիւռի չորս աշակերտներից առաջինի անունն է Անտոն, որը Գալանոսի առաջնորդութեամբ սկսում է սովորել քերականութիւն: Սա 1644 թ. հոկտեմբերի 23-ին, «իբր ուսման անկարող», հեռացւում է վարժարանից: Վարժարանից հեռանալիս Անտոնը հետեւեալ խնդրագիրն է ներկայացնում Հաւատասփիւռի Ժողովին. «Անտոն, Ուրբանեան վարժարանի աշակերտ, աւարտած լինելով կրթութիւնը՝ պիտի վերադառնայ հայրենիք, համաձայն իր տուած խոստմանը քարոզելու կաթողիկէ հաւատքը: Հիմա խնդրում է ճանապարհածախս, ինչպէս նաեւ մի որոշ գումար՝ փոխելու դպրոցական զգեստները»[108]: Անտոնի փոխարէն ուրիշ մի հայ խնդրագիր է ներկայացնում՝ գրաւելու նրա տեղը Ուրբանեան վարժարանում. «Domenico di Giovanni Battista armeno, լսած լինելով, թէ Անտոն հայը Ուրբանեան վարժարանից պիտի վերադառնայ հայրենիք, խնդրում է գրաւել նրա տեղը, եւ կամ երկարաձգել իր ամսական վճարը»[109]: Հաւատասփիւռի 1644 թ. հոկտեմբերի 14-ի նիստում հրաման է տրւում, որ այս 17 տարեկան պատանին, որ Հռոմ էր հասել Ղրիմից ու գիտէր հայերէն, քրդերէն եւ թաթարերէն, ընդունուի Ուրբանեան վարժարան[110]:

Երկրորդ աշակերտի անունը Գրիգոր-Սարգիս էր, որ 1645 թ. սեպտեմբերի 19-ին հեռանում է վարժարանից, ու նոյն օրուայ

105 Տե՛ս Acta, vol. 15, f. 465, n. 27:
106 Տե՛ս SOCG, memoriali, vol. 407, f. 198:
107 Տե՛ս Acta, vol. 16, f. 213, n. 9:
108 Տե՛ս SOCG, vol. 408, f. 15:
109 Տե՛ս SOCG, vol. 408, f. 13:
110 Տե՛ս Acta, vol. 16, f. 158, n. 36:

Հաւատասփիւռի Ժողովի նիստով նրա համար սահմանւում է 30 սկուդ, որպէսզի վերադառնայ Կ. Պոլիս[111]:

Գրիգորն, իբրեւ սարկաւագ, 1654 թ. Հալէպում էր, որտեղից գրում է Հռոմ, մի բարեկամի, որը Գրիգորի կողմից ներկայացնում է հետեւեալ խնդրագիրը. «Գրիգոր հայ սարկաւագ, անցեալում աշակերտել է Ուրբանեան վարժարանին, այժմ հաստատուած լինելով Հալէպում, փափագելով մի կաթողիկէ եպիսկոպոսից ստանալ քահանայական ձեռնադրութիւնը եւ իմանալով, թէ Կեսարիայի Ներսէս եպիսկոպոս Կապադովկիացին նրանցից մէկն է, որ կաթողիկէ հաւատքի համար շատ հալածանք է կրել եւ

111 Տե՛ս Acta, vol. 16, f. 427, n. 4: Տեղին ենք համարում քննարկել Ֆր. Գրիգոր դոմինիկեան, նախկին անունով՝ «Գրիգոր Սարգիս Կիրակոսենց» մեկ այլ անձի վերաբերեալ տեղեկութիւնները՝ շփոթութիւնից խուսափելու համար: Հաւատասփիւռի Ժողովի 1645 թ. մայիսի 9-ի նիստում որբանոցում գտնուող Գէորգ-Սարգսի համար տրամադրւում է գումար անկողին գնելու համար՝ պայմանով, որ աշակերտը Ուրբանեան վարժարան փոխադրուելիս իր հետ տեղափոխի նաեւ անկողինը (տե՛ս Acta, vol. 16, f. 295, n. 5): 1648 թ. դեռ Հռոմում էր, եւ յայտնի է դառնում, որ ծագումով Պոլսից էր: Երբ Պոլսի պատրիարք Թովմա Բերիացին Լիվոռնոյում էր, տեղական կանոնիկոս Վիտորիո Բորջին, ընդարձակ տեղեկութիւններ յայտնելով Թովմայի մասին, աւելացնում է, որ ովքեր ցանկանում են լրացուցիչ տեղեկութիւններ ստանալ, կարող են դիմել «Հռոմում գտնուող Գէորգ-Սարգսին, Անտոնին եւ (Ուրբանեան դպրոցի) այլ աշակերտների» (տե՛ս SOCG, vol. 293, f. 165-166): Գէորգ-Սարգիսը Ուրբանեան վարժարան էր մտել 1651 թ. փետրուարի 12-ին, 16 տարեկանում: 1657 թ. յունիսի 11-ով թուագրուած նրա խնդրագիրն ունի հետեւեալ բովանդակութիւնը. «(Ուրբանեան վարժարանի) հայազգի Գէորգ-Սարգիս աշակերտը, անկարող գտնուելով վերացական ուսումների նկատմամբ եւ չկարողանալով հայրենիք վերադառնալ, որովհետեւ հայրը թուրքացած լինելով, սպառնում էր սպանել ոչ միայն որդուն, այլեւ նրան Հռոմ տանողին էլ, իր մէջ զգալով դոմինիկեան կոչում՝ հրաման է հայցում անդամակցելու այդ կարգին» (տե՛ս SOCG, vol. 313, f. 128): 1657 թ. յունիսի 14-ի Հաւատասփիւռի Ժողովի նիստում, որին ներկայ էր Աղեքսանդր Է. պապը, նրան հրաման է տրւում անդամակցելու դոմինիկեան միաբանութեանը (տե՛ս Acta, vol. 26, f. 113, n. 4): 1630 թ. յուլիսի 30-ին նա նոր խնդրագրով հայցում է մի որոշ գումար՝ զգեստները թարմացնելու համար (տե՛ս SOCG, vol. 313, f. 129): Իսկ 1657 թ. հոկտեմբերի 1-ի երրորդ խնդրագրով հրաման է խնդրում մնալու աշխարհական զգեստով, մինչեւ դոմինիկեան մեծաւորը իրեն ուղարկի նորընծայութեան համար նախատեսած վանքը (տե՛ս SOCG, vol. 313, f. 127): Երկար լռութիւնից յետոյ 1673 թ. նրան գտնում ենք Պոլսում: Խիստ հրապուրիչ է հաւատալ, որ Գէորգ-Սարգիսը, դոմինիկեան կարգին յարելով, անունը փոխել է եւ կոչուել ֆր. Գրիգոր: 1673 թ. սեպտեմբերի 1-ին Պոլսոյ պատրիարք Յովհաննէս ամասիացին, գրելով Հաւատասփիւռի Ժողովին, ի միջի այլոց ասում է. «Դարձեալ յայտնի եղիցի ձերում մեծափառութեանդ, զի ոմն տօմինիկան Գրիգոր անուն, քահանայ ազգաւ հայ, որ ի մանկութենէ իւրմէ մտեալ է ի կարգ սուրբ Տոմինիկոսի, բայց յառաջ քան զլինիլն տօմինիկան ի դպրատանն Տէ պրոպականտա ֆիտէի ուսեալ է ժամանակ ինչ, իսկ այժմ ի Ղալաթիոյ մերձ ի Կոստանդինուպոլիս. զքահանայութեան գործք յոյժ սաստկաւ ջերմեռանդութեամբ առնէ, զանձն ի մահ մատնեալ սակս Քրիստոսի» (տե՛ս SOCG, vol. 446, f. 61, նամակն ամբողջութեամբ տե՛ս յաւելուածում): Երկու տարի յետոյ՝ 1675 թ. յունուարի 11-ին, Յովհաննէս ամասիացին կրկին դիմում է Հռոմ. «Մօրմէն Սարգիս եւ այժմ տօմինիգանս Տէր Գրիգոր Կիրակոսենց»-ի խնդրով: Շեշտելով վերջինիս ջերմեռանդ հոգեւոր սպասաւորութիւնը Պոլսում, լեզուների իմացութիւնը («ընդունակ է բազում լեզուի, այսինքն՝ մառօնի, հապաշի, լեհացի, ուռուսի, ասորւոյ այլ»)՝ խնդրում է հրամայել «խղճագոյն պատրիս ոչ շարժիլ ի յայս տեղացս որ կայ, այսինքն ի Ղալաթիա», քանի որ «մեր ինքնին աչօք մերօք տեսաք, որ առաքելաբար կու շրջի եւ կու ուսուցանէ եւ կու յորդորէ զամենեսեան յուղղափառութիւն» (SOCG, vol. 446, f. 391r: Նամակն ամբողջութեամբ տե՛ս յաւելուածում): Վեց տարի յետոյ՝ 1681 թ. յուլիսի 23-ին, Հռոմի դոմինիկեան միաբանութեան մեծաւորին առանձին նամակով դիմում են Նախիջեւանի գաւառը լքած եւ Փոքր Ասիայի արեւմտեան շրջաններ («ի կողմանս Կոստանդնուպոլսոյ, Պրուսայու եւ յի Զմիւռնիոյ լիկէացւոց») ապաստանած 500 հայ կաթողիկէներ՝ խնդրելով «Գրիգոր Զիրաչէնսիս»-ին իրենց հոգեւոր հովիւ կարգել (տե՛ս SC Romania, vol. 2, f. 245r: Նամակն ամբողջութեամբ տե՛ս Յաւելուածում):

կապուած է Ս. Աթոռին՝ ցանկանում է վերանորոգել իր թղթակցութիւնը: Գրիգոր սարկաւագը խնդրում է, որ Ս. Աթոռը բարեհաճի գրել նոյն եպիսկոպոսին, հրաման տալով, որ կատարի ձեռնադրութիւնը, ցոյց տալով իր բարեհաճութիւնը Ս. Աթոռի հանդէպ ունեցած համակրանքի եւ յանուն Հռոմէական հաւատքի համար կրած հալածանքների»[112]: Հաւատասփիւռի Ժողովի 1654 թ. մարտի 17-ի նիստում որոշւում է դրական պատասխանել Ներսէս եպիսկոպոսին՝ ձեռնադրութեան հրաման տալով, գովելով իրեն իբրեւ կաթողիկէ եկեղեցու արժանաւոր անձ, քաջալերելով, որ Աստուծոյ փառքի եւ եկեղեցու պայծառութեան համար սիրով տանի հալածանքները»[113]: Նոյն այս վճիռը գտնում ենք օրինակուած պաշտօնական արձանագրութիւնների հատորում[114]: Նոյն ամսաթուով, այն է՝ 1654 թ. մարտի 17, Հաւատասփիւռի Ժողովի նախագահի կողմից գրւում է նամակ՝ Ներսէս եպիսկոպոսին յանձնելով Գրիգոր սարկաւագի խնամքը[115]:

Նոյն այս Գրիգոր վարդապետին (Dottore e predicatore armeno) 1666 թ. գտնում ենք Հռոմում, ուր խնդրագիր է ներկայացնում Լիվոռնոյի հայոց համար կառուցելու եկեղեցի, որտեղ կը կարողանայ կաթողիկէ եկեղեցու ուզած ձեւով արարողութիւններ կատարել[116]: Հաւատասփիւռի ժողովի 1666 թ. յունիսի 8-ի նիստի արձանագրութեան մէջ մի անգամ եւս յիշւում է, թէ սա, անցեալում Կղեմէս Գալանոսի հետ Պոլսից Հռոմ գալով, աշակերտել է Ուրբանեան վարժարանում, 1654 թ. ձեռնադրուել է Ներսէս եպիսկոպոսի կողմից: Խնդրագիրը մերժւում է[117]:

Երրորդ աշակերտի անունն է Գրիգոր-Փիլիպոս: Սա 1645 թ. սեպտեմբերի 19-ին դուրս է գալիս Ուրբանեան վարժարանից ու յաջորդաբար խնդրանք է ներկայացնում՝ անդամակցելու Յիսուսեան կարգին: 1646 թ. փետրուարի 3-ին Հաւատասփիւռի յատուկ ժողովի ժամանակ որոշւում է վկայական տալ, որպէսզի ձեռնադրուի Նիկոլ Արքեպիսկոպոսի կողմից Լէոպոլսի մէջ[118]: 1646

112 Տե՛ս SOCG, vol. 292, f. 415:

113 Տե՛ս Acta, vol. 23, f. 26, n. 9:

114 Տե՛ս SOCG, vol. 223, f. 245:

115 Տե՛ս Lettere volgari, vol. 30, f. 11: Հաւատասփիւռի 1662 թ. յունիսի 12-ի նիստի արձանագրութիւններից տեղեկանում ենք, որ երբ Հռոմը փնտրում էր մի հայ եպիսկոպոսի, որը կը յաջորդէր լեհահայոց Նիկոլ Թորոսովիչին, հարցնում են Picquet-ին: Վերջինս տալիս է հետեւեալ տեղեկութիւնը՝ արձանագրուած յիշեալ նիստի սղագրի մէջ. «Երբ հարցուեց Picquet-ին, թէ ճանաչո՞ւմ է ուրիշ հայ եպիսկոպոս, ակնարկեց Ս. Ժողովին ծանօթ մի հալէպցի Ներսէսի, որ նախկինում իրեն ուղարկեց մի հայ երիտասարդի, որպէսզի նոյն ծէսով քահանայ ձեռնադրի: Սա կաթողիկէ է եւ բարի վարքով, սակայն լատիներէն կամ ուրիշ եւրոպական լեզու չգիտի: Պատրիարքից (իմա՛ կաթողիկոսից – Մ. Կ.) եւ նրա համակիրներից կաթողիկէ ճանաչուած լինելով, եւ այն պատճառով, որ նրանց հետ չէր համաձայնած, որոնք պնդում էին իրենց հետ համաձայնել, իր Աթոռից վռնդուել է եւ քաշուել Փոքր Ասիոյ Սինվադ (Sinnuuat) հայ կրօնաւորների մի վանք, ուր ընտրուել է իբր առաջնորդ եւ ցարդ ապրում է՝ մեծ պատիւ գտնելով տեղի փաշայից, որ դիմադրել է կաթողիկոսին, որպէսզի չնեղի եպիսկոպոսին» (տե՛ս Acta, vol. 31, f. 145-147, n. 38. նոյնը հմմտ. SOCG, vol. 225, f. 60):

1662 թ. յուլիսի 16-ին Picquet-ն գրում է Հաւատասփիւռի նախագահին. «Ինձ հարցում ես անում Հալէպի հայ եպիսկոպոսի մասին: Պատասխանս այս է. նա դժուարութիւն պիտի ստեղծի՝ ստորագրելու հաւատոյ դաւանութեան ամբողջ բանաձեւը. բաւական է, որ Հալէպ գտնուի, որովհետեւ Հալէպից մեկնած պահիս ինքն ալ ճանապարհորդ էր, եւ տարակուսում էր, թէ կաթողիկոսը իրեն այդ քաղաքում պահի, սակայն հաստատ լուր չունեմ այս մասին: Նոյն հայ եպիսկոպոսը Հալէպի մէջ ծանր պարտքերի տակ էր: Այժմ Փոքր Ասիայի հայերին դիմեց, որպէսզի դրամ հաւաքի, ապա թէ ոչ՝ բանտ պիտի ընկնէր: Դուք 200 սկուդով կարող էք մեծագոյն օգուտն անել իրեն: Բայց ձեզանից դրամ ուզելուց այլեւս քաշւում եմ» (Տե՛ս SOCG, vol. 223, f. 128):

116 Տե՛ս SOCG, vol. 223, f. 244:

117 Տե՛ս Acta, vol. 35, f. 144, n. 5:

118 Տե՛ս CP, vol. 9, f. 86, n. 8:

Թ. մարտի 13-ի նիստով խնդրանքն ընդունւում է՝ պայմանով, որ քահանայական ձեռնադրութիւնից յետոյ սահմանուի մեկնել Արեւելք՝ իբրեւ քարոզիչ[119]:

Զորրորդ աշակերտն է Յովհաննէս Աբդալը, որի մասին ակնարկեցինք վերեւում[120]:

Հինգերորդ աշակերտն է Զաքարիա Աղամը, որի մասին առանձին խօսել ենք առանձին[121]:

Այս կերպով փակւում է Գալանոսի գործունէութեան առաջին շրջանը՝ 1641-1645 թթ., հինգ երկար տարիներ, երբ հայկական վարժարանի կառուցման ուղղութեամբ որեւէ դրական արդիւնք չեղաւ: Պոլսում առաջին յաջողութիւններից ոգեշնչուած՝ երազել էր նոյնը իրագործել Հռոմում՝ հարիւրապատիկ աւելի մեծ արդիւնքների ակնկալութեամբ, սակայն փորձը ձախողուել էր:

Այնուհետեւ Գալանոսը դադարում է յաճախել Ուրբանեան վարժարան իբրեւ ուսուցիչ, սակայն չի դադարեցնում իր գործունէութիւնը:

ԿՂԵՄԷՍ ԳԱԼԱՆՈՍԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ (1646-1666)

Պոլիսից եկող աշակերտները

Գալանոսը Պոլսից մեկնելիս թէեւ ծրագիր ունէր ութից տասն աշակերտ հետը տանելու Հռոմ, սակայն միայն չորս հոգի վերցրեց, որոնցից մեկին նախ ուղարկեց առանձին (Յովհաննէս Աբդալ) եւ միւս երեքը նրան ուղեկից եղան: Պոլսում կային աշակերտներ, որոնք ուզում էին հասնել Գալանոսի ետեւից՝ շարունակելու իրենց ուսումը:

Պոլսի Թէաթինեանների մեծաւոր Հ. Զուզեպէ Զուդիչէն 1643 թ. հոկտեմբերի 2-ին գրում է Հաւատասփիւռի քարտուղարին. «Ինձ մօտ եկան հինգ հայեր, որոնք ուզում են աշակերտել Գալանոսին եւ ճանապարհ են ելնելու դէպի Հռոմ: Նրանց գլխաւորն է տէր Թոմասը, որ այստեղ աշակերտեց Գալանոսին: Դեռ քսանի չափ էլ երիտասարդներ կան, որոնք ճանապարհ պիտի ելնեն, հէնց իմանան, թէ Հռոմի մէջ բացուել է վարժարանը: Այս հինգը կատարեալ կերպով գիտեն հայերէն, թուրքերէն, արաբերէն եւ պարսկերէն»[122]:

Որ վերեւում գրուածը պահի ազդեցութեան արդիւնք չէ, երեւում է նրանից, որ շուրջ 5 ամիս յետոյ՝ 1644 թ. փետրուարի 18-ին, դարձեալ նոյն նիւթի մասին գրում է. «Այստեղ հայերից հինգ հոգի ուզում են Հռոմ մեկնել՝ Գալանոսից գիտութիւն ստանալու: Ես չանում եմ դանդաղեցնել նրանց ընթացքը, որպէսզի չծանրանան Հաւատասփիւռի Ժողովի վրայ, սակայն նրանք վճռական են եւ ուզում են մեկնել ցամաքային ճանապարհով: Նրանց գլխաւորն է Գալանոսի ծանօթներից տէր Թոմաս վարդապետը, որ հերետիկոս պատրիարքի (իմա՛ Դաւիթ պատրիարք – Մ. Կ.) հետ վէճեր է ունեցել ի նպաստ կաթողիկէութեան. սա ասաց, թէ իր չորս ընկերները լաւ կարողութեամբ օժտուած են եւ եթէ ուսումը կատարելագործեն, կարող են օգտակար լինել հոգիներին: Պատանիներից մեկի հայրը վախից թուրքացել է, ուստի որպէսզի նրա տասը տարեկան եղբայրն էլ չթրքանայ, հետը պիտի Հռոմ տանի՝ Գալանոսին յանձնելու համար»[123]:

Նամակագիրը ողջամիտ էր դատում եւ գիտէր, որ հայ աշակերտների թիւը Հռո-

119 Տե՛ս Acta, vol. 17, f. 46, n. 5:

120 Յովհաննէս Աբդալի մասին տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Կարապետ Երեւանցի, Յովհաննէս Աբդալ, Բալասան, Խաչատուր եւ Ազարիա (ճգնաւորներ)*,- Հանդէս ամսօրեայ, 2022, էջ 266-285:

121 Աւելի մանրամասն տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Զաքարիա Աղամ (1611-1688)*,- Հանդէս ամսօրեայ, 2020, էջ 181-228:

122 Տե՛ս SOCG, vol. 168, f. 309-310:

123 Տե՛ս SOCG, vol. 170, f. 370-371:

մում անակնկալ կերպով աւելանալու դէպքում կարող էին անյարմարութիւններ առաջանալ, մանաւանդ որ Հաւատասփիւռի Ժողովն ունէր իր օրէնքները եւ Ուրբանեան վարժարան ընդունում էր իւրաքանչիւր ազգից սահմանափակ թուով աշակերտներ, որպէսզի զանազան ուղղութիւններով կարողանար օգտակար լինել զանազան ազգերի: Այս պատճառով Հ. Ջուզեպէ Ջուդիչէն շարունակում է գրել Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին. «Խորհուրդ եմ տալիս, որ թէ՛ դուք եւ թէ՛ Հռոմի մեր ընդհանրական մեծաւորը ընտրէք չորս անձի, որոնք Գալանոսից սովորեն հայերէն եւ այստեղ (Կ. Պոլիս – Մ. Կ.) գալով աստուածաբանութիւն դասաւանդեն: Սա է միակ ճանապարհը, գոնէ մասամբ, հայերին մեր հաւատքին բերելու համար, քանի նրանք գիտութեան մեծ ծարաւ ունեն եւ կախուած են իրենց վարդապետների բերանից: Շատ դժուար է Գալանոսի նմանը գտնել, քանի որ շատ լաւ գիտի հայոց լեզուն եւ գտել է նոյն լեզուի սխոլաստիկ բառամթերքը, մի բան, որ մինչեւ հիմա չէր եղել եւ այստեղ զարմացրել է բոլորին, բացի իմաստասիրութիւնից եւ աստուածաբանութիւնից, որ կատարեալ կերպով գիտէ. այսքան գիտութիւն մեկ անձի մէջ՝ դիւրին չէ գտնել: Արդ, չորս հոգի իրենից թող սովորեն հայերէն, որոնցից երկուսը մեկնեն Երեւան՝ կաթողիկոսի մօտ, եւ միւս երկուսը նստեն Պոլսում՝ Հայոց դարձի համար»[124]:

Հ. Ջուզեպէ Ջուդիչէի 1644 թ. փետրուարի 18-ով թուագրուած նամակը քննարկւում է Հաւատասփիւռի 1644 թ. ապրիլի 25-ին գումարուած նիստում, ուր եղած առաջարկը բանաւոր գտնելով, որոշւում է դիմել թէաթինեանների Հռոմի ընդհանրական մեծաւորին, որպէսզի միաբանութիւնից տրամադրի չորս միաբան Գալանոսի առաջարկութեամբ հայերէն սովորելու համար[125]: Նոյն այդ լուրը Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարը 7 մայիս 1644 թուակիր նամակով հաղորդում է Հ. Ջուզեպէ Ջուդիչէին, որպէսզի նա սկսի որոշման գործադրութիւնը[126]: Սակայն դիւանում այս որոշման գործադրութեան որեւէ հետք չգտանք:

Գալանոսի պարագայական աշակերտները Ուրբանեան վարժարանից դուրս

Գալանոսի՝ Պոլսից բերած չորս աշակերտներից երեքի հեռանալուց յետոյ մնում է միայն Յովհաննէս Աբդալը, ու միայն վերջինիս համար չարժէր, որ Գալանոսն ամեն օր գնար Ուրբանեան վարժարան՝ դասաւանդելու:

Գալանոսի վանքը Հռոմում գտնւում էր S. Andrea della valle-ում, այսինքն՝ թէաթինեանների մայր տանը: Այն բոլոր հայ աշակերտները, որոնք պարագայական կերպով գալիս էին Հռոմ, Հաւատասփիւռի հրամանով յաճախում էին Գալանոսի մօտ՝ լրացնելու իրենց ուսումը: Այս աշակերտների թիւը 1646 թուականին շատ նուազ էր՝ հազիւ 4 հոգի: Նրանց մասին այստեղ ծանրանալով՝ թէեւ կարող ենք չափազանց շեղուել մեր նիւթից. սակայն ցանկանում ենք առանձին ուսումնասիրել նրանց կենսագրութիւնները՝ տալով կեանքի մանրամասնութիւնները եւ ցոյց տալով նրանց կեանքը Գալանոսին հանդիպելուց առաջ եւ յետոյ:

Գալանոսի աշակերտները, մեր ունեցած աղբիւրների համաձայն, հետեւեալներն են.

1. Յովհաննէս Աբդալ. աշակերտել է Գալանոսին դեռ Պոլսում 1642 թ., ապա՝ Ուրբանեան վարժարանում՝ 1643-1645 թթ.

124 Տե՛ս SOCG, vol. 170, f. 370-371:

125 Տե՛ս Acta, vol. 16, f. 87, n. 42:

126 Տե՛ս Lettere volgari, vol. 22, f. 77:

եւ Աստուածաբանութեան համար՝ 1647-1650 թթ.:[127]

2. Կարապետ Վրդ. Երեւանցի. *Պոլսի Կիրակոս պատրիարքի եղբայրը, որ Գալանոսի հետ 1643 թ. ամռանը եկել էր Պոլիսից: Յաճախում է Գալանոսի դասերին 1647-1651 թթ.՝ կատարելագործելու աստուածաբանական գիտելիքը:*[128]

3. Բալասան (Պաղտասար). *Սպահանից էր: Նախ յաճախում է Ուրբանեան վարժարան եւ ապա 1646-1648 թթ. Գալանոսի մօտ սովորում է աստուածաբանութիւն՝ այդպէս էլ չաւարտելով:*[129]

4. Գրիգոր Ծործորեցի *(Նախիջեւանի միաբան եղբայր). 1647-1649 թթ. Օգոստինոս Բաջենցի խնդրանքով յաճախում է Գալանոսի մօտ՝ հայերէնով աստուածաբանութիւն ուսանելու:*[130]

5. Թոմաս Վրդ. Բերիացի *(Պոլսի ընտրեալ պատրիարք), 1648 թ. Հռոմից անցնելիս խնդրանք է ներկայացնում Հաւատասփիւռի Ժողովին վեց ամիս աշակերտելու Գալանոսին: Նոյն խնդրանքը Թոմաս վարդապետը ներկայացնում է նաեւ իրեն ընկերացող սարկաւագի համար:*[131]

6. Զաքարիա Աղամ. *Յիշւում է, որ Յովհաննէս Աբդալից առաջ աշակերտել է Գալանոսին կամ Ուրբանեան վարժարանում 1643-1645 թթ. եւ կամ անմիջապէս յետոյ՝ 1645-1646 թթ.:*[132]

Այս համառօտ ցանկից երեւում է, որ Գալանոսի դասաւանդութեան շրջանը համընկել է 1646-1649 թթ. եւ միշտ ընթացել է Հաւատասփիւռի Ժողովի հսկողութեան ներքոյ:

Գալանոսը նոյն տարիներին կատարում էր նաեւ թարգմանի պաշտօն՝ հայերէն նամակները թարգմանելով իտալերէնի եւ կամ տեղեկութիւններ հայթայթելով իր ճանաչած անձերի մասին, որոնք դիմում էին Հաւատասփիւռի Ժողովին: Կայ նաեւ տէր Զաքարիա Աղամի բացատրութիւնը Լէոպոլսից՝ գրուած 1647 թ. օգոստոսի 28-ով թուակիր նամակում, հասցէագրուած Հաւատասփիւռի Ժողովին: Ակնարկում է Նիկոլ Արքեպիսկոպոս Թորոսովիչին, իբր իրեն խաբէութեամբ իր մօտ է պահում՝ ասելով, թէ գրել է Հաւատասփիւռի Ժողովին եւ խնդրել, որ Գալանոսը մեկնի Լէոպոլիս,

127 Յովհաննէս Աբդալի մասին տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Կարապետ Երեւանցի, Յովհաննէս Աբդալ, Բալասան, Խաչատուր եւ Ազարիա (ճգնաւորներ)*,- Հանդէս ամսօրեայ, 2022, էջ 266-285:

128 Կարապետ Վրդ. Երեւանցու մասին աւելի մանրամասն տե՛ս նոյն տեղում, էջ 256-266:

129 Բալասանի մասին աւելի մանրամասն տե՛ս Նոյն տեղում, էջ 285-293:

130 Գրիգոր Ծործորեցուն Նախիջեւանից Ապարաների վանքի մեծաւոր Մատթէոս Յովհաննէսեանի հետ 1646 թ. Հռոմ էր ուղարկել տեղի հայ կաթողիկէ համայնքի ղեկավար Աւգուստին Բաջեցին (տե՛ս վերջինիս նամակը Ուրբանոս Ը. պապին, 1646 թ. ապրիլ 1,- SOCG, vol. 65, f. 310r): Նոյն օրով թուագրուած եւ Հաւատասփիւռի քարտուղար Ֆր. Ինկոլիին հասցէագրած նամակում Բաջեցին ներկայացնելով գաւառում տիրող ծանր վիճակը շարունակում է. «Եղբարքս ուսման հետ չեն վասն պակասութեան աշխարհիս, որ *թէ ասէք պիտոյ է լատին կարդան. առաջ պիտոյ է մեր լեզուն լաւ իմանան եւ արտաքին բանի վերահաս լինին, որ յետոյ լաթին շուտով իմանան*»: Բաջեցին Գրիգոր Ծործորեցուն յանձնարարելով Ինկոլիին («Տէր Գրիքորն արէկ հօտ վասն ուսման՝ օգն կենաս, որ լաթին ուսնի»), աղերսում է «վասն վերոյ գրեալ պատրի ֆրա Գրիգորն փոքր մի արտաքին բանի տեղեակ է մերս լեզու, *տաս ի պատրի ֆրա Կլէմէնդն*, որ լատին եւ մերոյ լեզու ուսուցանէ, զի *սէր դորա այդ է*» (տե՛ս SOCG, vol. 65, ff. 312f եւ 313r): Աւգուստին Բաջեցու այս նամակների ամբողջական հրատարակութիւնը տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Նորայայտ փաստաթղթեր Նախիջեւանի ԺԷ. դարի առաջին կէսի պատմութեան վերաբերեալ. Օգոստինոս Բաջենց (1584-1653)*,- Հայաստանի պատմութեան նիւթեր Կենտրոնական Եւրոպայի դիւաններում, Երեւան, 2001, էջ 57-61:

131 Թոմաս Բերիացու մասին մանրամասն տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Կ. Պոլսի պատրիարքներ Թովմա Վրդ. Բերիացի (1603-1658) եւ Դաւիթ Բերիացի (՞-1679)*,- Հանդէս ամսօրեայ, 2019, էջ 297-376:

132 Աւելի մանրամասն տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Զաքարիա Աղամ*, էջ 181-228:

որպէսզի տէր Զաքարիա Աղամի հետ հիմնի հայկական դպրոց[133]:

Հաւատասփիւռի Ժողովի 1648 թ. սեպտեմբերի 30-ի մասնաւոր մի նիստում որոշում է յայտնել Հռոմի թէաթինեանների ընդհանրական մեծաւորին, որ յանկարծ անակնկալ կերպով կարգադրութիւններ չանի եւ Գալանոսին չհեռացնի Հռոմից, որպէսզի վերջինս մնայ Հաւատասփիւռի տրամադրութեան տակ[134]:

Գալանոսի գործունէութիւնը եւ աշխատելու կերպը անհաճոյ էին յատկապէս Նախիջեւանի արքեպիսկոպոս Օգոստինոս Բաջենցի համար, որը 1650 թ. սեպտեմբերի 10-ին գրեթէ բողոքի ձեւով գրում է Հաւատասփիւռի քարտուղարին հետեւեալ տողերը. «Մի տարի առաջ գրեցի ձեզ, որ Զիտադինի (արքեպիսկոպոսի) թողած գումարից մի մաս մեզ շնորհէք: Խնդրում եմ նաեւ, որ նոյն գումարը չգործածուի այլ վայրերում դպրոց բացելու, քանի որ դպրոցի համար սահմանուած այդ դրամը այս տեղիս համար է (իմա՛ Նախիջեւանի – Մ. Կ.) եւ ոչ ուրիշ տեղի, ուր յաճախում են հերձուածողներ, սովորում են եւ ապա սուրը մեր ձեռքից առնելով՝ կռւում են մեր դէմ, ինչպէս արեցին Հ. Պօղոս Փիրոմալիի մի շարք աշակերտները, որոնք մեր մեծագոյն թշնամիներն ու հալածողներն են: Թէաթինեանները ձեզ համոզեցին, որ Հռոմում բացէք վարժարան, ուր Կղեմէս Գալանոսը լինի տեսուչ (Rettore), որպէսզի փայլի եւ ընդլայնուի իրենց միաբանութիւնը»[135]: *Խիստ է Օգոստինոս արքեպիսկոպոսի դատաստանը, որովհետեւ Գալանոսի գործունէութիւնը հեռու էր «մի վարժարան» լինելուց, գոնէ առ այժմ, հակառակ որ այդպիսի ծրագրերով էր Պոլսից մեկնել 1643 թ.:*

Եթէ յաջորդաբար մանրամասն կերպով քննենք վերեւում յիշատակուած վեց աշակերտների կենսագրութիւնները, աւելի եւս երեւան պիտի գայ Գալանոսի ունեցած դերը նրանց գործունէութեան մէջ:

Գալանոսի գրքերի տպագրութիւնը

Գալանոսը, ներքուստ լինելով գիտնական, նուիրուած էր հայերէնին, եւ ոչ թէ քարոզիչ դառնալու համար, այլ իր առաջին հերթին՝ գրքեր շարադրելու եւ այդ ճանապարհով հայ ազգը լուսաւորելու եւ հասնելու իր վերջնանպատակին, այն է՝ եկեղեցիների միութեանը: «Լուսաւորել» նշանակում էր բացել դիմացինի միտքը, որպէսզի ճանաչի իր սխալը, տեսնի ճշմարտութիւնը եւ հետեւի դրան: Հաւատասփիւռից մեկնող միսիոնների համար յաղթանակ էր համարւում Հռոմի իշխանութեանը տեղեկացնելը, թէ կարողացել է լուսաւորել շատ հոգիներ, յատկապէս՝ հովիւներ եւ առաջնորդներ: Եւ իրապէս, Գալանոսի անձնական ջանքերով էր, որ կաթողիկէ հաւատոյ դաւանութիւն էին ուղարկել Հռոմ Կ. Պոլսից Զաքարիա պատրիարքը, Թոմաս վրդ. Բերիացին եւ աշակերտների մի բազմութիւն: Նոյնն էին պատրաստւում անել Երեւանի Յովհաննէս արքեպիսկոպոսը, Խաչատուր Գաղատացի պատրիարքը, որոնց արգելք եղաւ մահը կամ կենսապարագաները: Նոյն այս նպատակի համար Գալանոսը նուիրւում է գրաւոր խօսքին: Իրաւացի լինելու համար ասենք, որ նա գոնէ իր ժամանակի համար որոշակիօրէն մեծ արդիւնքներ է ցոյց տուել:

«Քերականական եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ» (Հռոմ, 1645)

Վրաստանից Պոլիս հասնելուց եօթ ամիս յետոյ Գալանոսը 1641 թ. դեկտեմբերի 9-ին գրում է Հաւատասփիւռի քարտուղարին, թէ պատրաստել է հայերէնով Տրամաբանութեան *գիրքը եւ շարադրում է* Քերականութիւնը, *եւ թէ ծրագիր ունի ուղարկելու*

133 Տե՛ս SOCG, vol. 65, f. 165:

134 Տե՛ս Congr. Part., vol. 9, f. 257, n. 1:

135 Տե՛ս SOCG, vol. 292, f. 296-297:

Հռոմ՝ տպել տալու համար[136]*: Յաջորդ ամիս՝ 1642 թ. յունուարի 15-ին, Գալանոսը գրում է մեր ազգի մասին, թէ «չեղուած է, ո՛չ թէ չարութեամբ, այլ՝ տգիտութեամբ» ակնարկելով անշուշտ մեր հաւատքը եւ եկեղեցաբանութիւնը, ապա իսկոյն աւելացնում է այս ուղղութեամբ իր տարած աշխատանքի մասին. «Տրամաբանութիւնը շարադրեցի, ներկայիս աւարտում եմ Քերականութիւնը, որ պիտի ընդօրինակեմ գեղեցիկ գրով եւ բանաստեղծական ճաշակով, հայ եկեղեցականների խնդրանքով, ուզում եմ իմանալ՝ կարելի՞ է տպել Պրոպագանդա Ֆիդէի տպարանը, որովհետեւ ուզում եմ (գիրքը) ուղարկել աշակերտիս հետ (իմա՛ Յովհաննէս Աբդալ – Մ. Կ.), որպէսզի նա (տեղում) հսկի տպագրութեան վրայ. (անշուշտ) պէտք էր, որ ես անձամբ գայի հսկելու այդ գործի վրայ, որովհետեւ շատ կարեւոր գործ է»*[137]*:*

«Հայ եկեղեցականների» ակնարկը յստակ է դառնում, երբ կարդում ենք արդէն տպագիր գրքի առաջին էջերը, ուր կան.

Ա) Եդեսացի Յովհաննէս արքեպիսկոպոսի նամակն՝ ուղղուած Հաւատասփիւռի ժողովի նախագահ կարդինալ Անտոն Բարբերինիին, ուր գրուած է. «Ընկալ ... զայս Քերականութիւն եւ Լօճիգային ի մեր լեզուս արտադրեալ, ի խնդրոյ իմոյ, ի կարգէ թէադինոսաց պատուական պատրի Կղէմէս աստուածաբան վարդապետէ... սիրով մատուցանեմ վեհագոյն բարձրութեանդ քում...»[138]*:*

Բ) «Ես Խաչատուր վարդապետս գաղատացի Պատրիարգ Հայոց յարքայանիստ քաղաքիս Կոստանդնուպոլսի վկայեմ... է՛ գործ ամենէն անսղալ. ես իսկ ոչ սակաւս ուսայ սորա ընթերցմամբ... արդ առ ի վկայութիւն այս ճշմարտութիւնս գրեալ եմ զայս, զի յորդորեսցեն ի մեծն Հռոմ տպագրել զայսպիսի գործ»:

Գ) «Ես Պօղոս վարդապետս ստամպոլցի եւ շնորհօքն Աստուծոյ եպիսկոպոս Հոյոց քաղաքէն Տիվրիկոյ, ընթերցայ մտադրութեամբ զգիրքս Քերականութեան... աղերսեմ ի յեղբարցն մերոց ի Քրիստոս, որք ի մեծն Հռոմ, զի արժանի արասցեն զգիրքս զտպագրութենէ...»:

Դ) Լէոպոլսի Նիկողայոս արքեպիսկոպոս Թորոսովիչի լատիներէն վկայականը, որ նոյնպէս հաստատում է գրքի կարեւորութիւնը ու խնդրում է, որ տպագրուի Պրոպագանդայի տպարանում, որպէսզի տարածուի կաթողիկէ հաւատքը (ed cotholicae fide propagazionem): Թորոսովիչը այս վկայականը տուել է 1643 թ. նոյեմբերի 2-ին, երբ Գալանոսը Պոլսից անցել էր Հռոմ:

1643 թ. կէսին՝ Գալանոսի՝ Պոլսում բացած վարժարանի ամենափայլուն շրջանում, Քերականութեան եւ Տրամաբանութեան *30 ձեռագիր օրինակներ շրջում էին քաղաքում, եւ վարդապետներն անգամ գալիս էին Գալանոսի մօտ՝ ձեռք բերելու նոյն գրքի ձեռագիր օրինակը*[139]*: Հ. Ջուզեպէ Ջուդիչէն, 1643 թ. յուլիսի 26-ին Գալանոսի՝ Պոլսից Հռոմ փախչելու լուրը յայտնելով Հաւատասփիւռի քարտուղարին, աւելացնում է. «Ստիպուած էի Գալանոսին ուղարկել քաղաքիցս, յայտնի պատճառով եւ յուսով եմ, որ Աստուծոյ ծառայութեան (գործին) մեծապէս օգտակար պիտի լինի: Նկատի ունեցէք,*

136 Տե՛ս SOCG, vol. 167, f. 167+172:

137 SOCG, vol. 167, f. 144:

138 Գալանոսը 1643 թ. փետրուարի 22-ին գրում է Հաւատասփիւռի ժողովին, թէ վախճանուել է Միջագետաց Յովհաննէս արքեպիսկոպոս եդեսացին, որը չի հասցրել ստորագրել Հռոմից իրեն ուղարկուած հաւատոյ դաւանանքը, եւ թէ նոյն արքեպիսկոպոսը Հաւատասփիւռի նախագահ կարդինալ Անտոնին նուիրել է հայերէն Քերականութիւնը, Տրամաբանութիւնը եւ մի բառարան՝ փափագելով դրա տպագրութիւնը (հմմտ. SOCG, vol. 168, f. 315):

139 Հմմտ. Գալանոսի մեծաւորի՝ Ջուզեպէ Ջուդիչէի 1643 թ. յունիսի 1-ով թուակիր նամակն՝ ուղղուած Հաւատասփիւռի քարտուղարին (տե՛ս SOCG, vol. 168, f. 298):

որ նոյն Հայրն ունի շարադրուած մի շարք գրքեր, որոնք ուզում է տպագրել»[140]:

Պոլսից Հռոմ անցնելուց մի քանի ամիս յետոյ (ճշգրիտ թուականը բացակայում է) Գալանոսը Հաւատասփիւռի Ժողովին գրաւոր խնդրագիր է ներկայացնում՝ տպագրելու իր շարադրած հատորները, ոչ միայն Քերականութեան ու Տրամաբանութեան գիրքը, այլ նաեւ՝ պատմական հատորները: Քաջատեղեակ լինելով տեղի հոգեբանութեանն ու մտայնութեանը՝ Գալանոսը խնդրագրում օգտագործել էր յատուկ բառեր եւ բացատրութիւններ. «Կղեմէս Գալանոսը... խոնարհաբար յայտնում է այն մասին, որ եղել է հայոց քարոզիչ եւ ճանաչել է նրանց սխալները, որ արդիւնք են տգիտութեան եւ ոչ չարութեան, տաժանակիր աշխատանքով պատրաստել է մի Քերականութիւն հայերէն գրական լեզուով, որպէսզի օգտակար լինի միսիոներներին, քանի որ հայերէն սովորելու համար ուրիշ Քերականութիւն գոյութիւն չունի:

Բացի այս գրքից, պատրաստել եմ դասական ոճով Հակաճառութեան հատորը՝ բացատրելով մեր հաւատքի այն տարբերութիւնները, որոնց մէջ հայերը սխալւում են: Այս հատորս Ս. Աթոռին հնազանդ նախկին հայ կաթողիկէ պատրիարքները իրենց ազգի անունով խնդրեցին Ս. Ժողովի նախագահ Անտոն Բարբերինոյից, որ բարեհաճի տպագրել, իբր բարիք իրենց համար, ինչպէս տեսնում է այս հատորի սկզբում դրուած վկայականներից, որ գրել են իրենց իսկ ձեռքով եւ կնքել իրենց կնիքով:

Այժմ ներկայանում է որպէս մի ջերմեռանդ անձ, որ յօգուտ մեր առաքելութեան, տրամադիր է կամաւոր կերպով ստանձնել գործը՝ վճարելով տպագրութեան ամբողջ ծախսը:

Խնդրում եմ Ձերդ վսեմութիւնից, որ բարեհաճէք տրամադրել մեզ Հաւատասփիւռի տպարանի հայերէն տպագրական տառերը, մելանն ու թուղթը, որ մի մեծ ծախս չէ, չկորցնելու համար ներկայ առիթը, որ մեծ ծախս է պահանջում: Նկատելի է նաեւ, որ այս անձը աստուածավախ հոգի է, հայ ազգի եւ Ս. Աթոռի սիրահար: Եթէ այս շնորհը անէք, միշտ պիտի երախտապարտ լինեմ»[141]:

Հաւատասփիւռի ժողովը 1644 թ. ապրիլի 5-ին վճիռ է կայացնում տպելու Քերականութեան գիրքը[142]: Ապրիլի 11-ին հրաւիրւում է Հաւատասփիւռի տպարանի գրաշարը, որին է յանձնւում Քերականութեան ձեռագիրը: Յանձնարարւում է գործը սկսել սլաւոնական (Illirico) ժամագրքի տպագրութիւնն աւարտելուց յետոյ միայն[143]:

Քերականութեան տպագրութեան անուանաթերթի վրայ նշուած է 1645 թուականը, իսկ տպագրութիւնը աւարտուել է յաջորդ տարի[144]: Գալանոսը խնդրանք է ներկայացնում իր նորատիպ գրքից ստանալու 25 օրինակ: Խնդրագիրը մէջբերենք ամբողջութեամբ, որովհետեւ մեզ հաղորդում է բազում լրացուցիչ տեղեկութիւններ. «Ես տէր Կղեմէս Գալանոսս... ներկայացնում եմ. գիտենալով, որ Ս. Ժողովի տպարանում աւարտուել է հայերէնով Քերականութեան

140 Տե՛ս SOCG, vol. 168, f. 306:

141 Տե՛ս SOCG memoriali, vol. 407, f. 369: Նոյն այս խնդրագրի երկրորդ մասում Գալանոսը շարունակում է հաղորդել հետեւեալ հետաքրքրական մանրամասնութիւնները. «Երբ Մինգրելիայից (Վրաստանից – Մ. Կ.) Պոլիս անցայ, տեղի իշխանը Նորին Սրբութեանը նուիրեց երկու ստրուկ (sciavi), որոնք հետս բերեցի Պոլիս եւ ապա Հռոմ. ցարդ նրանց համար ծախսել եմ 70 սկուդ եւ խնդրում եմ ձեր օժանդակութիւնը»:

142 Տե՛ս Acta, vol. 16, f. 71, n. 3:

143 Տե՛ս Fondo Vienna, vol. 32, f. 570:

144 Կղեմէս Գալանոսի Քերականութեան հրատարակութեան թուականի մասին տե՛ս նաեւ **Alessandro Orengo**, *La data di pubblicazione delle «Institutiones» del Galano*,- «Բազմավէպ», 1995, թիւ 1-4, էջ 416-423, **Գ. Ջահուկեան**, *Գրաբարի քերականութեան պատմութիւն*, Երեւան, 1974:

եւ Տրամաբանութեան՝ իմ կողմից հայերէնով եւ միաժամանակ լատիներէնով շարադրուած գրքի տպագրութիւնը, հազար օրինակով, որպէսզի օգտուեն թէ՛ միսիոներները եւ թէ՛ հայերը, որոնք տպագրութեան խնդրանքը արեցին: Վսեմաշուք կարդինալների վճիռով տպագրուած հազար օրինակի կէսը յանձնուեց թէաթինեաններին՝ ի նպաստ Վրաստանի առաքելութեան, քանի որ նոյն միաբանութիւնը հոգաց գրեթէ բոլոր ծախսերը, իսկ Ս. Ժողովը տրամադրեց միայն թուղթը: Հիմա խնդրում եմ գիրքը շարադրելու աշխատութեանս, տպագրութեան ընթացքին հսկելուս եւ տարի ու կէս տպագրութեան փորձերը սրբագրելու փոխարէն, հաճեցէք նոյն գրքից մի քանի օրինակ տրամադրէիք ինձ այն հինգ հարիւր օրինակից, որ մնացել է տպարանում»[145]: Գալանոսի այս խնդրագրի վրայ քարտուղարն արել է հետեւեալ դիտողութիւնը (անշուշտ՝ Հաւատասփիւռի ժողովի նիստին ներկայացնելու համար). «Ս. Ժողովը սովորութիւն ունի նման պարագաներում, այն է՝ գրքի հեղինակին կամ սրբագրողին տրամադրել 25 օրինակ»: Հարցը ներկայացւում է Հաւատասփիւռի Ժողովի 1646 թ. օգոստոսի 24-ի նիստում, եւ որոշւում է Գալանոսին տալ գրքի 25 օրինակ[146]:

«Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ»

Ժէ դարի կէսին տպագրուած եռահատոր, պատկառելի ծաւալով պատմութեան այս հատորները, որի եւրոպացի հեղինակը Կղեմէս Գալանոսն է, եւրոպական եւ դասական մտքով զարգացած, խորապէս մեր լեզուն սովորելով, օգտագործել է բազմաթիւ հայ մատենագրական աղբիւրներ (այն էլ միայն ձեռագիր վիճակում) եւ մանաւանդ իր տեսակի մէջ միակը լինելով՝ պատճառ են դարձել գրքի ծաւալուելուն մեր ազգին մէջ: Անկասկած արժանին պիտի մատուցել եւ ընդգծել այն բազում շնորհները, որոնց շնորհիւ Գալանոսը կարճ ժամանակամիջոցում հասցնելով այն աստիճան իւրացնել հայերէնը, որ օգտագործելով դեռեւս տպագրական դարաշրջան չմտած հայ մատենագրութիւնը, որ դեռեւս չէր հասցրել անցնել տպագիր դարաշրջան:

Գալանոսը իր այս ընդարձակ աշխատութիւնը կատարել է միսիոների հոգով, այն է՝ ցոյց տալ յատկապէս մեր եկեղեցական դասին Հայ եկեղեցու սխալները, նոյն ժամանակի բառամթերքով՝ մոլորութիւնները (կամ հերետիկոսութիւնները), որպէսզի նրանցից հրաժարուելով կամ ուղղելով՝ միանան Հռոմի եկեղեցուն, ինչ որ գրքում էլ իբր վերնագիր ընտրուած է: Այստեղ ամենեւին չանդրադառնալով գրքի բովանդակային հարցերին, ստորեւ փորձենք նկարագրել նրա արտաքին՝ տպագրութեան հետ կապուած պատմութիւնը:

Քերականութեան գրքի տպագրութիւնից յետոյ, երբ Գալանոսը 25 օրինակ ստանալու խնդրագիր է ներկայացնում, Հաւատասփիւռի ժողովի քարտուղարը, որը ըմբռնում էր Գալանոսի պատրաստած յաջորդ գրքի կարեւորութիւնը, հաւանաբար Հաւատասփիւռի ժողովի նիստին ներկայացնելու համար, խնդրագրի վրայ գրում է. «Գալանոսը շարադրել է մի նշանաւոր (insigne) գործ, որից աւելի լաւը Հայոց դարձի համար չի կարող լինել, որովհետեւ պայքարում է նրանց սխալների դէմ՝ նիւթը քաղելով նրանց իսկ հեղինակներից: Պէտք է այդ գիրքն էլ շուտով լոյս տեսնի երկու լեզուով»[147]:

Քերականութեան տպագրութիւնը աւարտելուց երկու տարի յետոյ, Գալանոսը Հաւատասփիւռի ժողովին է ներկայացնում Պատմութեան *գրքի (այսպէս ենք կոչում*

145 Տե՛ս SOCG memoriali, vol. 411, f. 322:

146 Տե՛ս Acta, vol. 17, f. 183, n. 2:

147 Տե՛ս SOCG memoriali, vol. 411, f. 322:

դիւրութեան համար) ձեռագրերը՝ ժողովական կարդինալներին ներկայացնելով հետեւեալ խնդրագիրը. «Տէր Կղեմէս Գալանոսը, որ ձեր հրահանգով ներկայումս հայերէնով դասաւանդում է աստուածաբանութիւն, ձեզ է նուիրում ներկայ հատորը՝ իր կողմից շարադրուած հայերէն եւ լատիներէն, ուր հերքւում են հայոց սխալները իրենց իսկ ժողովներով, գրքերով եւ հայ եկեղեցու վարդապետներով: Գիրքը շարադրուած է Արեւելքում, ուր պաշտօնավարել ու տեսել է, որ այս հատորը զգալի կերպով օգտակար է եղել հայ ազգին, որ հազար երկու հարիւր տարի ի վեր ապրում է հերձուածի մէջ, եւ մինչեւ այժմ ոչ մեկը նրան չի ներկայացրել մի գիրք, ուր մատնանշուէին նրանց հերետիկոսութիւնները: Ներկայումս խնդրում է ձեր վսեմութիւնից, որ բարեհաճէիք Հաւատասփիւռի տպարանում տպագրել տալ յիշեալ հատորը, որի ծախսի կէսը ստանձնում է ինքը. բաւական է, որ մնացած կէսն էլ հոգայ Ս. Ժողովը»[148]:

Հաւատասփիւռի Ժողովի 1648 թ. ապրիլի 20-ի նիստում զեկուցւում է Գալանոսի գրած խնդրագիրը, եւ ժողովականները հաւանութիւն են տալիս գրքի տպագրութեան՝ խնդրագրում ներկայացուած պայմաններին: Աւելին, բացայայտւում է, որ գրքի տպաքանակը պէտք է լինէր 700, որի կէսի (350 օրինակ) ծախսը, որ կազմում էր 150 սկուդ, պէտք է հոգար Ս. Ժողովը, իսկ մնացած կէսը՝ Գալանոսը, մի բարերարի օգնութեամբ: Գրքի գրաքննիչ են նշանակւում երեք եկեղեցականներ՝ թէաթինեան P. Agostino Bellis-ը եւ P. Luca Vadinga-ն՝ լատիներէն բնագրի համար, իսկ հայ դոմինիկեան Գրիգոր Ծործորեցին՝ հայերէն բնագրի համար[149]: Հաւատասփիւռի Ժողովը 1648 թ. մայիսի 19-ին տալիս է տպագրութեան գրաւոր թոյլտւութիւնը, որ արձանագրւում է համապատասխան հատորում[150]:

Գալանոսն առաջարկուած տպաքանակին՝ 700 օրինակին, համամիտ չէր՝ արդարացիօրէն մտածելով, որ նման գիրքը շատ աւելի կարող է տարածուել: Ուստի մտածում է իր ծախսով տպել տալ լրացուցիչ տպաքանակ եւ 1648 թ. յուլիսի 1-ին ներկայացնում է հետեւեալ խնդրագիրը. «Ես՝ Կղեմէս Գալանոսս, ներկայ գրութեամբ պարտաւորւում եմ ինքս վճարել լրացուցիչ (յաւելեալ) օրինակների ծախսը՝ այն գրքի, որ Հաւատասփիւռի Ս. Ժողովը պիտի տպել տայ, իմ կողմից շարադրուած, որի վերնագիրն է «Միաբանութիւն եկեղեցւոյ Հայոց ընդ Հռովմայ», եւ որի համար Ս. Ժողովը կայացրեց տպագրութեան որոշում: Իմացայ Ս. Ժողովի քարտուղար գերապայծառ Ինկոլիից, թէ կարիք կայ աւելացնել ներկայ հատորի տպաքանակը, որպէսզի որոշ ժամանակ անց Ս. Ժողովը ստիպուած չլինի վերատպութեան ծախսը կատարել: Այժմուանից պատրաստ եմ ստանձնել 700 տպաքանակից աւելի հատորների ծախսը՝ այնքան թուով, որքան յարմար գտնի Ս. Ժողովը: Ի հաւաստիացում յայտարարութեանս՝ ստորագրում եմ»[151]: Այս խնդրագրին որեւէ արձագանք երբեւէ դիւանում չհանդիպեցինք:

Անհրաժեշտ է արձանագրել, որ վերոբերեալ գրագրութիւնը Գալանոսի գրքի առաջին հատորի մասին է, որի տպագրութիւնը տեւեց շուրջ երեք տարի (1648 թ. մայիսից 1651 թ. օգոստոս), եւ գործն ա-

148 Տե՛ս SOCG, vol. 417, f. 315: Գալանոսի՝ Պոլսում եղած շրջանում այստեղ է եկել Յովհաննէս եպիսկոպոս Kieremovicz-ը, որ Գալանոսի պատմութեան գրքի համար հայթայթել է մի շարք աղբիւրներ: Այս մանրամասնութիւնը Գալանոսը գրաւոր տեղեկացնում է Հաւատասփիւռի Ժողովին 1661 թ. սեպտեմբերի 14-ին, երբ Ս. Ժողովը տեղեկութիւններ է ուզում նրանից Յովհաննէս եպիսկոպոսի մասին՝ վերջինիս իբր լեհահայոց վիճակաւոր նշանակելու համար (տե՛ս Տե՛ս SOCG, vol. 225, f. 41-42):

149 Տե՛ս Acta, vol. 18, f. 70, n. 22:

150 Տե՛ս SC stamparie, vol. 1, f. 124:

151 Տե՛ս SC stamparie, vol. 1, f. 125:

ւարտուեց գրեթէ անաղմուկ, առանց դիւանական հետք թողնելու: Միայն այն գիտենք, որ 1651 թ. օգոստոսի 7-ի նիստում Հաւատասփիւռի ժողովը որոշել է Գալանոսին յանձնել 350 տպագրեալ օրինակ[152]:

Առաջին հատորի անուանաթերթը որպէս տպագրութեան թուական կրում է 1650 թ. եւ ունի 532 երկսիւն էջ[153]: Երկրորդ հատորը բաժանուած է երկու մասի, որոնցից առաջինը, անուանաթերթի համաձայն, տպուել է 1658 թ. եւ ունի 487 էջ[154], երկրորդ մասը տպուել է 1661 թ. եւ ունի 772 էջ[155]:

Երկրորդ հատորի տպագրութիւնը սկսելուց առաջ ձեռագիրը յանձնւում է հայազգի տէր Զաքարիա Աղամին, որպէսզի թէ՛ իբր գրաքննիչ եւ թէ՛ հայերէնին քաջածանօթ անձ, մաքուր ընդօրինակի: Հաւատասփիւռի 1655 թ. յունիսի 21-ի նիստում որոշւում է տէր Զաքարիային մատուցած այս ծառայութեան համար ամսական երեք սկուդ վճարել[156]: Շատ հաւանական է, որ ընդարձակ գործը չորս ամսուայ ընթացքում չաւարտելով՝ Զաքարիան նոր խնդրագիր է ներկայացրել: Հաւատասփիւռի ժողովի 1655 թ. հոկտեմբերի 5-ի նիստում որոշւում է եւս վեց ամիս երկարաձգել ամսականի վճարումը[157]: Տէր Զաքարիայի նման կղերականները յաճախ էին օգտագործում նման առիթները՝ դիւրին ամսական ձեռք գցելու եւ ապրելու համար, ինչպէս պատմութիւնը ցոյց է տալիս: Ունենք տէր Զաքարիայի մեկ անթուական խնդրագիրը, որ պարունակութիւնից դատելով՝ պէտք է տեղաւորել 1656 թ. առաջին երկու ամիսների մէջ, հետեւեալ բովանդակութեամբ. «Վարժարանի օդը աննպաստ լինելով՝ տէր Զաքարիա Աղամը խնդրում է մի յաւելեալ գումար՝ օդափոխութեան եւ առողջութիւնը կազդուրելու համար, որպէսզի աւարտի «Միաբանութիւն եկեղեցւոյն Հայոց ընդ Հռոմայ» գիրքը, որ գրեթէ հասել է աւարտին, այնուհետեւ գնա իր առաքելութեանը, եթէ Զերդ Վսեմութիւնը պատշաճ գտնի»[158]:

Տէր Զաքարիայի դերը աւարտած լինելով՝ ձեռագիրն էլ պատրաստ էր տպագրութեան յանձնուելու: Երկրորդ հատորի տպագրութեան համար Գալանոսի խնդրագիրը չգտանք, սակայն Հաւատասփիւռի ժողովի 1656 թ. ապրիլի 4-ի նիստի արձանագրութիւնն ասում է. «Միաբանութիւն Հայոց... հտ. Բ, կարդինալ Capponio-ն հաստատում է, թէ կարդացել եւ մասնագէտների հետ քննել է տպագրելի հատորը ու հատորի մէջ տեսել է խոր հմտութիւն, քանի որ գիտական կերպով ցոյց են տրւում Հայոց սխալները եւ թէ Հայոց դարձի համար շատ օգտակար պիտի լինի նրա տպագրութիւնը: Ս. ժողովը, նկատի առնելով, որ առաջին տպուած հատորի մասին առայժմ միայն գովասանք է լսել, վճռում է, որ տպագրուի նաեւ երկրորդ հատորը՝ գովելով Կղեմէս Գալանոսի անձնաւորութիւնը, որ անթիւ բարիք է անում Հայոց մէջ»[159]:

Հաւատասփիւռի այս որոշմամբ գործի տպագրութիւնը պէտք է սկսուած լինէր: Տէր Զաքարիան գործի մէջ դարձեալ ներկայ է՝ իբր «գրաքննիչ»: 1656 թ. յունիսի 12-ի նիստում որոշւում է շարունակել վճա-

152 Տե՛ս Acta, vol. 20, f. 91, n. 23:

153 Տե՛ս **Նինէլ Ոսկանեան; Քնարիկ Կորկոտեան եւ Անթառամ Սաւալեան**, *Հայ գիրքը 1512-1800 թուականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն*, Երեւան, 1988, էջ 32. գրուած է, որ տպուել է երկու անգամ: Մեր ունեցած փաստաթղթերը անկարող են ճշտել այս մանրամասնութիւնները: Սակայն անհաւանական ենք համարում այս ենթադրութիւնը: Անկարելի չէ, որ հատորը սպառուած լինի եւ վերատպուած՝ պահելով տպագրութեան թուականը:

154 Նոյն տեղում, էջ 33-34:

155 Նոյն տեղում, էջ 37-38:

156 Տե՛ս Acta, vol. 24, f. 29, n. 12:

157 Տե՛ս Acta, vol. 24, f. 69, n. 25:

158 Տե՛ս SOCG, vol. 292, f. 413:

159 Տե՛ս Acta, vol. 25, f. 35, n. 3:

րել տէր Զաքարիայի ամսական երեք սկուդը մինչեւ գրքի տպագրութիւնը աւարտուի[160]: Հաւատասփիւռի ժողովի քարտուղարը անհամաձայնութիւն է յայտնում որոշմանը եւ 1658 թ. ապրիլի 11-ի նիստում հանդէս է գալիս ընդարձակ ելոյթով, որի արձանագրութիւնը հետեւեալն է. «Ս. Ժողովը անցեալ տարիներին որոշեց տէր Զաքարիա Աղամին որպէս Կղեմէս Գալանոսի գրքի գրաքննիչ տալ ամսական երեք սկուդ: Սակայն ես այն ժամանակ էլ չուզեցի ստորագրել որոշման տակ ու մի խորհրդածութիւն յայտնեցի: Գրաքննիչները երկուսն են լինում՝ առաջինը տպագրութիւնից առաջ՝ վաւերացնելու գրքի տպագրութիւնը, երկրորդը՝ տպագրութեան ընթացքում՝ սրբագրելու տպագրական վրիպակները: Առաջինի վերաբերեալ. այս գրաքննութիւնը ամբողջ գրքի համար կատարւում է տպագրութիւնից առաջ եւ ոչ թէ տպագրութեան ընթացքում, որ կարող է ամիսներ տեւել, եւ Ս. Ժողովի վրա շատ թանկ նստել՝ գրաքննիչին շարունակ վճարելու պարագայում: Երկրորդի վերաբերեալ՝ Կղեմէս Գալանոսն անձամբ ինքն է, որ կատարում է բոլոր տպագրափորձերի սրբագրութիւնները:

Արդ, որեւէ պատճառ չունենք տէր Զաքարիային վճարելու: Ճիշտ է, որ այս քահանան երկար տարիներ ծառայել է Ս. Ժողովին եւ լաւ անձնաւորութիւն է ու թէ ապրելու ուրիշ միջոց չունի եւ թէ՛ շատ լաւ գիտի լատիներէն, աստուածաբանութիւն եւ թէ՛ Հայոց մէջ նմանը գտնել դժուար է: Այսպիսով, նրան վճարելու տիտղոսը պիտի լինի «տպագրութեան գրաքննիչ», որովհետեւ օտար լեզուների գրաքննիչի տիտղոսն ունի Աբրահամ Հեկտորը, որ հայերէն չգիտի»[161]:

Երկրորդ հատորի տպագրութեան ընթացքի մասին ունենք Գալանոսի մեկ, անթուական առանց ստորագրութեան, նամակը՝ ուղղուած կարդինալներից մեկին, հաւանաբար՝ տպարանի պատասխանատուին. «Անկողնում հիւանդ լինելով՝ ներկայանում եմ գրաւոր կերպով ու խնդրում եմ, որ նկատի առնէք երկու կէտ. առաջին՝ Զուզէփփէն, ծեր լինելով եւ տկար տեսողութեամբ, անկարող է շարելու հայերէն (տպագրական) տառերը, երբեւէ արած չլինելով՝ շատ սխալներով է շարում. մեծ դժուարութեամբ եմ սրբագրում իր պատրաստածը եւ ուզում է շարունակել աշխատել՝ թէ՛ հայերէն եւ թէ՛ լատիներէն բնագիրների վրայ: Ինքը կարող է շարունակել լատիներէնը, իսկ հայերէնը թողնել Nicolo (անունով) աշակերտին, որին դուք էք նշանակել եւ շատ լաւ հայերէն կարդալ է սովորել: Արդ խնդրում եմ հրահանգ տաք, որ միայն Nicolo-ն զբաղուի հայերէնով, որովհետեւ Giuseppe-ի շարուածքի մէջ անհամար են սխալները, որ անհնարին է դարձնում անգամ սրբագրելը: Երկրորդ խնդրանքս է, որ գործածուի որակեալ մելան, որովհետեւ շատ անգամ անընթեռնելի է դառնում տպագրուածը»[162]:

Գալանոսի խնդրանքը հաւանաբար նկատի է առնուել: 1657 թ. յուլիսի 30-ով

160 Տե՛ս Acta, vol. 25, f. 52, n. 1:

161 Տե՛ս Acta, vol. 27, f. 111-112, n. 1: Այս օրերին է, որ Մատթէոս Ծարեցին տպագրական հարցերով գտնւում էր Հռոմում: Նոյն այս նիստում որոշւում է, որ Մատթէոսի տպելու համար ներկայացրած «Սաղմոսարանն» ու «Յիսուս Որդին» տէր Զաքարիան քննի որպէս գրաքննիչ: Այս տիտղոսով էլ որոշւում է շարունակել վճարել տէր Զաքարիային հասանելիք ամսական երեք սկուդը:

162 Տե՛ս SOCG, vol. 182, f. 13: Դիւանի այս նոյն հատորում՝ զետեղուած մեկ այլ փաստաթղթում (f. 206), "Giuseppe Luna maronita"-ն ասում է, թէ 32 տարի առաջ փափագել է Լիբանան մեկնել եւ Հաւատասփիւռի ժողովն իրեն պահել է Հռոմում՝ իբրեւ արեւելեան լեզուների գիտակ տպագրիչ: Նկատի ունենալով, որ Հաւատասփիւռի տպարանը սկսել էր գործել 1623 թ., այս խնդրագիրը գրուած կարող էր լինել շուրջ 1655-ին, երբ գուցէ դեռ երիտասարդ էր: Գալանոսի բողոքը, հաւանաբար, գրուել է 1657-1660 թթ.:

թուակիր մի փաստաթղթի համաձայն՝ Գալանոսի գրքի գրաշար «Nicola Nairiono»-ին որոշուում է վճարել ոչ թէ ինը, այլ տասներկու ճուլի իւրաքանչիւր պրակի (իմա՛ մամուլի) համար: Այս դիմումը կատարել է Գալանոսը՝ համեմատելով գործը Հաւատասփիւռի տպարանից տարբեր տպարանների մէջ կատարուած վճարումների հետ, ինչպէս նաեւ՝ քաջալերելու համար գրաշարին[163]:

1658 թ. նոյեմբերի 26-ին Գալանոսից ունենք մեկ այլ խնդրագիր՝ ստանալու Ուրբանեան վարժարանի գրատան ձեռագիր Մաշտոցը, որպէսզի քննի որոշ մանրամասներ, որոնք կարեւոր են իր գրքի այն մասի համար, ուր խօսւում է սուրբ խորհուրդների կիրարկութեան մասին[164]:

Երկրորդ հատորի երկրորդ մասի (որը հեղինակը կոչում է Երրորդ հատոր) տպագրութիւնը ընդհատուել էր ժանտախտի պատճառով Հաւատասփիւռի տպարանի փակուելու հետեւանքով: Գալանոսը Հռոմի մէջ բացած վարժարանի մասին Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին զանազան տեղեկութիւններ հաղորդելուց յետոյ նամակի վերջում գրում է. «Յիշեցնում եմ Ձեզ, որ գործիս Գ. հատորում, որ արդէն տպուած է, բայց չի աւարտուած, պակասում է Ս. Խորհուրդների մասը (տե՛ս տպ. էջ 489-772), որ ամենակարեւորն է: Մի տարի է, ինչ տպարանը չի աշխատում»[165]: Հինգ ամիս անց էլ դեռ ոչ մի շարժ չի նկատւում: Քանի որ Հաւատասփիւռի քարտուղար Alberici-ն Հայոց մասին տեղեկութիւններ էր խնդրել, Գալանոսը գրաւոր ընդարձակ պատասխանում է 1660 թ. դեկտեմբերի 14-ին, եւ վերջում դարձեալ առիթը օգտագործելով՝ գրում է. «Մեր աշխատութեան երրորդ հատորը, հարիւրից աւելի պրակների (մամուլների – Մ. Կ.) տպուելուց յետոյ՝ ընդհատուեց, եւ տարուց աւելի է, որ չեն աշխատում: Ասում են, թէ յունուարի սկզբին ուզում էին վերսկսել, եւ սակայն մինչեւ այսօր չեն սկսել: Ես անմահ չեմ, վախենում եմ, որ մահիցս յետոյ գործն այսպէս անկատար մնայ, եւ սակայն մի գիրք է, որ միւսներից աւելի կարեւոր է: Ուրիշ բան չի մնացել տպելիք, բացի Ս. Խորհուրդների մասից, ուր հերքւում են այն սխալները, որ հայերը գործում են խորհուրդների մատակարարման ընթացքում: Խնդրում եմ հրահանգէք, որ տպագրութիւնը վերսկսուի, եւ կատարուի Ս. Ժողովի որոշումը»[166]:

Տպագրութիւնը աւարտուելուն պէս՝ 1662 թ. ապրիլի 27-ին, Գալանոսը նամակով տեղեկացնում է Հաւատասփիւռի քարտուղարին, որ վերադարձնում է նրան Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի նամակի բնագիրը եւ դրա թարգմանութիւնը՝ յանձնարարելով, որ խնամքով պահուի դիւանում՝ Հալէպի Դաւիթ եպիսկոպոսի 1661 թ. մայիսի 15-ի նամակի հետ, որպէսզի չկոր- չեն, ինչպէս պատահել էր նախորդ քարտուղարութեան ընթացքում: Ապա Գալանոսը համարձակւում է գրել. «Երկու խնդրագիր ներկայացրի, ուր ասում էի, թէ աւարտուել է գրքիս Գ. հատորի տպագրութիւնը, եւ խնդրում էի օրինակներ՝ ինչպէս սովոր է տալ Ս. Ժողովը, որպէսզի վաճառեմ եւ պարտքերս տամ, որովհետեւ այս հատորը 200 պրակից աւելի եղաւ, իսկ նրա ձեռագիրը աւելի ընդարձակ էր, որի համար

163 Տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 533:

164 Տե՛ս SOCG, vol. 221, f. 7:

165 Տե՛ս SOCG, vol. 366, f. 8:

166 Տե՛ս SOCG, vol. 223, f. 76: Տէր Զաքարիա Աղամն էլ խնդրագիր է ներկայացրել (շատ հաւանական է Գալանոսի յորդորով) գրքի տպագրութեանն ընթացք տալու համար. «Զաքարիա Աղամը, որ Գալանոսի հետ պիտի մեկնի առաքելութեան, հազիւ թէ աւարտի տպագրութիւնը, ինչպէս խոստացել է Գալանոսը: Բայց գրքի տպագրութիւնը ժանտախտի պատճառով ընդհատուած լինելով՝ երկար ժամանակից ի վեր Գալանոսի հետ մնում եմ Հռոմում՝ սպասելով գործի աւարտին: Հիմա խնդրում եմ, որ գործը վերսկսուի, որովհետեւ Աստուծոյ կամքով ժանտախտը գրեթէ վերջացել է» (անթուական, տե՛ս SOCG, vol. 292, f. 451):

ծախսեր արեցի եւ դեռ չեմ վճարել: Թէեւ քաշւում եմ նման խնդրագիր ներկայացնելով, սակայն այլ ճար չունեմ: 26 տարի ծառայել եմ Ս. Ժողովին եւ յոյս ունեմ արժանանալ այս շնորհներին»[167]:

1662 թ. մայիսի 12-ին Գալանոսը գրում է մի նոր խնդրագիր՝ Գ. հատորից օրինակներ ստանալու համար, ապա տալիս է կարեւոր ծանօթութիւն՝ Բ. հատորի մասին. «...Աւարտեցաւ Գ. հատորի տպագրութիւնը, ինչպէս նաեւ Բ. հատորի քառասուն պրակների տպագրութիւնը, որը փափագել էր ձեր վսեմութիւնը»[168]: Հաւատասփիւռի Ժողովի 1662 թ. մայիսի 22-ի նիստում, նկատի առնելով Գալանոսի արդար խնդրանքը, նրան տալիս են Գ. հատորից 30 օրինակ, նախորդի հետ միասին՝ ընդամէնը 50 օրինակ[169]:

Այսպիսով՝ Գալանոսի պատմութեան երեք հատորների տպագրութիւնը տեւում է շուրջ տասնչորս տարի (1648-1662)՝ միջանկեալ ընդհատումներով, լինի Գալանոսի, թէ տպարանի մեղքով:

Գալանոսի Պատմութեան գրքի արձագանքը

Ցանկացած հեղինակի գոհունակութիւնն իր հրատարակած աշխատութեան ծաւալումն ու գնահատականն է, եւ որովհետեւ Գալանոսը երկար տարիներ էր աշխատել եռահատոր Պատմութեան միայն տպագրութեան վրայ, անկասկած, պիտի ուզէր, որ Հաւատասփիւռի Ժողովն էլ գոհունակութիւնը ստանար, թէ ունայն տեղ ծախս չէր արել, այլ ծառայել էր ճիշտ այն նպատակին, որի համար հաստատուել էր Հաւատասփիւռի Ժողովը:

Գալանոսը 1660 թ. դեկտեմբերի 14-ին, տեսնելով, որ Գ. հատորի տպագրութիւնը տարուց աւելի ընդհատուած է, Հաւատասփիւռի քարտուղարին (Alberici) ներկայացնում է մի ընդարձակ գրութիւն, որի վերնագիրն է. «Հայ ազգի օգտին նպաստող տեղեկութիւններ՝ գրուած Հայր Գալանոսի կողմից»: Նախ տեղեկութիւններ է տալիս իր նոր բացած վարժարանի յուզող ընթացքի եւ խնդիրների մասին, ապա, դառնալով իր կատարած առաքելութեանը, գրում է. «Նախկին ս. քահանայապետերը շատ տանջուեցին Հռոմի եկեղեցուն միացնելու համար այս ազգը, որ Արեւելքի միւս քրիստոնեայ ազգերից ամենից նշանաւորն է, ամենից ունեւորը, ամենից տարածուածը, ջերմեռանդն ու բազմամարդը (...): Յիշեալ քահանայապետերի ջանքերն ու աշխատանքները գրեթէ միշտ արդիւնաբեր եղան, որովհետեւ շատ անգամ յաջողեցին նրանց դարձնել կաթողիկէութեան եւ միացնել մեր սուրբ եկեղեցուն, սակայն յաջորդաբար նա վերադարձաւ իր առաջին փոխածին երկու պատճառով: Առաջին. նրանց ձեռքը թողեցին մի շարք մոլորական գրքեր, որոնք լցուած էին վարդապետական աւելորդապաշտութիւններով, Քաղկեդոնի եւ ս. Լեւոն պապի դէմ սուտ պատմութիւններով՝ առանց տալու (նրանց ձեռքը) ուրիշ գրքեր, որ նրանց լեզուով հերքուէին նրանց սխալները եւ սուտ պատմութիւնները: Երկրորդ. թողեցին, որ շարունակուի նրանց մէջ սովորական նոյն տգիտութիւնը՝ առանց հաստատելու մի հայկական վարժարան, ուր սովորեն գիտութեան եւ առաքելութեան ճանապարհը:

Անտարակոյս այս քահանայապետերը այս երկու կէտերը պիտի գործադրէին, եթէ միջոցը ունենային, սակայն ոչ մեկը եւ ոչ միւսը գործադրուեցին 1200 տարուան հերձուածի ընթացքին, որովհետեւ չկային լատին պաշտօնեաներ, որոնք գիտական կերպով ճանաչէին նրանց լեզուի բոլոր բառերը, դասական եզրերը, որոնք հարկաւոր են՝ հերքելու համար նրանց սխալները: Ան-

167 Տե՛ս SOCG, vol. 225, f. 47:

168 Տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 221:

169 Տե՛ս Acta, vol. 31, f. 61, n. 8:

ցեալում բնաւ հրապարակ չբերուեց մի հայերէն քերականութիւն կամ բառարան, որ տար նրանց այդ ուսումը: Այս վերջին շրջանում, ուր Աստուած իր ողորմութեամբ ուզում է հաստատուն կերպով իրեն դարձնել այս ազգը, իրագործուեց առաջին կէտը ու Հայաստան ուղարկուեցին մի շարք գրքեր, ուր բացատրւում են նրանց սխալները, եւ ցոյց է տրւում նրանց խաբուած լինելը: Եւ արդէն տեսնւում է, թէ նրանք որքան օգուտ են քաղում, եւ բոլոր այն կրօնաւորները (monacci, իմա՛ վարդապետ- Մ. Կ.), որ կարդում են, դարձ կ'ունենան եւ կ'որոշեն գալ այստեղ՝ սովորելու համար գիտութեան հետ հաւատքի ճշմարտութիւնը: Ու ամենքը ասում են, թէ պէտք է յիշեալ գրքերից մեծ թուով ուղարկել Հայաստան, թէ փափագ կայ բոլորին դարձի բերելու: Ուստի հարկ է երկու սնդուկ ուղարկել, մեկը՝ Հալէպի ֆրանսիական հիւպատոսին, միւսը՝ Զմիւռնիոյ ֆրանսիական հիւպատոսին, որպէսզի գոնէ ծախեն, եթէ չհաշուենք նուիրելը այն հայերին, որոնք փնտրում են (նման գրքեր), ու լսածի համաձայն՝ նրանք բաւականին շատ են:

Մանաւանդ թէ, Հռոմ վերջին հասնող երկու կրօնաւորները (իմա՛ տէր Բարսեղ Բարսեղեան եւ տէր Յովհաննէս Հոլով – Մ. Կ.) նոր լուր էլ բերեցին՝ ասելով, թէ իրենց մեծ կաթողիկոսը (իմա՛ Յակոբ Դ. Ջուղայեցի – Մ. Կ.), կարդացած լինելով յիշեալ հատորները, ուզում էր մի պատուիրակութիւն ուղարկել՝ հնազանդելու Նորին Սրբութեանը, նմանուելու համար իր հին նախորդ կաթողիկոսներին: Անցեալ շաբաթ նամակ էլ ստացայ Վենետիկից, Առաքել հայ եպիսկոպոսից (Շոռոթեցի)[170], ուր գրել էր, թէ օր օրի սպասում է յիշեալ հայ պատուիրակութեանը, իսկ ինքը Հայաստանից լուր էր ստացել, թէ նրանք ճանապարհ են ելել, որոնց ձեռքով կաթողիկոսը նամակ է գրել Առաքել եպիսկոպոսին՝ յայտարարելով իրեն, որ տէր լինի պատուիրակութեանը եւ ներկայացնի նրանց Նորին սրբութեանը: Յիշեալ նամակի օրինակը ուղարկուել է նրան կաթողիկոսի մտերիմ բարեկամի կողմից:

Երկրորդ կէտը (իմա՛ հայկական մի վարժարան ունենալը – Մ. Կ.), որ պէտք էր կատարել, կատարուեց (...): Եթէ այս վարժարանի աշակերտները գիտութեան մէջ հաստատուին, առաքելութեամբ մեկնելով (իրենց հայրենիքը)՝ պիտի գտնեն անթիւ աշակերտներ, որոնք պիտի ուզեն սովորել նրանցից, ու այս կերպով կարճ ժամանակում Աստուծով պիտի վերաշահուի Հայաստանը, պիտի մնայ անխախտ եւ հաստատուն իր դարձի մէջ, որովհետեւ հիմքերը գիտութեան վրայ են»[171]:

Այս յոյսերով եւ անակնկալներով էր աշխատել Գալանոսը, եւ գրեթէ իր ձեռքերով ուզում էր շօշափել իր սկսած գործի պտուղը՝ իրագործուած տեսնելով տարիների երկար երազը: Մեռնելուց երկու տարի առաջ՝ 1662 թ. յունիսի 26-ին, նա սրտին մօտիկ մի մանրամասնութիւն եւս հաղորդում է Հաւատասփիւռի քարտուղարին, թէ իմացել է ականատես տէր Բարսեղից (Հոլով)՝ Յակոբ կաթողիկոսի անձնական սենեկապետից, «թէ Յակոբ կաթողիկոսն այնքան լաւ է տրամադրուած կաթողիկէ հաւատքի նկատմամբ, որ երբ ձեռքն անցել է «Միաբանութիւն եկեղեցւոյն Հայոց ընդ Հռովմայ» գրքի առաջին հատորը, երկար օրեր առանձնացել է՝ ամբողջութեամբ կարդալու համար, առանց ուզելու (որեւէ մեկին) ունկնդրութիւն տալ: Հարուստ, բայց հերետիկոս մի հայ, զարմանալով կաթողիկոսի այսքան երկար առաքելութեան վրայ, իմանալով պատճառը, մտել է նրա սենեակը ու

170 Առաքել Շոռոթեցու եւ Գալանոսի յարաբերութիւնների մասին աւելի մանրամասն տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Առաքել արքեպիսկոպոս Երեւանի եւ Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցի*, - «Հանդէս ամսօրեայ», 2018, էջ 159-274:

171 Տե՛ս SOCG, vol. 223, f. 76:

տեսնելով, որ այդ գիրքը կարդալով է զբաղուած, յափշտակել է ձեռքից՝ պատառոտելու համար: Վրայ է հասել յիշեալ տէր Բարսեղը, իր կարգին բռնութեամբ յափշտակելով այդ հերետիկոսի ձեռքից պատառոտուած հատորը, պահել է, որպէսզի մթնոլորտը հանդարտուի»:[172]

Հաւատասփիւռի 1663 թ. յունուարի 23-ի նիստում զեկուցւում է Հելիոպոլսի եպիսկոպոսի նամակը, որ Էջմիածնից անցնելիս բազմաթիւ տեղեկութիւններ է գրել Հաւատասփիւռի Ժողովին, յատկապէս Յակոբ կաթողիկոսի ունեցած բարեացակամ տրամադրութեան եւ սիրալիր կեցուածքի մասին, թէ՛ իրեն եւ թէ՛ այլ քարոզիչների հանդէպ: Նոյն եպիսկոպոսը առաջարկում է սերտացնել Էջմիածնի հետ յարաբերութիւնները, աւելի եւս՝ այնտեղ թափանցելու համար, ու սրա համար խորհուրդ է տալիս Երեւան ուղարկել լաւ վարուելակերպ ունեցող լատին քարոզիչներ՝ քաղաքում առաքելավայր հաստատելու, նաեւ՝ հոգեւոր գրքեր եւ յատկապէս՝ Գալանոսի շարադրած գրքերը, որպէսզի հայերը լուսաւորուեն: Նոյն այս նիստում որոշւում է, որ Պօղոս Փիրոմալին եւ Կղեմէս Գալանոսը նուիրուեն թարգմանչական գործին՝ հայոց համար պատրաստելով յարմար հոգեւոր գրքեր, ինչպէս նաեւ Գալանոսի երեք հատորները հասցնեն Թաւրիզ՝ վեղարաւոր P. Gabriele-ին (իմա՛ Chinon - Մ. Կ.), որպէսզի իր միջոցներով հասցնի Էջմիածին[173]:

Անհաւանական չէ, որ այս մանրամասնութիւնները հասած լինէին Գալանոսին, որը նոյն օրերին պատրաստւում էր մեկնել Լեհաստան: Հաւատասփիւռի Ժողովի 1663 թ. օգոստոսի 7-ի նիստում զեկուցւում է Գալանոսի նամակը: Նա շնորհակալութիւն է յայտնում, որ իրեն տրամադրել են Գ. հատորից 30 օրինակ եւ խնդրում է եւս 10 օրինակ, որպէսզի ծախի եւ դրամը յատկացնի ուրիշ գրքերի, որ դեռ պէտք է գրի եւ տպագրի[174]: Խնդրանքը նկատի է առնւում եւ տրամադրւում է եւս 10 օրինակ[175]:

Գալանոսը, որի մտերիմ աշակերտ տէր Յովհաննէս Աբդալը Հալէպի լուրերը հաղորդում էր իր ուսուցչին, հեռաւոր կերպով իրեն զգում է Հալէպում Սսի գաղատացի Խաչատուր Գ. կաթողիկոսի ձեռքով կատարուած եկեղեցական շարժման հեղինակ: Գալանոսը 1662 թ. մարտի 8-ին Հաւատասփիւռի քարտուղարին գրում է. «Անցեալ տարիներին յիշեալ հատորից ուղարկեցի Հալէպ՝ տէր Յովհաննէս Աբդալին, ու ներփակ կից նամակիցս, ուր խօսում է ս. Լեւոնի մասին, ինձ հասանելի դարձաւ, որ այդ գիրքն ունեցել է իր բարերար դերը: Այս բոլորն ասում եմ, որպէսզի բարեհաճէք փութաք Հալէպ ուղարկել 20 հատորները, որոնց պէտք է միացնել դեռ նոր լոյս տեսած վերջին (Գ.) հատորը, որ ամենակարեւորն է»[176]:

Հռոմի Հաւատասփիւռի տպարանից լոյս տեսած գրքերի սեփականատէր մնում էր Հաւատասփիւռի Ժողովը: Գրքեր ստանալու համար պէտք էր ներկայացնել գրաւոր խնդրագիր, որն էլ քննարկման նիւթ էր դառնում Հաւատասփիւռի Ժողովի նիստերում, եւ նրա որոշման համաձայն տրւում էր գիրքը: Հաւատասփիւռի դիւանից հաւաքել ենք, որքան նկատել ենք, նման խնդրագրեր եւ կամ Հաւատասփիւռի նիստերի արձանագրութիւններից քաղելով՝ կազմել ենք մի ցանկ, ուր հետաքրքրական է տեսնել, թէ Գալանոսի Քերականութեան եւ Եկեղեցական պատմութեան գրքերը տարածման ինչ աշխարհագրութիւն են ունեցել: Թուարկենք

172 Տե՛ս SOCG, vol. 225, f. 180:

173 Տե՛ս Acta, vol. 32, f. 6, n. 12:

174 Բուն նամակը տե՛ս SOCG, vol. 222, f. 208. Նոյնը տե՛ս նաեւ SOCG, vol. 225, f. 209:

175 Տե՛ս Acta, vol. 32, f. 188, n. 17:

176 Տե՛ս SOCG, vol. 223, f. 101:

այդ խնդրագրերը ժամանակագրօրէն՝ երբեմն լուսաբանելով խնդրոյ անձանց:

ա) 1649 թ. դեկտեմբերի 7. Գրիգոր Ծործորեցին՝ ունիթորական, Նախիջեւանից գալով Հռոմ, խնդրում է Քերականութեան մի գիրք՝ հայերէն ուսանելուն նուիրուելու համար (CP, vol. 6, f. 172; Acta, vol. 19, f. 289, n. 2):

բ) 1650 թ. սեպտեմբեր. Հաւատասփիւռի տպարանի շտեմարանի ցանկերի համաձայն՝ Քերականութեան 350 օրինակներից մնացել էր 230 օրինակ:

գ) 1651 թ. օգոստոսի 28. Պոլսի Կիրակոս Պատրիարքի եղբայրը՝ Կարապետ վրդ. Երեւանցին, Հռոմում ուսումն աւարտելով, սահմանում է իբրեւ Մեծ Հայքի միսիոներ: Նա խնդրում է Պատմութեան առաջին հատորի 10 օրինակ, Քերականութեան 20 օրինակ (SOCG, vol. 292, f. 278): Նոյն խնդրագիրը կրկնւում է, եւ Գալանոսը խնդրագրի տողատակում գրել է հետեւեալ ծանօթագրութիւնը. «Ս. Ժողովը պէտք է առիթն օգտագործի եւ շնորհի գրքեր, որպէսզի տարածուեն Մեծ Հայքի մէջ, որովհետեւ սովորաբար նման առիթներ շատ չեն ներկայանում» (SOCG, vol. 292, f. 446): Հաւատասփիւռի Ժողովը կատարում է Կարապետ վարդապետի խնդրանքը (Acta, vol. 20, f. 99, n. 18):

դ) 1652 թ. մայիսի 17. ունիթորական Գրիգոր Ծործորեցին խնդրում է Պատմութեան Ա. հատորի 3 օրինակ եւ Քերականութեան 6 օրինակ (SOCG, vol. 292, f. 418):

ե) 1652 թ. յունիսի 18., ունիթորական Յակոբ Յիսուսին խնդրում է Քերականութեան 12 օրինակ եւ Պատմութեան հատորից (մե՞կ օրինակ)՝ Նախիջեւան տանելու համար (Acta, vol. 21, f. 70, n. 27):

զ) 1653 թ. մայիսի 7. Գալանոսի աշակերտներից Բալասանի խնդրանքով Հռոմից Լեհաստան մեկնելիս նրան է տրւում Պատմութեան 3 օրինակ եւ Քերականութեան 6 օրինակ, «որովհետեւ կարեւոր են հայոց դարձի համար» (SOCG, vol. 292, f. 422):

է) 1654 թ. փետրուարի 23. Մերդինի հայ արքեպիսկոպոսը (Տիմոթէոս Գառնո՞ւկ), որ մի քանի տարի է Լիվոռնոյում էր, խնդրում է Պատմութեան եւ Քերականութեան մեկական օրինակ (SOCG, vol. 292, f. 414):

ը) 1655 թ., Fr. Raimondo de S. Carmirio-ն՝ Tartaria-ի առաքելութեան մեծաւորը, Հռոմից մեկնելիս խնդրում է մի շարք գրքեր, որոնց թւում՝ Գալանոսի Պատմութեան երկու օրինակ (SOCG, vol. 210, f. 485):

թ) 1659 թ. սեպտեմբերի 3. Առաքել եպիսկոպոս Շոռոթեցին Հռոմում իր սենեկապանի միջոցով (Giovanni Batta Matatta) Ուրբանեան վարժարանի տեսուչից խնդրում է Պատմութեան Ա. եւ Բ. հատորների երկուական օրինակ (Fondo Vienna, vol. 22, f. 86):

ժ) 1659 թ. դեկտեմբերի 2. Գրիգոր Կիրակոսի անունով անձը, հաւանաբար՝ ունիթորական, փափագելով սովորել հայերէնի խնդիրները, ապա ս. հաւատքի տարածմանը նուիրուելու նպատակով՝ խնդրում է Պատմութեան Բ. եւ Գ. հատորները (SOCG, vol. 221, f. 13):

ժա) 1659 թ. դեկտեմբերի 2. Յակոբ Յիսուսի ունիթորը՝ Հայաստանի դոմինիկեանների գաւառական մեծաւորը, պաշտօնավարման մեկնելուց առաջ խնդրում է Պատմութեան Բ. հատորի 40 օրինակ իր առաքելավայրի համար (SOCG, vol. 221, f. 17):

ժբ) 1660 թ. մարտի 27. Հաւատասփիւռի տպարանի (իմա՛ շտեմարանի) ցանկերի համաձայն՝ Քերականութեան հատորից մնացել էր 107 օրինակ, Պատմութեան Ա. հատորից՝ 228 եւ Բ. հատորից՝ 637 օրինակ (Fondo Vienna, vol. 22, f. 76-77):

ժգ) 1660 թ. մայիսի 24. Առաքել եպիսկոպոս Շոռոթեցին Հռոմում խնդրում է Պատմութեան գրքի 14 հատոր եւ Քերականութեան 6 օրինակ, որպէսզի Հռոմ հասնող ազգայիններին կարելի լինի տալ հարկաւոր ծանօթութիւններ եւ ուսում (Acta, vol. 29, f. 152, n. 31):

ժդ) 1662 թ. յունիսի 12. Բոգդանիոյ եպիսկոպոս Յովհաննէս Kieremowics-ը, Երուսաղէմից Հռոմ հասնելով, խնդրում է Պատմութեան երեք հատորները (SOCG, vol. 222, f. 91):

ժե) 1662 թ. յուլիսի 17. Պօղոս Փիրոմալին խնդրում է Պատմութեան երեք հատորները եւ Քերականութեան 3 օրինակ՝ սովորեցնելու այն հայերին, որոնք Հռոմում դիմում են իրեն (Acta, vol. 31, f. 152, n. 1):

ժզ) 1662 թ. նոյեմբերի 27. «Domenico Messirio gerosolimitano sacerdote monaco armeno», որ Երուսաղէմից էր եկել Հռոմ եւ 6 ամիս մնացել այնտեղ Հաւատասփիւռի վճարով, վերադարձին խնդրում է Պատմութեան եւ Քերականութեան հատորներից մեկական օրինակ Երուսաղէմ տանելու համար[177]:

ժէ) 1662 թ. դեկտեմբերի 18. տէր Յովհաննէս Աբդալը Հալէպից խնդրում է Պատմութեան երեք հատորները: Այս առիթով կրկին հաշուել են շտեմարանում մնացած Պատմութեան հատորների թիւը, այն է՝ Ա. հատորից - 103 օրինակ, Բ. հատորից - 490, Գ. հատորից (որի տպագրութիւնը նոր էր աւարտուել)՝ 648 օրինակ (SOCG, vol. 225, f. 82):

ժը) 1663 թ. ապրիլի 10. Ուրբանեան վարժարանի աշակերտ Յակոբը խնդրում է երկու օրինակ Պատմութեան Գ. հատորից (SOCG, vol. 111, f. 79):

ժթ) 1663 թ. յունիսի 5. Երեւանից ուսանելու համար Հռոմ եկած Ազարիա Աւագը վերադառնալիս խնդրում է Բարսեղ վարդապետի համար Պատմութեան երեք հատորները եւ Քերականութիւնից մեկ օրինակ. Սաֆարի համար՝ նոյնպէս, Օգոստինոսի համար՝ միայն Քերականութեան մեկ օրինակ, իր համար՝ Պատմութեան Գ. հատորը եւ Քերականութեան մեկ օրինակ (SOCG, vol. 223, f. 164; Acta, vol. 32, f. 148, n. 32):

ի) 1663 թ. սեպտեմբերի 4. Յովհաննէս եպիսկոպոս Քիերեմովիչը Հռոմից Լիվոռնո գնալիս խնդրում է Քերականութեան 10 օրինակ, Պատմութեան Ա. եւ Բ. հատորների 2 օրինակ, Գ. հատորի՝ 6 օրինակ (SOCG, vol. 223, f. 226):

իա) 1664 թ. յունիսի 26. Գալանոսը Լէոպոլսից խնդրում է, որ Հաւատասփիւռի ժողովը իրեն ուղարկի 15 օրինակ Քերականութիւն՝ տեղի վարժարանում գործածութեան համար (SOCG, vol. 225, f. 180):

իբ) 1664 թ. նոյեմբերի 8. Ռավեննայից Girolamo Fabri-ն խնդրանք է ներկայացնում՝ ունենալու Պատմութեան Բ. եւ Գ. հատորները, քանի որ նախկինում ստացել է Ա. հատորը[178]:

---

177 Խնդրագիրը տե՛ս SOCG, vol. 223, f. 139: Հաւատասփիւռի Ժողովի 1662 թ. նոյեմբերի 27-ի նիստում ներկայացուել է խնդրագիրը, եւ քարտուղարն արել է հետեւեալ գրառումը. «Այս քահանան երկար ժամանակ ծառայել է Երուսաղէմում: Երբ Picquet-ն Հռոմում էր, բարի վկայութիւն տուեց նրա մասին: Հռոմում Հաւատասփիւռի Ժողովը նրան գումար տրամադրեց, որպէսզի ապրի իբրեւ ուխտաւոր: Գումարը չգործածեց առած նպատակի համար, չեղաւ մի օր, որ պատարագէր կամ ներկայանար Փիրոմալիին կամ Գալանոսին՝ մի բան սովորելու համար: Խնդրած գրքերը մերժում են» (տե՛ս Acta, vol. 31, f. 290, n. 10):

178 Տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 264: Girolamo Fabri-ն անցեալում ծառայել է Հաւատասփիւռի տպարանում: Նրա վկայութեան համաձայն՝ Գալանոսն իր անունն էլ է յիշել Պատմութեան Ա. հատորում: Հաւատասփիւռի 1665 թ. յունուարի 12-ի նիստում ընդունուում է նրա խնդրագիրը (տե՛ս Acta, vol. 34, f. 8, n. 17):

իգ) 1664 թ. նոյեմբերի 17-ի նիստում զեկուցւում է, որ Ոսկան վրդ. Երեւանցին փափագում է ունենալ Քերականութեան եւ Պատմութեան երեք հատորները (տե՛ս SOCG, vol. 223, f. 226):

իդ) 1665 թ. յունուարի 19. Զմիւռնիոյ միսիոներ Fr. Martino di Tiers Cappucino-ն խնդրում է Գալանոսի գրքերը՝ Զմիւռնիոյ ազգայիններին օգտակար լինելու համար (տե՛ս Acta, vol. 34, f. 10, n. 22):

իե) 1665 թ. յունուարի 19. Ներսէս քահանան (վարդապե՞տ) խնդրում է Գալանոսի գրքերը՝ «պաշտպանելու համար կաթողիկէ հաւատքը» (տե՛ս SOCG, vol. 223, f. 236; հմմտ. Acta, vol. 34, f. 14, n. 32):

իզ) 1666 թ. ապրիլի 12. Մատթէոս Աւանիսեանը՝ Նախիջեւանի ունիթորների գաւառական մեծաւորը, խնդրում է Պատմութեան Գ. հատորի 12 օրինակ, իսկ Քերականութեան՝ 6 օրինակ (SOCG, vol. 222, f. 268; հմմտ. Acta, vol. 35, f. 111, n. 35):

իէ) 1666 թ. ապրիլի 12. Կարմեղական միաբանները, որոնք բնակւում էին Հալէպում, Բասրայում, Տրիպոլիում եւ Լիբանանում, խնդրում են Գալանոսի Պատմութեան Գ. հատորի 12 օրինակ՝ բաժանելու տեղի պատրիարքներին, եպիսկոպոսներին եւ կաթողիկէ քահանաներին, որոնք մեծապէս կարօտ են այս հատորին (տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 310; հմմտ. Acta, vol. 35, f. 100, n. 20):

իը) 1666 թ.. Կիպրոսի վեղարաւոր միսիոներները խնդրում են հայերէն Քերականութեան գիրք (տե՛ս Fondo Vienna, vol. 22, f. 314):

իթ) 1667 թ. ապրիլի 8. Սսի Խաչատուր կաթողիկոսը խնդրում է Քերականութեան եւ Պատմութեան հատորները (տե՛ս SOCG, vol. 222, f. 126; հմմտ. Acta, vol. 36, f. 40, n. 26):

Դեռ կարելի է երկար շարունակել այս ցանկը, որովհետեւ ամեն տարի միշտ աւելի են տարածւում Գալանոսի գրքերը, յատկապէս՝ Պատմութեան հատորները: Յիշեցնենք, որ յաջորդաբար 1690 թ. վերահրատարակուել է միայն առաջին հատորը:

Գրական այլ գործունէութիւն

1642 թ. Հռոմում հայերէնով եւ լատիներէնով տպուել էր 28-էջանոց մի գրքոյկ՝ «Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղղափառ հաւատոյ վասն առնելոյ եկեղոցն յարեւելից» *վերնագրով: Այս գրքոյկի մեկ օրինակը Հաւատասփիւռի Ժողովի կողմից ուղարկուել էր Պոլիս, Կղեմէս Գալանոսին, որպէսզի զանազան անձանց ստորագրել տայ: Հռոմում գրքոյկի թարգմանութիւնը կատարել էր հայազգի ֆրանցիսկեան կրօնաւոր Fr. Francesco Stefano Ragopoviz-ը, որ միաժամանակ վերահսկել էր նաեւ տպագրութիւնը[179]:*

179 Fr. Francesco-ի մասին ունենք հետեւեալ տեղեկութիւնները: Fr. Francesco-ն Հաւատասփիւռի Ժողովի կարգադրութեամբ անձամբ հսկել է 1642 թ. Հռոմում Խորհրդատետրի տպագրութեանը (տե՛ս AP, Fondo Vienna, vol. 22, f. 519; Հմմտ. Acta, vol. 14, f. 288):
Վանեցի Սարգիս եպիսկոպոսը 1642 թ. օգոստոսի 31-ին, Հռոմից Լիվոռնո հասնելով, իտալերէնով մի նամակ է գրել Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին, ուր իտալերէն ստորագրութիւնն է "Giorgio vescovo armeno", մինչդեռ հայերէն ստորագրութիւնը՝ «Ես նուաստ Ս[ա]րգ[ի]ս եպ[իս]կ[ոպ]ոս» է: Նամակում Սարգիս եպիսկոպոսը բողոքում է՝ ասելով, թէ Վանից եկել է Հռոմ ու առաջին օրը հանդիպել է Fr. Francesco Armeno-ին, որին էլ խոստովանել է: Fr. Francesco-ն Սարգիս եպիսկոպոսից ստացել է 10 ոսկի, որպէսզի Ուրբանոս Ը. պապի մօտ ունկնդրութիւն յաջողացնի, բայց դրանից յետոյ այլեւս չեն տեսնուել: Սարգիս եպիսկոպոսը Յովհաննէս վրդ. Զուղայեցու առաջնորդութեամբ կատարել է հաւատոյ դաւանութիւն եւ նոյն վարդապետի հետ մեկնել է Լիվոռնո, որպէսզի ծեր տարիքում մենակ չճանապարհորդի: Հռոմից մեկնելուց առաջ Սարգիս եպիսկոպոսը ցանկացել

Յովհաննէս Մոլինոն Հռոմում եղած շրջանում Ս. Աթոռում ունեցել է թարգմանի վճարովի պաշտօն, մանաւանդ որ, բացի հայերէնից, քաջածանօթ էր թուրքերէնին, «ռութէնների լեզուին», իտալերէնին, լատիներէնին: 1641 թ. յուլիս-օգոստոս ամիսներին, երբ տպագրութեան նպատակով Մոլինոն փոխադրուել էր Վենետիկ, Fr. Francesco անունով հայազգի կրօնաւորը դիմում է ներկայացնում՝ Մոլինոյի փոխարէն Ս. Աթոռի թարգման դառնալու համար: Նրա այս խնդրանքը զեկուցւում է Հաւատասփիւռի Ժողովի 1641 թ. սեպտեմբերի 30-ի նիստին՝ առանց որեւէ որոշում կայացնելու[180]*:*

1641 թ. դեկտեմբերի 22-ով թուագրուած մի գրութիւն ունենք՝ հաւանաբար Հաւատասփիւռի քարտուղար Ինկոլիի կողմից գրուած եւ ուղղուած Հաւատասփիւռի նախագահին, ուր նա շեշտում է Հռոմում հայազգի Fr. Francesco ֆրանցիսկեանի ներկայութեան անհրաժեշտութիւնը, իբրեւ պապին եւ Հաւատասփիւռի Ժողովին ուղղուած հայերէնով նամակների թարգմանիչ, մանաւանդ որ գիտի հայերէն եւ թուրքերէն: «Առանց Ձերդ Վսեմութեան հրամանի,- գրում է քարտուղարը,- պալատի պաշտօնէութիւնը զլանում է տալ իրեն այն փոքր վճարը (ջուլիները), որ նախկինում վճարում էր Յովհաննէս Մոլինոյին՝ իբրեւ երկու լեզուների թարգման, եւ դրա համար որոշել է գնալ Պոլիս...: Ուստի խնդրում եմ, որ հրահանգէիք որ սա չմեկնի Հռոմից, եւ պալատի պաշտօնէութիւնն էլ վճարի այդ փոքր վճարը (ջուլիները)...»[181]*:*

Յաջորդ ժողովական նիստերից մեկում (սրա թուականը, ցաւօք, չկարողացանք ճշտել), որին ներկայ էր Ուրբանոս Ը. պապը, զեկուցւում է Պոլսի Պատրիարք Կիրակոս վրդ. Երեւանցու նամակը՝ գրուած 1641 թ. նոյեմբերի 5-ին: Կատարուած արձանագրութեան վերջում գտնում ենք հետեւեալը. «Հռոմում հայերէն գրութիւնների համար ուրիշ թարգման չկայ, եթէ ոչ Fr. Francesco հայ ֆրանցիսկեանը, որը, չկարողանալով ապրել իր վանքի՝ Տասներկու Առաքելոց մենաստանի ամսականով, մտադիր է Պոլիս գնալ՝ հոգալու իր ապրուստը եւ հագուստները: Այսպիսով, լաւ կը լինի տալ որոշ ամսական նրան այստեղ պահելու համար, որովհետեւ ոչ միայն կարող է ծառայել իբրեւ թարգման, այլեւ ուսուցանել քրիստոնէական եւ ընդունել (լսել) խորհրդական խոստովանութիւնը Հռոմ հասնող հայերի, որոնցից շատերին արդէն իսկ կաթողիկէ է դարձրել: Օրինակելի վարքով

է հրապարակօրէն ներկայացնել իր բողոքը, սակայն Յովհաննէս վարդապետ Ջուղայեցին արգելել է. «Այժմ պահանջում եմ դրամս, եւ այդ Fr. Francesco Armeno-ն էլ դուրս վռնդուելիք է թէ՛ իր պաշտօնից եւ թէ՛ քաղաքից» (SOCG, vol. 35, f. 455):

Հաւատասփիւռի Ժողովի 1643 թ. նոյեմբերի 6-ի նիստին զեկուցւում է Լեհահայոց արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի ցանկութիւնը, որն ուզում է իր հետ Լեհաստան տանել Fr. Francesco Armeno-ին՝ «իբրեւ խոստովանահայր եւ օգնական, որպէսզի հայերին դարձնի դէպի եկեղեցական միութիւն»: Ժողովը համաձայնւում է՝ բաւական համարելով, որ Fr. Francesco-ի ընդհանրական մեծաւորը եւս տայ իր համաձայնութիւնը (Acta, vol. 15, f. 465, n. 26):

1644 թ. ապրիլի 6-ին գրում է Վենետիկից Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին՝ նկարագրելով կատարած դժուարին ճամբորդութիւնը: 1644 թ. հոկտեմբերի 9-ին Պօղոս Փիրոմալին, գրելով Ապարաներից Հռոմ, իր մեծաւորին, իմիջիայլոց խնդրում է տեղեկութիւններ իր աշակերտի՝ Fr. Francesco polacco armeno-ի մասին, որին տեղաւորել էր Տասներկու Առաքելոց վանքում: Սրանով փաստօրէն տեղեկանում ենք, որ Fr. Francesco-ն Լեհաստանում է, եւ որ աշակերտել է Պօղոս Փիրոմալիին (տե՛ս SC Armeni, vol. 1, f. 11-12):

Fr. Francesco-ն 1645 թ. մայիս 12-ին տեղեկացնում է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին, թէ հասել է Իտալիա եւ տեղաւորուել է Ասսիզի ֆրանցիսկեանների վանքում. նամակի տակ ստորագրելով՝ «Fr. Francesco Stefano da Ragopoviz, Confessione armenorum et interprete di Sua Santita, Min[or] Con[ventuale]» (տե՛ս SOCG, vol. 43, f. 290):

180 Տե՛ս Acta, vol. 14, f. 458-459, n. 34:

181 Տե՛ս SOCG, vol. 403, f. 228:

կրօնաւոր է, յաճախում է ժամերգութեան, նրա ընդհանրական մեծաւորը գոհ է նրա վարքից: Երկու սկուդ ամսականը բաւական է նրա հագուստների համար, քանի որ սնունդը վանքից է ստանում: Հայերէնով լաւ տպել գիտէ, եւ նման ենթակայի կարիքը ս. Աթոռն ունի»: Նոյն նիստում որոշւում է տալ նրան երկու սկուդ[182]:

Այսպիսով, Գալանոսը, ստանալով Հռոմում տպագրուած «Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղափառ հաւատոյ վասն առնելոյ եկեղեցն յարեւելից» *գրքոյկը, 1643 թ. փետրուարի 22-ին Կ. Պոլսից գրում է Հաւատասփիւռի նախագահին՝ անելով իր դիտողութիւնները, թէ գիրքը լցուած է մեծամեծ սխալներով, ինչը նախատինք է Ս. Աթոռի համար, եւ խոստանում է սրբագրել ու ուղարկել Հռոմ, որպէսզի վերատպուի*[183]: *Նոյն տարում (1643) Գալանոսն անակնկալ կերպով մեկնում է Պոլիսից Հռոմ: Պոլսի նրա մեծաւորը՝ Հ. Ջուզեպէ Ջուդիչէն, 1643 թ. յուլիսի 26-ին գրում է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին՝ հաղորդելով տեղական լուրերը: Նոյն նամակին կից գրութեան մէջ աւելացնում է. «Հայերէնով տպուած Հաւատքի դաւանանքի հարցում, որ լաւ չի տպուել, Հ. Գալանոսը, Հռոմ հասնելով, Աստուծոյ շնորհքով, դրական դեր պիտի խաղայ»*[184]:

Տարիներ յետոյ՝ 1658 թ., Հռոմում առաջ եկաւ տէր Զաքարիա Աղամին եւ Գալանոսին Հաւատասփիւռի Ժողովում իբրեւ թարգմաններ պահելու հարցը: Հաւատասփիւռի 1658 թ. ապրիլի 11-ի նիստի արձանագրութեան մէջ կարդում ենք, թէ պէտք է պահել երկուսին էլ, «որովհետեւ ոմն փրանկիսկեան (ակնարկը Fr. Francesco-ի մասին է – Մ. Կ.), որ նախկինում Հաւատոյ դաւանութիւնը տպագրեց, պարզուեց, որ, լեզուն չիմանալով, հաւատքի վերաբերեալ նիւթերն անգամ տպագրել է բազմաթիւ սխալներով»[185]:

Իբր Հաւատասփիւռի ժողովի թարգման, Գալանոսի ձեռքի տակով են անցել 1643-1662 թթ. հայերէն բոլոր նամակները, որ հասել էին Արեւելքից: Նա թարգմանել է հայերէնից իտալերէն: Հաւատասփիւռի Ժողովը դիմել է նրան՝ որպէս հայկական հարցերին քաջատեղեակ անձ եւ կամ հայ անձնաւորութիւններին ծանօթ մեկը: Նա գրաւոր ներկայացրել է իր տեսակէտը: Այսպէս, ունենք նրա գրած կարծիքները տէր Յովհաննէս Աբդալի, Կ. Պոլսի Թոմաս վրդ. Պատրիարքի, Կարապետ վրդ. Երեւանցու, տէր Զաքարիա Աղամի, Առաքել եպիսկոպոս Շոռոթեցու, Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչի, Յովհաննէս եպիսկոպոս Քիերեմովիչի եւ այլ անձանց մասին, որոնց անդրադառնում ենք, երբ առանձին խօսում ենք իւրաքանչիւրի մասին:

Բացի Հաւատոյ դաւանութիւնից, Գալանոսը դիտողութիւն է արել է 1642 թ. տպագրուած Խորհրդատետրի, յատկապէս՝ դրա լատիներէն թարգմանութեան անհարազատութեան մասին[186]: *Իսկ թէ ինչ դիրք էր բռնել Ոսկան վարդապետ Երեւանցու հրատարակութիւնների նկատմամբ իբրեւ գրաքննիչ, կարծում ենք բաւարար է Հ. Սահակ Ճեմճեմեանի անդրադարձը այդ նիւթին*[187]:

182 Տե՛ս SOCG, vol. 180, f. 373:

183 Տե՛ս SOCG, vol. 68, f. 315:

184 Տե՛ս SOCG, vol. 168, f. 306: Մատենագրական ցանկերից դատելով՝ Գալանոսի սրբագրութեամբ «Հաւատոյ դաւանութիւն» չի տպագրուել:

185 Տե՛ս Acta, vol. 27, f. 111-112, n. 1:

186 Տե՛ս SOCG, vol. 221, f. 10:

187 1665 թ.՝ մահուանից մեկ տարի առաջ, արդէն Լէոպոլսում գտնուող Գալանոսը Պիդուի հետ, իրենց իսկ բառերով, «ամէն միջոց գործադրեցին» Ոսկանի ամստերդամեան տպարանը Լէոպոլիս փոխադրելու համար: Գալանոսը նոյնիսկ իր կողմից «ազդու» մի նամակ է ուղարկել Ոսկանին՝ տպարանով հանդերձ Լէոպոլիս տեղափոխուելու յորդորով (աւելի մանրամասն տե՛ս **Հ. Սահակ Ճեմճեմեան**, *Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ԺԷ. դար)*, Վենետիկ-Ս. Ղազար, 1989, էջ 93):

Լէոպոլիս անցնելով՝ Գալանոսը, բացի հայոց համար կղերանոց բացելու ծրագիրն իրագործելուց, աշխատում է նաեւ գլուխ բերել եկեղեցու միութեան գործը, ինչի կարեւոր ազդակներից մեկն էլ ծիսական գրքերի սրբագրութիւնն էր[188]: Լէոպոլիս հասնելուց շուրջ երկու ամիս յետոյ Գալանոսը 1664 թ. յունիսի 20-ին երկար տեղեկատուական նամակ է գրում Հաւատասփիւռի Ժողովին եւ, խօսելով ծիսական գրքերի սրբագրութեան մասին, առաջարկում է, որ գրքերը տպագրուեն հէնց տեղում՝ Լէոպոլսում, ինչին համակիր էին նաեւ տեղի իշխանները: Գալանոսը նաեւ յիշում է, որ անցեալում Յովհաննէս Մոլինոն Հռոմից Վենետիկ է տարել Հաւատասփիւռի տպարանի հայկական տպագրատառերը եւ տպագրել էր «երկու փոքրիկ գրքոյկներ՝ առանց նախապէս սրբագրելու սխալները»: Նա թելադրում է, որ տպարանը յայտաբերուի եւ փոխադրուի Լէոպոլիս[189]:

Բնականաբար Հաւատասփիւռի Ժողովը չէր կարող ընդունել այս առաջարկը՝ վախենալով, որ կենտրոնից հեռու կը տպուէին հերետիկոսութիւններ, եւ հայերը կրկին կը հաստատուէին իրենց մոլորութիւնների մէջ: Գալանոսին առաջարկւում է տպագրելու համար նախատեսուած ծիսական գրքերը ուղարկել Հռոմ: 1665 թ. յունուարի 15-ով թուակիր նամակում Գալանոսը Հաւատասփիւռի Ժողովին բացատրում է եղած առաջարկի անպատեհութիւնը. անհնար էր, որ Նիկոլ Թորոսովիչ արքեպիսկոպոսը եւ հայ իշխանները համաձայնէին առաջարկին, իսկ եթէ նոյնիսկ տեղի տային, վերջնական տպագրութիւնից առաջ անհրաժեշտօրէն պիտի ուզէին իմանալ, թէ որ կէտերում է Հռոմը սրբագրութիւններ կատարել: Հակառակ պարագայում նոյնիսկ չպիտի ընդունէին տպագիրը: Գալանոսն այս ամենը գրում է իբրեւ իր անհատական խոհեր՝ խոստանալով զուգահեռ շօշափել լեհահայ իշխանների եւ արքեպիսկոպոսի զարկերակը եւ ջանալ համոզել նրանց՝ սկզբնապէս իմանալով, որ նրանք խորշում էին Հռոմում տպագրուած գրքից, մանաւանդ եթէ փոփոխութեան ենթարկուած եւ կամ համառօտուած լինէր: Այս կացութիւնից դուրս գալու համար Գալանոսն առաջարկում է ծիսական գրքերը սրբագրել Լէոպոլսում, լատին աստուածաբանների օգնութեամբ եւ հայերի ձեռքով, եւ տպագրել տեղում՝ առանց լատիներէն թարգմանութեան «եւ առանց լատիններիս հաւանութեան»: Երբ Հռոմն այս ամենից հեռու մնայ, այն ժամանակ միայն գրքերն ընդունելի կը լինեն ոչ միայն Լեհաստանի, այլեւ ամբողջ Արեւելքի հայերին[190]: Այս հարցը ներկայացւում է Հաւատասփիւռի Ժողովի 1665 թ. ապրիլի 20-ի նիստում: Որոշւում է հետեւեալը. «Գրքերի մասին. թող սրբագրութիւնները կատարուեն Լէոպոլսում եւ համատեղ համաձայնութեամբ: Սրբագրութիւնը աւարտելուն պէս օրինակը ուղարկուի Հռոմ, որպէսզի Ս. Ժողովը հասու լինի, թէ արդեօք լաւ են կատարուել սրբագրութիւնները կամ ոչ. այս որոշումն ընդունելու համար թող նախապէս Կղեմէս Գալանոսի կողմից թարգմանուի լատիներէն»[191]:

Հաւատասփիւռի Ժողովն ընդունել էր, փաստացի, անիրագործելի որոշում. աշխատանքը ծովածաւալ էր եւ մեկ մարդու ուժերից վեր: Մի կողմ թողնենք այն, որ մեկ տարի անց՝ 1666 թ. մայիսի 14-ին, Գալանոսն արդէն վախճանուել էր:

Գալանոսի բացած հայոց վարժարանը Հռոմում 1660-1662 թթ.

Գալանոսը՝ հաւատարիմ միսիոներական ոգուն, ամբողջովին նուիրուել էր հայ

188 Այս նիւթի մասին տե՛ս G. Petrowicz, op. cit., pp. 173-190:

189 Տե՛ս SOCG, vol. 225, f. 171:

190 Տե՛ս SOCG, vol. 225, f. 215:

191 Տե՛ս Acta, vol. 34, f. 77, n. 27:

նոր սերնդի դաստիարակութեանը՝ աշխատելով եկեղեցիների միութեան նուիրական գործի համար: Պոլսում փորձեց բացել դպրոց կղերական դաս պատրաստելու համար, որպէսզի նրանք յաջորդաբար աշխատէին եւ հայ եկեղեցին միացնէին Հռոմին: Նոյն այս նպատակով էր շարադրել եռահատոր պատմութեան գրքերը, որպէսզի, գաղափարների մի աշխարհ ստեղծելով, յաջողէր միութեան գործը: Գրքերի տպագրութիւնը դեռ չաւարտած՝ ջանում է հայոց համար Հռոմում բացել վարժարան, ուր յաճախելու էր միայն եկեղեցական դասը: Յագեցած իր գաղափարներով եւ մտայնութեամբ՝ նրանք մեկնելու էին Հայաստան՝ հայ եկեղեցին միացնելու Հռոմի եկեղեցուն: Հռոմի մէջ հայոց համար յատուկ դպրոցի գաղափարը շատ հին էր՝ դեռ 1583 թուականից: Ութսուն տարի յետոյ Գալանոսը յաջողելու էր մի կերպ այն իրագործել: Վարժարանը հազիւ երկու տարի պիտի գոյատեւէր: Հետեւենք մանրամասնութիւններին:

Հայոց վարժարանի բացման նախապատրաստութիւնը

1660 թ. սկզբում տէր Յովսէփ ամուսնացեալ քահանան՝ ծագումով Նախիջեւանից (Գանճիա), 22 տարեկան, կնոջ հաւանութեամբ իր ծննդավայրից ճանապարհորդում է Հռոմ՝ աստուածաբանութիւն սովորելու: Նոյն շրջանում Հռոմում էր գտնուում Առաքել եպիսկոպոս Շոռոթեցին, որը տէր Յովսէփի ուշիմութիւնը փորձելու համար առաջարկում է սերտել Գալանոսի Քերականութիւնը: Տեսնելով, որ ունի անհրաժեշտ ընդունակութիւնը՝ նրա հետ միասին մի խնդրագիր է ներկայացնում Հաւատասփիւռի Ժողովին՝ օգնելով, որ տեղաւորուի մի վարժարանում եւ կարողանայ շարունակել ուսումը: Խնդրագրի ներքեւում ստորագրել էր Գալանոսը՝ աւելացնելով. «Հաստատում եմ՝ ինչ որ ասում է վերեւում երիտասարդի ուշիմութեան եւ ընդունակութեան մասին»[192]: Հաւատասփիւռի 1660 թ. մայիսի 24-ի նիստում քննում է խնդրագիրը: Որոշում է մասնաւոր մի ժողովական նիստում վերստին անդրադառնալ հարցին, բայց մինչ այդ ապրելու համար տրուելու էր մի որոշ գումար[193]:

Գալանոսի վարժարանը փակուելուց յետոյ տէր Յովսէփը մնում է Նախիջեւանի Փիրոմալի եպիսկոպոսի մօտ՝ խնդրելով նրա միջամտութիւնը ուսումը շարունակելու համար: 1662 թ. յունիսի 5-ով թուակիր մի նամակում Փիրոմալին Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին նկարագրում է տէր Յովսէփի անցեալը՝ նշելով, թէ սա ուրիշների նման չի եկել Հռոմ, որպէս փախստական, այլ ուղարկուել է Գանձասարի կաթողիկոսի կողմից՝ իր նահանգի հոգեւոր կարիքների համար (այնտեղ կային 18 եպիսկոպոս եւ 500 տգէտ քահանաներ): Փիրոմալին խնդրում է, որ տէր Յովսէփը տեղաւորուի մի վարժարանում՝ գոնէ փորձի համար՝ աւելացնելով. «Եթէ ես կարողանայի իր ապրուստը հոգալ, աւելի սրա վրայ կը ծախսէի, քան հօրս վրայ»[194]:

Տէր Յովսէփը հաւանաբար տեղաւորուել է Ուրբանեան վարժարանում: 1664 թ. սեպտեմբերի 3-ին Կղեմէս Գալանոսը Լէոպոլիսից նրա մասին գրում է. «Տեղիս կղերականների մէջ կար մի ուրիշ աշխարհական քահանայ էլ՝ տէր Յովսէփ անունով, որ անցեալ տարի եկել էր Հռոմից, ուր հաւատի դաւանութիւն էր տուել եւ սովորում էր վարժարանում՝ պատարագելով ըստ սրբագրութիւնների: Բայց մի շուայտութեան համար բանտարկուել եւ վռնդուել էր վարժարանից: Դառնացած՝ վերադարձել է հերձուածին՝ պատարագելով միւս հերձուածող քահանաների նման»: Գալանոսը դիմում է Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչին, որ

192 Տե՛ս SOCG, vol. 221, f. 93:

193 Տե՛ս Acta, vol. 29, f. 153, n. 32:

194 Տե՛ս SOCG, vol. 366, f. 31:

սպառնում է տէր Յովսէփին՝ կա՛մ պատրաստել սրբագրութիւնների համաձայն եւ կա՛մ թողնել ու վերադառնալ հայրենիք: Տէր Յովսէփը ընտրում է առաջինը, որպէսզի չվերադառնայ հայրենիք[195]:

Յաջորդ տարի՝ 1665 թ., Ստանիսլաւ (Stanislao) քաղաքում կառուցւում է հայոց եկեղեցի լեհ Starostaleschi-ի կողմից: Նպատակ ունենալով քաղաքը լցնել հայերով՝ նա անձամբ դիմում է Նիկոլ Թորոսովիչին՝ քահանայ ուղարկելու խնդրանքով: Գալանոսը, ճարպիկ գտնուելով, առաջարկում է տէր Յովսէփ քահանային, որպէսզի ծիսական սրբագրութիւնները համընդհանուր դառնան երկրի մէջ՝ ի նպաստ կաթողիկէութեան տարածման: Նիկոլ արքեպիսկոպոսը համաձայնում է եւ տէր Յովսէփին 1665 թ. Աւագ Շաբաթին փոխադրում է Ստանիսլաւ[196]:

Տարին չաւարտուած՝ 1665 թ. հոկտեմբերի 15-ին, Գալանոսը Հաւատասփիւռի Ժողովին տեղեկացնում է, թէ «Տէր Յովսէփ հայ կաթողիկէ քահանան՝ Ստանիսլաւի հայոց նոր եկեղեցուց, ուր իբրեւ ժողովրդապետ պաշտօնավարում էր ուղիղ կերպով, մեկնեց, որովհետեւ Հայաստանից նրա եղբայրը եկել էր յատկապէս նրան վերադարձնելու նպատակով, ընտանեկան մի դժբախտութիւն ամոքելու համար: Իր ասելով՝ սիրով կը վերադառնար, որովհետեւ չէր կարող ապրել միայն այդ իշխանի տուած թոշակով»[197]:

Նոյն այդ շրջանում ունենք մեկ ուրիշ խնդրագիր՝ ներկայացուած նոյնպէս 1660 թ. մայիսի 24-ի նիստում: Խնդրագրում ասւում է. «Ներսէս հայը՝ Թաւրիզից, 27 տարեկան, ստացել է չորս փոքր աստիճանները, տասը տարի է, որ փնտրում է ուսուցիչ, որ իրեն սովորեցնի սրբազան ուսմունքները: Վարժ է գրական լեզուի մէջ. Հայաստանում ուսուցիչ չգտնելով՝ անցել է Լեհաստան եւ ապա՝ Հռոմ՝ լսած լինելով, թէ այնտեղ կան ուրիշ ուսանողներ: Հիմա ինքը եւս խնդրում է աջակցութիւն՝ առնելու համար իր ուսումը»[198]:

---

195 Տե՛ս SOCG, vol. 225, f. 186:

196 Տե՛ս SOCG, vol. 225, f. 233: Տեղի հայ համայնքի մասին տե՛ս նաեւ **В. Грабовецкий,** *Армянская колония в Станиславе в XVII-XVIII вв. (Из истории армянских колоний на Западной Украине)*,- ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր հաս. գիտ., 1958, թիւ 6, էջ 43-52:

197 Տե՛ս SOCG, vol. 225, f. 270:

198 Տե՛ս SOCG, vol. 221, f. 95: Ներսէս դպիր Սարաֆի Դաւրիժեցի, 1660-1662 թթ. ուսանում էր Գալանոսի մօտ: Դեռ Հայոց վարժարանը չփակուած, խնդրագիր է ներկայացնում, որ թարգմանչի օգնութեամբ քննուի իր կրթական մակարդակը, որպէսզի կարողանայ ձեռնադրուել լեհահայ Նիկոլ արքեպիսկոպոս Թորոսովիչից (տե՛ս SOCG, vol. 223, f. 4): Ոսկան վրդ. Երեւանցու՝ Հռոմում եղած ժամանակ Փիրոմալին միջամտում է, որ նա կատարի ձեռնադրութիւնը: Հաւատասփիւռի Ժողովի 1663 թ. նոյեմբերի 19-ի նիստում պահանջում է հաւատոյ դաւանութիւն թէ՛ Ոսկան վարդապետից եւ թէ՛ Ներսէսից (տե՛ս Acta, vol. 32, f. 250, n. 9): Փիրոմալին միջամտում է՝ հաստատելով, թէ Ոսկան եպիսկոպոսն անցեալում Հայաստանում կատարել է հաւատի դաւանութիւն, եւ կրկնութեան կարիք չկայ, քանի որ արեւելցիների համար ստորացուցիչ է նման կրկնութիւնը: Փիրոմալիի միջամտութիւնը զեկուցւում է Հաւատասփիւռի Ժողովի 1663 թ. դեկտեմբերի 4-ի նիստում (տե՛ս Acta, vol. 32, f. 266, n. 2): Ներսէսը քահանայական ձեռնադրութիւնը ստացել է Ոսկան եպիսկոպոսից 1664 թ. մարտ ամսին, ինչպէս ինքն է հաստատում յաջորդ տարիներին Հաւատասփիւռի Ժողովին ուղղուած իր խնդրագրերից: Քահանայական ձեռնադրութիւնից յետոյ՝ նոյն 1664 թ. չաւարտուած, տէր Ներսէսը խնդրագրով դիմում է Հաւատասփիւռի Ժողովին: Գրում է, թէ «թողել է հայոց հերձուածը», դարձել է կաթողիկէ՝ այն յոյսով, որ Հռոմում ուսանելով կարողանայ վերադառնալ իր հայրենիք՝ հոգեւոր տեսակէտով իր ազգակիցներին օգնելու նպատակով, սակայն Հռոմում Ուրբանեան վարժարան չընդունուելով, խնդրում է դրամական օգնութիւն, քանի որ Հայոց եկեղեցին անկարող է իրեն պահել եւ ինքը մնում է Փիրոմալիի մօտ կրթական նպաստով (տե՛ս SOCG, vol. 223, f. 232): Տէր Ներսէսի խնդրագիրը զեկուցւում է 1664 թ. նոյեմբերի 17-ի նիստում, եւ ոչինչ չի որոշւում (տե՛ս Acta, vol. 33, f. 175, n. 8): Տէր Ներսէսը Հաւատասփիւռի Ժողովից խնդրում է Գալանոսի գրքերից մեկական օրինակ (տե՛ս SOCG, vol. 223, f. 236): 1665 թ. յունուարի 19-ի նիստում Ժողովը

Այս խնդրագիրը ժողովին ներկայացուելուց յետոյ, արձանագրութեան համաձայն, եղել է հետեւեալ քննարկումը. «(Հաւատասփիւռի) քարտուղարն ասում է, թէ Առաքել արքեպիսկոպոսի՝ Հռոմ հաստատուելուց յետոյ, որ Ս. Ժողովի ծախսով մնում է քաղաքում, զանազան հայ երիտասարդ քահանաներ ու մեծ մասամբ՝ վարդապետներ, Առաքել արքեպիսկոպոսի օրինակին հետեւելով, գալիս են Հռոմ՝ հրաժարուելով (իրենց մոլորութիւններից), ուզում են ուսում ստանալ: Ջերդ Վսեմութիւնը

գրքերը տալուց առաջ քննում է տէր Ներսէսի անձին վերաբերող պարագաները (տե՛ս Acta, vol. 34, f. 14, n. 32): 1666 թ. յունուար ամսին տէր Ներսէսը կրկին խնդրագիր է ներկայացնում. «Ներսէս հայ քահանան, երկու տարի է, ինչ Հռոմում է՝ լատիներէն սովորելու համար: Ցաջողութիւն չունենալով՝ ցանկանում է հայրենիք վերադառնալ, ուստի խնդրում է յանձնարարական նամակներ՝ ուղղուած բոլոր երկրների առաքելական նուիրակներին, որպէսզի ճանապարհին, իբրեւ քահանայ, ընդունեն եւ օգնեն իրեն եւ ինքը հասնի իր հայրենիքը» (տե՛ս SOCG, vol. 223, f. 248): Խնդրագրում «երկու տարի է, ինչ Հռոմում է» արտայայտութիւնը շատ հաւանական է՝ նշանակում է, որ «երկու տարի է, ինչ Հռոմում է» որպէս քահանայ, որովհետեւ Հռոմ նա հասել էր 1660 թ.: Խնդրագիրը զեկուցւում է Հաւատասփիւռի Ժողովի 1666 թ. յունուարի 12-ի նիստում, որի արձանագրութեան մէջ ասւում է. «...խնդրում է վկայական, որ ինքը քահանայ է ձեռնադրուած եւ որպէս կաթողիկէ ապրել է Հռոմում: Տէր Ներսէսն արդէն ունի Ոսկան եպիսկոպոսից քահանայական ձեռնադրութեան վկայական, որ իրեն ձեռնադրեց այստեղ՝ Հռոմում, 1664 թ. մարտին, Հաւատաքնայստեղ՝ Հռոմում, 1664 թ. մարտին, Հաւատաքնութեան ատեանում հաւատոյ դաւանութիւն տալուց յետոյ: Պատրաստւում է մեկնել Ֆրանսիա, ապա Լեհաստան եւ վերջում՝ Հայաստան: Ճանապարհ է ուզում ընկնել մեր յանձնարարական նամակներով՝ ողորմութիւններ ձեռք բերելու նպատակով»: Ժողովը տալիս է բացասական պատասխան (տե՛ս Acta, vol. 32, f. 2, n. 5): Տէր Ներսէսը յաջորդաբար նոր խնդրագրեր է ներկայացնում մօտաւորապէս նոյն պատճառաբանութիւններով՝ խնդրելով ապրելու համար դրամական օգնութիւն կամ Ս. Մարիամ Եգիպտացու եկեղեցում «որեւէ պաշտօն», կամ էլ՝ յանձնարարական նամակներ կաթողիկէ երկրներում շրջելու համար, քանի որ չի կարող վերադառնալ հայրենիք, ուր կաթողիկոսը չի հանդուրժում Հռոմում ձեռնադրուածներին (տե՛ս SOCG, vol. 223, f. 289): Ժողովի պատասխանը եղել է՝ «դիմել կարդինալ Օրսինիին» (տե՛ս Acta, vol. 36, f. 246, n. 4): Հաւանաբար ոչ մի վերջնական լուծում չի տրուել: Քահանայական ձեռնադրութիւնից չորս տարի յետոյ դեռ Հռոմում էր: 1668 թ. մայիսին դարձեալ դիմում է Հաւատասփիւռի Ժողովին՝ գրելով. «Ներսէս հայ քահանան, որ 1664 թ. Ս. Ժողովի հրամանով Ոսկան եպիսկոպոսից ստացել է քահանայական ձեռնադրութիւն, խնդրում է ձեռնադրուած լինելու մասին մի վկայական, որովհետեւ Ոսկան եպիսկոպոսից ստացածը յայտնի չէ, որպէսզի Հռոմից դուրս եպիսկոպոսները ճանաչեն իրեն որպէս քահանայ եւ հրաման տան պատարագելու» (SOCG, vol. 223, f. 319): Հաւատասփիւռի Ժողովի 1668 թ. մայիսի 7-ի նիստում որոշւում է վերջապէս տալ խնդրած վկայականները (տե՛ս Acta, vol. 37, f. 57, n. 20): Տէր Ներսէսը, ստանալով վկայականները, հաւանաբար մնացել է Հռոմում: Կղեմէս Թ. պապին իր ներկայացրած խնդրագրում նա բացատրում է կացութիւնը. «Ներսէս Սարաֆի (Sarrafi) հայ քահանան Նախիջեւանում կաթողիկէ է դարձել Փիրոմալիի ձեռքով, եկել է Հռոմ՝ ուսանելու եւ երկու տարի ուսում է ստացել Կղեմէս Գալանոսի մօտ: Հայ կաթողիկէ ծէսով ձեռնադրուել է Փիրոմալիի կողմից, հայ կաթողիկէ աւանդութեան համաձայն (fu ordinato nel rito cattolico armeno da Piromalli nell'usanza cattolica armena)»: Բայց, չկարողանալով հայրենիք մեկնել, թէ՛ աղքատութեան եւ թէ՛ կաթողիկոսից վախի պատճառով, որովհետեւ ձեռնադրուած է հայ կաթողիկէ ծէսով (nel rito armeno cattolico), խնդրում է դրամական օգնութիւն եւ բնակավայր, քանի որ Ս. Մարիամ Եգիպտացու հայոց հիւրանոցը գրաւուած է հայ վաճառականների կողմից: Խնդրում է հաստատուն եկամուտ եւ կամ առաքելական պալատում բնակավայր, հակառակ պարագայում՝ հնարաւորութիւն նուիրուելու վաճառականութեանը, ինչպէս հայոց սովորութիւնն է» (SOCG, vol. 223, f. 383): Մեզ համար այդպէս էլ մութ է մնում խնդրագրում Փիրոմալիի կողմից ձեռնադրուած լինելը: Հաւատասփիւռի քարտուղարութիւնը համառօտում է պապին ուղարկուած խնդրագիրը՝ մակագրելով. «Խնդրագիրը փոխանցուեց Ս. Ժողովին» (SOCG, vol. 223, f. 381): Խնդրագիրը զեկուցւում է Հաւատասփիւռի Ժողովի 1668 թ. սեպտեմբերի 11-ի նիստում: Պատասխան է տրւում, որ Ս. Ժողովը իրաւասու չէ նման թոյլտուութիւն տալու (Acta, vol. 37, f. 181, n. 27):

Սրանով սպառւում են մեր տեղեկութիւնները Ներսէս Սարաֆիի մասին: Ինը տարի՝ 1660-1668 թթ., Հռոմում մնալուց յետոյ նա հաւանաբար անցել է Լեհաստան, որպէսզի կարողանայ ապրել որպէս քահանայ:

նրանցից երկուսին թոշակ հաստատեց, որոնցից մեկը, որ օժտուած էր բացառիկ յատկութիւններով եւ Ս. Ժողովից ռոճիկ էր ստանում, մի ամիս առաջ, երկար հիւանդութիւնից յետոյ, վախճանուեց Ս. Հոգի հիւանդանոցում[199]: Հռոմում ներկայումս գտնւում են չորս անձեր եւ միւսները շուտով հասնելու են: Հիմա կա՛մ պէտք է լուր ուղարկել, որ ճանապարհ չընկնեն եւ կամ՝ ընդունել նրանց՝ յօգուտ մեր սուրբ հաւատքի: Բայց այս տարրերը աւելի օգտակար են, որովհետեւ կրօնաւորներ (իմա՛ վարդապետներ – Մ. Կ.) են եւ ճանաչուած են իրենց հայրենակիցներից, քան այստեղ (Ուրբանեան վարժարան) պատրաստուած աշակերտները: Նկատելի է նաեւ, որ հայերը ունեն մասնական իրաւունք եւ առանձնաշնորհութիւններ»[200]:

Յիշուած առանձնաշնորհութիւնները ակնարկ է Նախիջեւանի եպիսկոպոս Cittadini-ի թողած դրամագլխին, որ պիտի յատկացուէր Հայոց համար մի վարժարան հիմնելու նպատակով: Առ այժմ միայն նրա շահն էր, որ տրամադրւում էր հայ ուսանողներին:

Բացուելիք վարժարանին գլխաւորաբար հետամուտ եղողը, բնականաբար, Գալանոսն էր, որի կարծիքը հարցնում է Հաւատասփիւռի քարտուղար գերապայծառ Alberici-ն ու ստանում է Գալանոսի 1660 թ. յունիսի 23-ով թուակիր գրաւոր պատասխանը. «Առաջարկում էք, որ ներկայացնեմ չորս աշակերտների՝ Հայոց վարժարանի սկիզբը դնելու համար: Ներկայիս մնացին միայն երեք հոգի, որովհետեւ նրանցից մեկը մեռաւ, իսկ (Առաքել) արքեպիսկոպոսն աշակերտ չէ: Ահա Աստուած ուղարկեց մի չորրորդի, որ այս նամակը Ձեզ է ներկայացնում: Սա Պոլսից է, ունի չորս փոքր աստիճան, ուզում է այստեղ ձեռնադրուել եւ դառնալ հայ կրօնաւոր: Այս տղային ճանաչել եմ Պոլսից, երբ դեռ մանուկ էր: Պոլսից մեկնելիս մի ամիս առաջ ինձ աշակերտեց, կաթողիկէ հաւատքը ընդունեց եւ յարեց Հռոմէական եկեղեցուն: Այժմ ուզում է միանալ ինձ, բայց նրան հրաման չի տրուել: Սովորել է Քերականութիւն, գիտի հայերէն գրական լեզուն, գիտի մի քիչ լատիներէն, ինչպէս նաեւ բաւականին խօսում է իտալերէն: Իր լեզուի մասնագէտ է, ունի նաեւ բանաստեղծական հոգի, բայց գլխաւորաբար սովորել է թուրքերէն, որին շատ հմուտ է. ամենադժուար թուրքերէն գրքերը հասկանում է, ու նմանին Հռոմում գտնել անկարելի է: Բացառիկ ձիրքեր ունի եւ խօսելու բա-

199 Պօղոս վարդապետի մասին մեր հաւաքած տեղեկութիւնները հետեւեալն են: 1659 թ. հոկտեմբեր ամսին արդէն Հռոմում էր, ուր խնդրագիր է ներկայացնում Հաւատասփիւռի Ժողովին: 1659 թ. նոյեմբերի 22-ի նիստի արձանագրութիւնում կարդում ենք. «Պօղոս վարդապետ հայ վանականը՝ Ս. Անտոնի կարգից, աւարտած լինելով Լիմ անապատ վանքում Սուրբ գրքի վերաբերեալ ուսումը, խանդով լցուած եկել է Հռոմ՝ կարդալու մի շարք գրքեր, որոնք հայերէնով տպագրուել են Ս. Ժողովի կողմից: Խնդրում է Նորին Սրբութիւնից, որ ուղարկուի մի վանք, ուր կը կարողանայ ապրել եւ նուիրուել ուսմանը, որպէսզի յաջորդաբար ծառայի Ս. Ժողովին՝ առաքելութեամբ նուիրուելով իր ազգին» (տե՛ս Acta, vol. 28, f. 208, n. 5): Պօղոս վարդապետի խնդրանքն ընդունւում է: Գալանոսը, յոյսերով լցուած, ծրագրեր է մշակում նրա վերաբերեալ՝ իբրեւ ապագայ Հայոց վարժարանի առաջին աշակերտի: 1660 թ. ապրիլի 12-ին Գալանոսը գրում է Հաւատասփիւռի քարտուղարին, թէ «մեր աշակերտ» Պօղոս վարդապետը, հինգ ամիս է՝ ջերմութեամբ գտնւում է S. Spirito հիւանդանոցում, ուր չնայած դեղերին ու խնամքին, «մարդուց աւելի ուրուականի է նմանւում»՝ վերածուելով կաշի եւ ոսկորի: Գալանոսը, միացած Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցուն, խնդրում է, որ Խաչատուր ճգնաւորը իբրեւ հիւանդապահ փոխադրուի Պօղոս վարդապետի մօտ (Տե՛ս SOCG, vol. 366, f. 3): Հաւատասփիւռի 1660 թ. մայիսի 24-ի նիստում զեկուցւում է, որ մի ամիս առաջ (իմա՛ 1660 թ. ապրիլի 24-ին) Պօղոս վարդապետը, որն օժտուած էր բացառիկ յատկութիւններով եւ ռոճիկ եւս ստանում էր Հաւատասփիւռի Ժողովից, երկար հիւանդութիւնից յետոյ վախճանուել է S. Spirito հիւանդանոցում (Տե՛ս Acta, vol. 29, f. 153, n. 33):

200 Տե՛ս Acta, vol. 29, f. 153, n. 33:

© National Library of

ցառիկ կարողութիւն, կարծէք լինի ոմն Պողոս առաքեալ. այնպէս որ, ապագայում կարող է պատրիարք լինել Պոլսում, ուր կայ 40.000 հայ: Շատ լաւ գծել գիտի, նուրբ ոսկերիչ է, գիտի փող նուագել: Ինքնուսոյց է, ուսուցիչ չի գտել, որ իրեն սովորեցնի: Այժմ եկել է՝ գտնելու ինձ: Պատրաստ է լինել լատին կրօնաւոր, բայց Աստուած նրան ուղարկել է այստեղ՝ ուրիշների հետ սկիզբը դնելու մի նոր կարգի հայ միսիոներ կրօնաւորների, ինչը որ միջոցն է հայերը դարձի բերելու: Անունն է Aidin, որ հայերէն թարգմանւում է Յայտնի»[201]:

Այս կերպով ձեւաւորւում է աշակերտների խումբը, սկզբում՝ ընդամենը չորս հոգի՝ տէր Յովսէփ քահանայ, Ներսէս դպիր, Այդին դպիր եւ Բարսեղ վրդ. Բարսեղեան, որը սկզբից պէտք է խմբի մաս կազմած լինէր, ինչպէս յաջորդաբար յայտնում է: Գործի քաջալերողը Հաւատասփիւռի քարտուղար Alberici-ն է, որին Գալանոսը գրում է 1660 թ. յուլիսի 22-ին՝ խնդրելով, որ աջակցի սկսուած գործին՝ տալով հարկաւոր հրամանները. «Եթէ քեզ հաճելի է, տո՛ւր հրաման, որ կառքով վեց անկողին փոխադրուի Արգենտինեան[202] (հրապարակ), նաեւ՝ սեղան ու ծածկոց, հինգը՝ հինգ աշակերտների համար եւ վեցերորդը՝ հայազգի Խաչատուր ճգնաւորի համար, որ տանը դռնապան պիտի լինի, իբրեւ սպասաւոր եւ սեղանատանը ծառայող, ժամկոչ եւ ուրիշ ծառայութիւններ կատարող՝ առանց վճարման: Պիտի տանք նաեւ վեղար (cappuccino), որպէսզի չտարբերուի միւսներից: Այս հայ աշակերտներին պէտք է շուտով հանենք Սրբուհի Մարիամ Եգիպտացու (Հայոց հիւրանոցի) մթնոլորտից այս տխուր ժամանակներում, որովհետեւ այնտեղ ուտելիքը միայն հաց ու պանիր է, ջուրը՝ վատ, ինչի պատճառով կարող են հիւանդանալ: Լաւ կլինի, որ հետայցի գաս նրանց սենեակը: Ես ամեն ինչ կանեմ, որ այս գործը անուանդ արժանի լինի, որովհետեւ դու ես մեկենասը եւ չպէտք է ինձ թողնես սրանց խեղճութեան մէջ: Սակայն յաջորդաբար չպէտք է ընդունենք, եթէ ոչ հայեր, որոնք կրօնաւոր են եղել (իմա՛ վարդապետ – Մ. Կ.), ինչպէս որ ցանկանում ես, հրաւիրելու եւ գրաւելու համար ուրիշներին: Այստեղ հասած վերջին աշակերտը, որ քեզ փոքր է թւում, 22 տարեկան է (արեւելցի), հասուն մօրուքով, բայց իր ընկերները սափրել տուեցին, որպէսզի քեզ աւելի երիտասարդ երեւայ»[203]:

Նոր հասած աշակերտի հետ միասին (որի անունն առայժմ անծանօթ է) խմբում հինգ հոգի էին՝ պատրաստ սկսելու դասընթացը:

Հայ վարժարանի սկիզբը եւ ընթացքը

Գալանոսի վարժարանի բացումը կատարւում է 1660 թ. օգոստոսի 1-ին: Սրբուհի Մարիամ Եգիպտացի հայոց հիւրանոցից հինգ աշակերտ փոխադրւում է S. Andrea della Valle թէաթինեանների մայրատունը: Խմբի հետ էին Խաչատուր ճգնաւորը՝ իբրեւ դռնապան, Առաքել եպիսկոպոս Շոռոթեցին՝ իբրեւ հաշուապահ եւ Գալանոսի համակիր: Այս մանրամասնութիւնները Գալանոսը հաղորդում է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին՝ 1660 թ. օգոստոսի 2-ով թուակիր նամակում՝ աւելացնելով, թէ դեռ կարիք կայ մեկի, որը խմբի համար գնումներ կը կատարի եւ խոհարարութիւն կ՛անի: Նշում է նաեւ, որ անհրաժեշտ է բոլորի համար կարել տալ միաձեւ կրօնական զգեստներ ու յատկապէս ապահովել սննդի պաշարը: «Սիրելի՛ գերապայծառ,- աւարտում է Գալանոսը,- թո՛ղ այս գործը սրտիդ մօտ լինի, մանաւանդ որ այժմ քո ձեռքումդ է, որի նմանը մինչեւ այժմ Հռոմի

201 Տե՛ս SOCG, vol. 366, f. 3:

202 Բնագրում գրուած է "Argentina", որ է թէաթինեանների վանքը՝ S. Andrea della Valle:

203 Տե՛ս SOCG, vol. 366, f. 8:

Armenia

մէջ չի հիմնուել: Սա շատ պտուղներ պիտի բերի, եւ քիչ ժամանակ յետոյ արդէն իսկ պիտի տեսնես զարգացումը, որովհետեւ հայ ազգը տրամադիր է կատարելու Հռոմի եկեղեցու հետ միութիւնը, եւ սրան պիտի աշխատակցել լայն բացուած բազուկներով, որպէսզի յաղթահարուեն դժուարութիւնները, որ սատանան յարուցում է»[204]:

Բացի Հաւատասփիւռի քարտուղարից, Գալանոսն ունէր մեկ ուրիշ մտերիմ բարեկամ՝ Diego Andronico անունով, որին աւելի մտերիմ լինելով՝ իբրեւ միջնորդ գործածում էր իր եւ Հաւատասփիւռի քարտուղարի՝ Mons. Alberici-ի միջեւ: Վարժարանի գործունէութեան առաջին ամիսն աւարտուելուն պէս, այն է՝ 1660 թ. օգոստոսի 22-ին, Գալանոսը գրում է Դիեգոյին, թէ վարժարանի համար շատ մտահոգ է ու ամեն կէտ մտածում է նրա սկզբնաւորութիւնը հաստատուն հիմքերի վրայ դնելու համար: Նկարագրում է նոյնիսկ խոհանոցի, կերակրացանկի վերաբերեալ իր հրահանգները. աշակերտներից մեկը գնուած ապրանքը կշռում է ու կազմում է համապատասխան ցանկերը՝ փակի տակ պահելով որոշ ուտելիքներ: Առաքել արքեպիսկոպոսը հետեւում է եղած ծախսերին, կատարում է վճարումները ու պատրաստում է երրորդ ցանկը: Ամեն շաբաթ երեք ցանկերը միասնաբար քննւում են, եւ վճարւում են եղած ծախսերը, իսկ աւելացած կամ խնայուած գումարը ծրագրւում է պահել արտաքին կարգի ծախսերի համար, այսինքն՝ ձմեռուայ ձէթի, ածուխի եւ այլ մանր ծախսերի, որոնք որեւէ տան մէջ չեն պակասում: Նոյն այս յաւելեալ գումարից Գալանոսը մտածում է լատիներէնի համար յարմար գրքեր գնել՝ աշակերտների գործածութեան համար: Ուստի Գալանոսը խնդրում է, որ Diego-ն միջնորդի Հաւատասփիւռի ժողովի քարտուղարի մօտ, ու վարժարանի ամսականը որոշուելու ժամանակ քարտուղարը առատաձեռն գտնուի՝ գործի սկզբնաւորութիւնը հաշուի առնելով, եթէ ուզում է, որ վարժարանը բարգաւաճի: Որովհետեւ եթէ խեղճ կերպով սկսի հիմնադրի (ակնարկում է Հաւատասփիւռի քարտուղարին) կենդանութեան ժամանակ, էլ աւելի խեղճութեան պիտի մատնուի, երբ քարտուղարը կարդինալ ընտրուի եւ ուրիշները ստանձնեն վարժարանի հոգսը: «Մանաւանդ որ,- գրում է Գալանոսը,- լսում ենք, թէ ուրիշ հայ կրօնաւորներ էլ ճանապարհ են ելել դէպի այս կողմերը, ու մի քանի ամսից կը լրանայ 12 թիւը»: Գալանոսն ուզում է, որ իր առաջին աշակերտները շուտով Հաւատասփիւռի ծախսով հագնեն միաձեւ տարազ, որպէսզի դեռ աւելի կանոնակարգուի վարժարանի կեանքը:

Նոյն նամակով Գալանոսը մատնանշում է վարժարանի բարգաւաճմանը նպաստող մեկ ուրիշ անհրաժեշտութիւն եւս. ինքը եւ P. Caracciolo-ն պէտք է ազատ լինեն իրենց միաբանական կեանքի պարտականութիւններից, որպէսզի առաւօտից երեկոյ կարողանան զբաղուել դասաւանդութեամբ՝ վանքի մէջ երկու սենեակ գործածելով իբրեւ դասարան: Նմանապէս ուղարկուեն այլ թէաթին միաբաններ, որպէսզի փոխն ի փոխ հսկեն աշակերտներին սերտողութեան պահին՝ «սովորեցնելով կրօնաւորական կեանքը եւ սրբագրուած ձեւով հայկական ծէսը՝ ու աղօթքների մէջ չսպրդեն հերետիկոսութիւններ ու սխալներ»:

Հսկայական էր Գալանոսի ծրագիրը: Նա ջանում էր, որ գործը մի որոշմամբ հաստատուի, որպէսզի յաջորդաբար, մեծաւորների փոփոխութեան հետեւանքով վարժարանը վնասներ չկրէր նրանց քմահաճոյքներից, եւ իւրաքանչիւրը գիտենար՝ որն է իր դերը վարժարանում: Հաւատասփիւռի ժողովին օգնելու համար Գալանոսը նոյնիսկ

204 Տե՛ս SOCG, vol. 366, f. 7:

լատիներէնով շարադրել է որոշման նախագիծը ու կցել նամակին: Եւ իրապէս, յետագայում Հաւատասփիւռի Ժողովն օգտագործել է այն՝ չնչին փոփոխութիւններով[205]:

Վարժարանի գործելուց մեկ ամիս անց դեռ ոչինչ չէր որոշուել վարժարանի համար նախատեսուած ծախսերի վերաբերեալ: Գալանոսը մտահոգ էր այս հարցով: Երբ հարցնում են նրա կարծիքը, 1660 թ. սեպտեմբերի 5-ին գրում է Diego Andronico-ին, որ իր թէաթինեան միաբանութիւնը չի կարող հոգալ վարժարանի ծախսերը, եւ այս նիւթի մասին նոյնիսկ չի խօսել չորս խորհրդականների եւ ոչ էլ ընդհանրական մեծաւորի հետ, որը գտնուում էր Լոմբարդիայում. իր միաբանութիւնն էլ սպասում էր Հաւատասփիւռի Ժողովի որոշմանը: Բայց Գալանոսը զգուշանում է իր անձնական կարծիքը յայտնել վարժարանին վճարուելիք ամսական թոշակի վերաբերեալ: Միայն յստակեցնում է, որ իր միաբանութիւնը անկարող է ստանձնել ծախսերը, քանի որ ինքն էլ է ապրում ողորմութիւններով: Ուստի Գալանոսն ակնկալում է ամեն տեսակի լուծում Հաւատասփիւռի քարտուղարից, որի ձեռքից երախտագիտութեամբ պատրաստ է ընդունել՝ ինչ որ որոշի[206]:

Գալանոսի թելադրանքով Հաւատասփիւռի Ժողովը 1660 թ. սեպտեմբերի 6-ի նիստում կայացնում է հայոց վարժարանի հաստատութեան որոշումը՝ ընդունելով, որ Գալանոսն էլ ազատ լինի իր միաբանութեան մէջ ունեցած պարտականութիւններից, որպէսզի ամբողջովին նուիրուի նորաբաց վարժարանի աշակերտութեան դաստիարակութեան գործին, իսկ վարժարանը պէտք է փոխադրուէր մի առանձին վարձու շէնքի մէջ: Սահմանուում է Գալանոսի գործունէութիւնը.

ա) ուսուցանել սաներին հաւատքի ճշմարտութիւնները, որպէսզի կարող լինեն հրաժարուելու հայոց ունեցած մոլորութիւններից եւ սխալներից,

բ) սովորեցնել հայերէն գրական լեզուն, իսկ ընդունակ անձերին՝ նաեւ լատիներէն,

գ) հայերէնով դասաւանդել փիլիսոփայութիւն՝ այնքան, որքան կարեւոր է աստուածաբանական կրթութեան համար,

դ) հայերէնով ներկայացնել հայոց սխալները, ինչպէս նաեւ դասաւանդել տեսական եւ բարոյական աստուածաբանութիւն,

ե) հսկել, որ աշակերտները ունենան ծիսական եւ կրօնաւորական կեանք՝ զգուշանալով, որ այստեղ չխառնուեն հայոց ունեցած սխալներն ու մոլորութիւնները,

զ) քանի որ աշակերտները ծանօթ չեն քաղաքին, հմտացնել նաեւ մատակարարութեան մէջ, որպէսզի շռայլ կերպով չծախսեն:

Գալանոսին յատկացուելու էր մի որոշ գումար, որպէսզի նրա միաբանութեան վրայ բեռ չլինի:

Քանի որ Գալանոսը ֆիզիկապէս տկար էր, իբրեւ օգնական էր ուղարկուում P. Giuseppe Caraccioli-ն, որը հայերէն գիտէր: Վերջինս եւս ազատ էր լինելու միաբանական պարտականութիւններից եւ որոշակի թոշակ էր ստանալու[207]:

Աշակերտների թիւը

Տարին չաւարտած՝ Fr. Picquet-ն Հալէպից գրում է Հաւատասփիւռի Ժողովի նախագահին, թէ Տրիպոլիից դէպի Հռոմ ճանապարհ են ընկել երկու վարդապետներ՝ տէր Յովհաննէս Յակոբին (Հոլով) եւ տէր

205 Տե՛ս SOCG, vol. 223, f. 58-61:

206 Տե՛ս SOCG, vol. 366, f. 9:

207 Տե՛ս Acta, vol. 29, f. 211, n. 1:

Armenia

Թոմաս Հայրապետը[208]: 1660 թ. դեկտեմբերին նրանք միանում են Գալանոսի աշակերտների խմբին[209]:

1661 թ. փետրուարի 17-ին Վենետիկի առաքելական նուիրակը գրում է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին, որ Վենետիկից Հռոմ է մեկնում Կարապետ վարդապետը, եւ խնդրում է ընդունել նրան Գալանոսի բացած հայոց վարժարանը[210]:

1661 թ. ապրիլի 5-ին 14 տարեկան Ստեփան անունով մի պատանի եւս դիմում է՝ ընդունուելու Ուրբանեան վարժարան, որպէսզի, քահանայ ձեռնադրուելով, օգտակար լինի տարածելու կաթողիկէ վարդապետութիւնը: Նրա խնդրագրի վրայ կայ քարտուղարութեան կատարած մեկնաբանութիւնը. Ուրբանեան վարժարանում պէտք է նախընտրութիւն տալ հայերին, սակայն քանի որ վարժարանում նրանց ծէսի համար դիւրութիւններ եւ յարմարութիւններ չկան, ստիպուած են գործել այնպէս, ինչպէս գործում են յոյների համար, այն է՝ ուղարկել նրանց յունաց վարժարան[211]: Անհնարին չենք համարում, որ Ստեփանն էլ յաջորդաբար մտած լինի Գալանոսի վարժարանը, սակայն որեւէ ապացոյց չունենք:

Հաւատասփիւռի Ժողովի 1661 թ. նոյեմբերի 14-ի նիստում զեկուցւում է «Գալանոսի աշակերտ», 22 տարեկան Յակոբ Գրիգորենցի խնդրագիրը՝ Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցուց ձեռնադրութիւն ստանալու վերաբերեալ[212]: Փաստօրէն նա եւս միացել էր Գալանոսի աշակերտների խմբին[213]:

Տէր Զաքարիա Աղամը, որը գտնւում էր Հռոմում իբրեւ Հաւատասփիւռի Ժողովի թարգման եւ Հռոմ հասնող հայ ուխտաւորների խոստովանահայր, եւս բերում է իր նպաստը նորաբաց վարժարանին: 1661 թ. մարտի 18-ին համաձայնութիւն է կնքում Գալանոսի հետ՝ վարժարանում գործածութեան համար խոստանալով ընդօրինակել հայերէն նոտրգրով քառաւետարանը՝ 7 սկուդ եւ 2 ճուլի ստանալու պայմանով: Նոյն թղթի ստորին հատուածում Զաքարիան ստորագրութեամբ հաստատում է, որ 1661 թ. ապրիլի 27-ին յանձնել է Աւետարանը եւ ստացել խոստացուած գումարը[214]:

Նոյն տարուայ մայիսի 15-ին Զաքարիան 26 սկուդով վարժարանին է ծախում մի ձեռագիր Խորհրդատետր եւ Աստուածաշունչ, որը բովանդակում է Եսայի, Սողոմոնի բոլոր գործքերը, Յոբ, եւ Նոր կտակարան (առանց աւետարանների)[215]: Դարձեալ

---

208 Տե՛ս SOCG, vol. 222, ff. 9-10:

209 Տէր Թոմաս Հայրապետի գործունէութեան մասին տե՛ս **Հ. Սահակ Ճեմճեմեան**, *Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ԺԷ. դար)*, Վենետիկ-Ս. Ղազար, 1989:

210 Տե՛ս SOCG, vol. 223, f. 72:

211 Տե՛ս SOCG, vol. 38, f. 47: Նոյն այս հատորում (f. 46) կայ իտալերէն մի վկայական՝ տրուած Fr. Silvestro Bendici դոմինիկեանից, որը վկայում է, որ հայազգի Ստեփանը ծնուել է Զմիւռնիայում, ջուղայեցի հօր եւ զմիւռնիացի մօր զաւակ է: Նա նշում է, որ ճանաչում է հօրն ու հօրեղբօրը: Հայրը Զմիւռնիայում է, իսկ հօրեղբայրը, որի մօտ գտնւում է Ստեփանը, Լիվոռնոյում է, հայածէս կաթողիկէ է: Զարմանալի է, սակայն, որ այս վկայագիրը ստորագրում է ոչ թէ որպէս "Fr. Silvestro Bendici", այլ՝ "Stefano armeno" (այս փաստաթղթին որեւէ անդրադարձ չունի Կարլո Լոնգոն Բենդիչիի մասին իր մենագրութեան մէջ, տե՛ս **Carlo Longo**, *Silvestro Bendici. Un missionario ca;abrese del secolo XVII*, Roma, Insituto storico domenicano (Institutum historicum fratrum praedicatorum. Dissertationes historicae, XXIV), 1998):

212 Տե՛ս Acta, vol. 30, f. 182, n. 8:

213 Յակոբ Գրիգորենցի մասին մանրամասն տե՛ս **Մերուժան Կարապետեան**, *Յակոբ Գրիգորենց. հայ մատենագիր (1639-՞),- «Հայաստանը եւ արեւելաքրիստոնէական քաղաքակրթութիւնը. Գ»*: Հայագէտ-կովկասագէտ Պաւէլ Զորանեանի (1948-2017) ծննդեան 70-ամեակին նուիրուած Հանրապետական գիտաժողով (մայիսի 17-18, 2018 թ.): Զեկուցումներ եւ զեկուցումների դրոյթներ.- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2018, էջ 91-113 :

214 Տե՛ս SOCG, vol. 223, f. 78:

215 Տե՛ս SOCG, vol. 223, f. 79:

նոյն տարուայ յուլիսի 4-ին Զաքարիան 12 սկուդով ծախում է մի ձեռագիր, որը բովանդակում է Հին կտակարանից տասներկու փոքր մարգարէութիւնները[216]: 1661 թ. օգոստոսի 30-ին Առաքել արքեպիսկոպոսը պայմանագիր է կնքում Գալանոսի հետ՝ 35 սկուդով վարժարանին տալու մի ձեռագիր Աստուածաշունչ, որը բովանդակում է միայն Հին կտակարանը: Բայց քանի որ ձեռագիրը 35 սկուդից աւելի արժէր, համաձայնում են, որ Առաքելը 35 սկուդ յետ դարձնելու պարագայում կարողանայ յետ ստանալ Աստուածաշունչը: Պայմանագիրը ստորագրում է միայն Առաքելը՝ «Io monsignore Arachiel Arciv.o di Scurut manu proprio»[217]:

Մինչեւ այս աշակերտները թէաթինեանների S. Andrea della valle մայրավանքից փոխադրուել էին S. Silvestro հրապարակի մօտ վարձու մի տուն, ուր կեանքը խաղաղ ընթանում էր:

Վարժարանը բացուելուց շուրջ հինգ ամիս յետոյ՝ 1660 թ. դեկտեմբերի 14-ին, Գալանոսը գոհունակութեամբ տեղեկութիւններ է հաղորդում Հաւատասփիւռի ժողովին՝ գրելով. «Հայ աշակերտներն արդէն իսկ իրենց տան մէջ կանոնաւոր կերպով հետեւում են կանոններին եւ ես գոհ եմ նրանցից՝ տեսնելով, որ օգուտ են քաղում հոգեպէս եւ ուսումնապէս, յարատեւ կերպով նրանց նուիրուելով, այնքան որ մի վայրկեան իսկ հանգիստ չեն թողնում ո՛չ ինձ եւ ո՛չ P. Caracciolo-յին (...): Մեծ դժուարութեամբ յանձն առան, որ որեւէ շաբաթ օր արձակուրդ անեն, որովհետեւ կիրակի օրերն էլ մինչեւ կէսօր անցնում ենք հոգեւոր կրթութեամբ, խոստովանանքով եւ հաղորդութեամբ: Մատուռի մէջ իրենցից մեկը համատուցում է պատարագը եւ միւսները հաղորդւում են: Նրանցից ոմանք արդէն իսկ աւարտեցին Տրամաբանութիւնը եւ ներկայում սովորում են Փիլիսոփայութիւնից անհրաժեշտ մասերը: Երկու աշակերտ մի քանի ամսից պիտի աւարտեն Քերականութիւնը, բոլորին դասաւանդւում է հաւատքի մասին մեր շարադրած գիրքը (իմա՛ Միաբանութիւն եկեղեցւոյն Հայոց ընդ Հռովմայ – Մ. Կ.): Վերջին ժամանողներից մեկը՝ տէր Բարսեղը, եւ տէր Յովհաննէսը, come giovani di grande insagno e riuscita, լրացուցիչ սովորում են լատիներէն: Փիլիսոփաները հրահանգւում են՝ առարկութիւններ անել եւ միմեանց հետ բանավիճել՝ այնպէս, ինչպէս սովորական է մեր վարժարաններում»[218]:

Այսպէս ահա վարժարանի կեանքը հունի մէջ էր ընկել եւ խաղաղ ընթանում էր, մինչեւ որ երկնքում կայծակը որոտաց եւ սկսուեց խռովութիւնը:

Վարժարանի ներքին խլրտումը

Վերեւում տեսանք, որ Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցին վարժարանի բացումից ի վեր մաս էր կազմում վարժարանի անձնակազմին՝ կատարելով հաշուապահի պաշտօնը: Վարժարանի բացումից շուրջ չորս ամիս յետոյ՝ 1660 թ. դեկտեմբերին, Առաքել արքեպիսկոպոսը մեկնում է Վենետիկ եւ 1661 թ. մայիսին վերադառնում Հռոմ: Արդէն յունիսին վարժարանի ներքին անդորրը սկսում է խռովուել: Այս մասին պատկերացում ենք կազմում 1661 թ. յուլիսի 8-ին Diego Andronico-ին գրուած Գալանոսի նամակից:

«Հայ աշակերտներից ստացուած գանգատի մասին՝ ամեն օր սիրտս խորապէս պատռւում է ցաւից...: Եղաւ քսան օր, որ սրանք սատանայի որս դարձան, չգիտեմ՝ ինչպէս կոչել ֆարֆարելի, թէ Առաքելի ձեռքով, որի ինչ հաւատք ունենալը չգիտեմ, որովհետեւ եթէ հայ լինէր, այսքան

216 Տե՛ս SOCG, vol. 223, f. 80:

217 Տե՛ս SOCG, vol. 223, f. 82:

218 Տե՛ս SOCG, vol. 223, f. 76:

Armenia

գայթակղութիւն չէր պատճառի: Այս աշակերտները՝ քաջալերուած կարդինալներից, ելան իմ դէմ, իսկ երբ դու պատուիրեցիր նրանց իմ մօտ գալ, դարձան սատանայ եւ ներկայումս առանձին շրջում են Հռոմի փողոցներում: Երէկ բժիշկը գնաց տուն՝ հիւանդ աշակերտին տեսութեան եւ նրան այնտեղ չգտաւ: Նախորդ օրը նոյն բանը կրկին պատահած լինելով՝ բժիշկը համբերութիւնը կորցրեց՝ ասելով, թէ այլեւս չպիտի գայ:

Այս շաբաթ, որ Ս. Գրիգոր Լուսաւորչի պահքն է, չեն պահում. դուրս են գնում ու գինով վերադառնում են: Իրենց հետ բերում են երշիկ՝ ուտելով իրենց սենեակում, իսկ սեղանից վերցնում են միայն պտուղը: Ձեն ուտում կերակուրը՝ գոռալով, թէ չեն ուզում ազրել համաձայն իրենց ծէսի, այլ սնուել իտալացու պէս: Կերակուրը սեղանատան կեղրոնում թափեցին:

Եղաւ 15 օր, որ ո՛չ խոստովանում են եւ ո՛չ պատարագ են մատուցում: Մինչդեռ անցեալում խոստովանում էին եւ շաբաթը երկու անգամ էլ պատարագում էին: Սիրտս պատռւում է՝ տեսնելով նրանց անհնազանդութիւնը եւ խոտոր ընթացքը: Ոչ մեկից չեն վախենում:

Երբ Հռոմ եկան, բոբիկ էին, տարազ հագած, ժուժկալ էին եւ պահեցող, ուտում էին միայն հաց եւ բանջարեղէն, ամենաշատը՝ միայն պանիր: Մեզանից, իրենց իսկ խօսքերով, երեք բան էին խնդրում՝ ճշմարիտ սրբութիւն, ուսումնական գիտութիւն եւ հաւատքի ճշմարտութիւն եւ թէ մի պատառ հացը իրենց բաւական էր: Ներկայումս ապստամբ՝ դժգոհ են իրենց շատ տրուածից: Եթէ ձայնս բարձրացնեմ, բանի տեղ չեն առնում: Այս ժողովրդի կեղծաւոր բնաւորութեանը այստեղ ոչ ոք տեղեակ չէ. ինձի էլ չեն հաւատում, ես, որ 25 տարի է ճանաչում եմ եւ վարժուած եմ:

Եթէ հաւատանք, որ սրանք Հայաստանի մէջ պիտի կարողանան բարիք անել՝ առանց այստեղ ապրելու իրենց ծէսի եւ աւանդութեան համաձայն, ինքնախաբէութիւն է, մանաւանդ թէ՝ գայթակղութիւն պիտի պատճառեն հայերին, եւ ծաղրի նիւթ պիտի դառնայ մեր հաւատքը:

Հայերը ասում են, թէ իրենց կրօնաւորները (իմա՛ վարդապետները — Մ. Կ.) եւ եպիսկոպոսները Արեւմուտք են գալիս՝ փախնելու համար իրենց ծոմերից եւ կանոնների խստութիւնից, որովհետեւ համոզուած են, որ առանց այդ խստութիւնների՝ չի կարելի պահել ողջախոհութիւնը: Հիմա, եթէ այս աշակերտները, առանց ուղիղ պահելու Լուսաւորչի պահքը, դառնան Արեւելք, ի՞նչ կարող են անել:

Խօսքս երկարեց, սակայն այս ժողովրդին պէտք է միշտ ճնշուած պահել՝ այնպէս, ինչպէս թուրքի լծի տակ են: Պէտք չէ հաւատալ նրանց կեղծիքներին, որովհետեւ երբ տեսնում են, որ իրենց կարեւորութիւն տուող կայ, ճոխանում են, ինչպէս ներկայումս արեցին՝ յաճախելով Հռոմի պալատները եւ գնալով կարդինալների մօտ, ամբաստանելով ինձ հազար ստերով, որպէսզի ազատուեն կանոններից, որոնց ենթակայ են»[219]:

Աշակերտների բողոքը

Այժմ տեսնենք, թէ աշակերտները ինչ կերպով են ներկայացրել հարցը եւ ինչ պատճառաբանութեամբ են դիմել Ս. Ժողովին: Մեր տրամադրութեան տակ ունենք երեք փաստաթուղթ՝ բոլորն էլ համաձայն սովորութեան ընդունուած անթուական: Առաջինը գրուել է վարժարանի աշակերտութեան անունից եւ ուղղուած է Հաւատասփիւռի Ժողովի կարդինալներին.

219 Տե՛ս SOCG, vol. 223, f. 24:

«Հայոց վարժարանի աշակերտները բազմիցս խնդրել են իրենց ուսուցիչ Կղեմէսից, որ դասաւանդի առաւօտեան եւ օրուայ մէջ, ինչպէս սովորութիւն է միւս վարժարաններում, սովորեցնի իրենց լատիներէն, որպէսզի ըմբռնեն (կաթողիկէ) վարդապետութիւնը եւ սուրբ Հայրերը: Իսկ թէ՛ լատինների եւ թէ՛ հայերի ծոմերը պահել տալով՝ իրենց անընդունակ է դարձնում հետեւելու ուսմանը: Տրուած կերակուրն աւելի յարմար է գերիներին, բայց ոչ աշակերտներին: Տօն օրերին զրկում է նրանց զբօսանքից. կերակուրի համար իրեն յանձնուած գումարից աւելացնում է, ինչպէս ասում է, վարժարանի համար գրատուն ստեղծելու համար: Գիշերը ժամը 22-23-ին է դասաւանդում, որից ոչ մի օգուտ չկայ:

Աշակերտները այս կերպով չեն կարող այլեւս շարունակել, ուստի խնդրում են տեղափոխուել Հաւատասփիւռի Ժողովի վարժարանը՝ լատիներէնով յառաջադիմելու համար, միւս ազգերի՝ յոյների, անգլիացիների, իսպանացիների, մարոնիթների նման, նաեւ ամէն տեսանկիւնից ապրելու հռոմէական եկեղեցու ծէսի եւ սովորութեան համաձայն, հագնուելով միւս ուսանողների նման (per vivere in tutto e per tutto secondo l'uso e rito della chiesa Romana e vestine come gli altri alunni), հակառակ պարագայում խնդրում են փակել վարժարանը...»[220]:

Երկրորդ, կրկին անթուական բողոքագիրը՝ ուղղուած Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին, պարունակում է նոյն գաղափարները՝ որոշ նոր յաւելումներով. «Հայ բարսեղեանները, նոյն ազգից Հռոմ ուսանող բոլոր աշակերտների հետ միասին, ներկայացնում էին իրենց վիճակը, թէ ինչպիսի վատ վիճակի մէջ են այս նոր վարժարանում եւ դժգոհ թէաթին Գալանոսից, որ նշանակուել է իբր իրենց վարժապետ: Սա խոստացել էր դասաւանդել իմաստասիրութիւն եւ աստուածաբանութիւն. եւ ըստ այնմ (աշակերտներից) Ձեզ խնդրագիր էր ներկայացուել՝ ունենալ իրեն իբրեւ վարժապետ: Այժմ նրանք իրենք իրենց խաբուած են զգում, որովհետեւ չի դասաւանդում, որպէսզի զարգանան, կարդում է հայերէնով, եւ ոչ լատիներէնով, որի մէջ նրանք ուզում են առաջադիմել, բացատրում է հաւատքի ճշմարտութիւնը, որի մէջ բաւարար զարգացած էին դեռ իրենց երկրում եղած ժամանակ:

Նմանապէս նկատել են տալիս, թէ վարժարանից դուրս Գալանոսը վատ է վերաբերուում իրենց, չի թողնում, որ յաճախեն լատիններին եկեղեցին, իսկ տան մէջ պահել է տալիս թէ՛ լատինների եւ թէ՛ հայերի ծոմերը:

Հիմա խնդրում ենք Ձեր միջամտութիւնը, որպէսզի կա՛մ տեղափոխուենք Հաւատասփիւռի վարժարանը եւ կա՛մ վերադառնանք հայրենիք, որովհետեւ չեն հասնում այն նպատակին, որի համար Հռոմ էին եկել իրենց երկրներից»[221]:

Երրորդ բողոքագիրը նոյնպէս ուղղուած է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին՝ ամբողջ աշակերտութեան կողմից ներկայացուած լատիներէնով. «Մենք՝ հայերս, խնդրում ենք, որ չնորհ անէք մեզ ընդունելու Սուրբ Եկեղեցում, այն է՝ վարժարան (իմա՛ Հաւատասփիւռի – Մ. Կ.), որպէսզի այնտեղ մնանք ինչպէս ուրիշներ (ազգեր) եւ կամ հրաման տուէք, որ գնանք՝ ուր ուզում ենք: Լսեցինք նաեւ, որ տէր Կղեմէսը Ձեզ Ցուշագիր է ներկայացրել, որպէսզի մեզ (Հաւատասփիւռի) վարժարանը չընդունէք. սակայն անկարելի է մնալ վարժարանից դուրս: Ուստի խնդրում ենք կա՛մ ընդունել (Ուրբանեան) վարժարան եւ կա՛մ բաց թողնել մեզ, որովհետեւ անկարելի է մեզի մնալ վարժարանից

220 Տե՛ս SOCG, vol. 366, f. 15:

221 Տե՛ս SOCG, vol. 366, f. 13:

դուրս եւ կամ հետեւել Հայր Կղեմէս Գալանոսի դասաւանդութիւններին»[222]:

Մեր կարծիքով՝ այս բոլորը շարադրուած են տէր Բարսեղի հոգով եւ գրչով, մանաւանդ որ՝ վերեւում տեսանք, որ Գալանոսից պատժուած լինելով՝ հակառակութեան ոգով մղուած էր գործում՝ չարախօսելով եւ զրպարտելով: Այս հոգեբանութիւնը այնուհետեւ պիտի դրսեւորուի նրա ամբողջ կեանքի ընթացքում, երբ յարում էր լատինականին, բացայայտ արհամարհում հայկական արժէքները: Թող սրա ապացոյցը լինի այն առաջին ինքնագիր բողոքագիրը, որ գրել է այդ օրերին նորաբաց վարժարանում սովորած լատիներէնով: Այն ուղղուած է Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին.

«Գերապայծառ Տէր մեր, exaudi nos. երէկ գնացի Գալանոսի մօտ, որ սաստիկ բարկացաւ՝ ասելով. «Հեռացի՛ր ինձանից, որովհետեւ ես ձեր բոլոր արարքները պիտի հաղորդեմ Սուրբ Ժողովին, որովհետեւ դուք բոլորդ մարդացած սատանաներ էք, գնացէ՛ք դժոխքի խորքը»: Իսկ ես՝ քո ծառայ Բարսեղս, ասացի նրան. «Ով մեր հա՛յր եւ վարժապետ, ինչո՞ւ ես այս ձեւով խօսում եւ ջղայնացած ես»: Բայց նա կրկին բարկացաւ եւ վռնդեց...: Այժմ խնդրում եմ ձեր միջամտութիւնը»[223]:

Գալանոսի պատասխանը

Շատ հաւանական է, որ եղած ամբաստանութիւնները Հաւատասփիւռի Ժողովը յանձնել է Գալանոսին՝ լսելու համար նրանից պատասխաններ, հնարաւորութիւն տալով, որ Գալանոսը արդարացնի ինքն իրեն: Սա մշտապէս եղել է Հաւատասփիւռի Ժողովի գործելակերպը: Եւ իրապէս, կայ Գալանոսի ընդարձակ պատասխանը, ուր պատմում է, որ տանմեկ ամիս առաջ, յատկապէս՝ երբ Առաքել եպիսկոպոսը Հռոմից դուրս էր, վարժարանի աշակերտ հայ կրօնաւորները հանդարտ էին, հնազանդ եւ ջերմեռանդ, պահում էին իրենց ծիսական բոլոր ծոմերն ու պահքերը:

Երբ Առաքել եպիսկոպոսը վերադառնում է Վենետիկից, իրեն արհամարհուած է զգում Գալանոսից, որովհետեւ վերջինս դպրոցի բանալին փոխանակ Առաքել եպիսկոպոսին վերադարձնելու, թողնում է փորձառու եւ տարեց Giulio-ի մօտ՝ թելադրելով, որ Diego Andronico-ին հաղորդի բոլոր այն անկարգութիւնների մասին, որ պատահել են, երբ Առաքել եպիսկոպոսը բնակւում էր վարժարանում: Առաքել եպիսկոպոսը պահանջում է, որ վարժարանից Giulio-ն հեռացուի, ու լսում է Գալանոսի պատասխանը, թէ առանց մեծաւորների հրամանի չի կարող նման քայլի դիմել: Գալանոսը համարձակւում է դիտողութիւն անել Առաքել եպիսկոպոսին, թէ չի կարող մնալ սեղանատանը՝ ժամերով խօսելով աշակերտների հետ անօգուտ նիւթերի մասին, եւ թէ Ս. Ժողովի հրահանգով պէտք է ճաշի եւ ընթրիքի ընթացքում ընթերցանութիւն կատարուի: Գալանոսն արգելում է Առաքել եպիսկոպոսի բարեկամ աշակերտներից մեկին գիշեր ժամանակ միասին վարժարանից հեռանալ:

Այս ամենի պատճառով վշտացած Առաքելը միանում է տէր Բարսեղի հետ, որ ուրիշ առիթով դառնացել էր Գալանոսից, եւ աշակերտութեանը առաջնորդում է ապստամբութեան՝ ասելով, թէ պարտաւոր չեն պահել հայոց ծոմերը: Բոլոր աշակերտները միանալով չեն պահում Հոգեգալստեանը յաջորդող Ս. Գրիգոր Լուսաւորչի պահքը, խաբում են Giulio խոհարարին՝ պահանջելով մսով կերակուր: Վրայ հասնելով՝ Գալանոսը յանդիմանում է նրանց՝ ասելով, թէ Ս. Ժողովից է տրուած հրահանգը եւ պէտք է պահել հայկական ծիսական աւանդութիւնները:

222 Տե՛ս SOCG, vol. 366, f. 15:

223 Տե՛ս SOCG, vol. 366, f. 26:

Գալանոսն իր դէմ եղած բողոքները առանձնացնում է չորս կէտով.

Առաջին՝ *քիչ է կերակրի քանակը: Գալանոսը պատասխանում է, որ բոլոր աշակերտներն էլ Հռոմ են հասել վտիտ, եւ աճել է նրանց քաշը եւ որ Giulio խոհարարն էլ է ուտում նոյն կերակուրը: Առանձին մի թղթի վրայ Գալանոսը շարադրել է վարժարանի կերակրացանկը ու յանձնել է Ս. Ժողովին ի գիտութիւն*[224]*: Տէր Յովհաննէսը (Հոլով) եւ տէր Թոմաս Հայրապետը ասել են Giulio խոհարարին, որ իրենց նոյն իսկ ուտիքի շրջանում միս ու գինի չտայ, որովհետեւ եղած կերակուրը բաւական է. առ այս Giulio-ն պատրաստ է երդուելու: Սակայն խումբը՝ առաջնորդուած տէր Բարսեղի կողմից, տեսնելով, որ կերակուրը համեմուած չէ, սեղանատան մէջ թափում են այն՝ ասելով, որ պարտաւոր չեն պահք պահել, պահանջում են ճարպոտ կերակուրներ: Սննդից դժգոհութեան համար է, ուրեմն, որ խումբն ապստամբում է Գալանոսի դէմ: Ազատելուելու համար նրանց բողոքից՝ նա Առաքել եպիսկոպոսին առաջարկում է ստանձնել պատասխանատուութիւնը, սակայն վերջինս հրաժարւում է՝ տեղեակ լինելով աշակերտների անկշտութեանը:*

Այս առիթով Գալանոսը յայտնում է, թէ տէր Բարսեղն անցեալում ըմբոստացել էր իր եւ Առաքել եպիսկոպոսի դէմ, քանի որ առաջարկում էին պատարագել սրբագրուած պատարագի համաձայն, իսկ Բարսեղը մերժում էր՝ պատարագի երկարութիւնը պատճառաբանելով: Երբ տէր Բարսեղը փորձում է ընկերներին ապստամբելու դրդել, Գալանոսը զսպում է նրան՝ երկու օր սենեակում բանտելով, տալով միայն հաց եւ ջուր, ինչից յետոյ տէր Բարսեղ նահանջում է: Սակայն առիթը ներկայանալուն պէս նա միանում է Առաքել եպիսկոպոսին՝ բորբոքելու այս ամբաստանութիւնները Գալանոսի դէմ:

Երկրորդ՝ *ամեն օր հաւատարիմ կերպով դասաւանդութիւն չի կատարւում: Գալանոսը պատասխանում է, որ զուտ զրպարտութիւն է, որովհետեւ կարճ ժամանակում նրանց դասաւանդել է քերականութիւն, տրամաբանութիւն, կարդացել է եկեղեցական պատմութիւն տպագիր գրքերով: Դասաւանդութիւնը կատարուել է հաւատարիմ կերպով, բացի շաբաթուայ մէջ մեկ օրից, իսկ երբ շաբաթուայ մէջ հանդիպել է պատուիրեալ տօն, դասերն անցկացուել են նախորդ օրը՝ ժամանակ շահելու համար: Գալանոսն ընդունում է, որ որոշ օրեր չի դասաւանդել, ինչի պատճառն այն է, որ կա՛մ աշակերտները Առաքել եպիսկոպոսի հետ բացակայել են, կա՛մ ինքն ունկնդրութեան է գնացել Հաւատասփիւռի Ժողովի քարտուղարին:*

Երրորդ՝ *դասաւանդութիւնը կատարուել է ոչ թէ առաւօտեան, այլ միայն կէսօրից յետոյ, եւ ուշ ժամի վարժարանը փակելով՝ դարձել են տուն: Գալանոսը սրան էլ պատասխանում է, որ այս կերպով է գործել, որովհետեւ աշակերտներն իրենք են ցանկացել՝ ասելով, թէ առաւօտեան լաւագոյն կերպով կարող են սերտել դասերը: Ամռանը, չնայած Գալանոսը փոխել է օրակարգը, որպէսզի առաւօտեան էլ կատարուի դասաւանդութիւն, տէր Բարսեղը եւ տէր Յովհաննէսը մերժել են դալ լատիներէն քերականութիւն սովորելու՝ ասելով, որ, առանձին սովորելով, աւելի շատ օգուտ են քաղում: Եւ որովհետեւ P. Giuseppe Caracciolo-ն դասաւանդողներից մեկն է, կատարել է մի գրաւոր առանձին յայտարարութիւն, թէ տէր Բարսեղը եւ տէր Յովհաննէսը առաւօտները չեն գալիս լատիներէնի դասին, հակառակ իր եւ Գալանոսի պնդումներին, իսկ ամեն կէսօրից յետոյ կանոնաւոր կատարւում է վեց աշակերտների հետ մնացած դասաւանդութիւնը*[225]*:*

224 Տե՛ս SOCG, vol. 366, f. 23:

225 Հմմտ. SOCG, vol. 366, f. 25:

Չորրորդ *ամբաստանութիւնն այն է, թէ Ս. Ժողովից սննդի համար նախատեսուած գումարով գնում են հայկական ձեռագրեր: Գալանոսը պատասխանում է, որ աշակերտների սնունդը աւելցուկով ապահովելուց յետոյ ձեռագրեր գնելու նպատակով յատկացուել է աւելացած գումարը, այն էլ՝ միայն աշակերտների կրթութեան համար, իբրեւ անհրաժեշտ միջոց, որպէսզի հայ ժողովուրդը չասի, թէ իրենց վարդապետները Հռոմ են գնում՝ մէջքին չուստերը կապած եւ ծոմապահութեամբ, ու վերադառնում են լատինների բարքերով եւ մտայնութեամբ*[226]:

Հաւատապիւռի Ժողովի նիստը

Հայոց վարժարանում ծագած խլրտումը չէր կարող անտարբեր թողնել Հաւատասփիւռի Ժողովին, որի որոշումով եւ հսկողութեամբ էր բացուել եւ առաջանում էր վարժարանը: 1661 թ. յուլիսի 12-ի նիստում քննում են թէ՛ աշակերտների գրած բողոքները եւ թէ՛ Գալանոսի տուած պատասխանը: Այդ ամենը գրեթէ բառացի կերպով համառօտուած է նոյն նիստի արձանագրութեան մէջ, որի վերջում կայ քարտուղարութեան մեկնաբանութիւնը. «Այս բոլոր մանրամասնութիւնների մասին հարցաքննուեցին աշակերտները եւ պարզուեց, որ նրանցից երկուսը (իմա՛ տէր Բարսեղը եւ Յովհաննէս Հոլովը – Մ. Կ.) հասկանում են լատիներէն, գիտեն նաեւ գրել, թէեւ՝ շատ սխալներով, խօսել չգիտեն: Երբ նրանց հարցրին, թէ ինչպէս գիտեն, երբ գանգատւում են, որ իրենց չի դասաւանդւում լատիներէն, պատասխանեցին, թէ ինքնուրոյն են սովորել Գալանոսի տպած Քերականութեան յաւելուածի հայերէն-լատիներէն բառարանից...:»

«Ես,- գրում է քարտուղարը,- յսեցի երկու կողմերին, եկայ հետեւեալ եզրակացութեան: Իրաւ է, որ օրուայ մէջ մեկ կամ երկու անգամ են գնում վարժարան եւ մնացած ժամերին աշակերտները մնում են առանց առաջնորդի: Առաքել արքեպիսկոպոսը վարժարանին աւելի վնասակար է, քան օգտակար: Գալանոսն իբրեւ օգնական առել է մի խոհարարի եւ յաջորդաբար նրան կարգել է մառանապետ, ու որովհետեւ սա հաւասարակշիռ անձ է, ժամանակի ընթացքում տէր է դարձել դպրոցին: Լաւ կը լինի իբրեւ օգնական Գալանոսին մի քահանայ տալ: Պէտք է աշակերտներին սովորեցնել (լատիներէն) լեզուն, որպէսզի յարաբերութեան մէջ մտնեն Ս. Ժողովի հետ, եւ սա բերի իր նպաստը վարժարանին: Թէեւ Գալանոսը շատ եռանդուն է, եւ աշակերտները՝ բարբարոս եւ պէտք է երախտագիտութեամբ Գալանոսի ոտքերը համբուրէին, սակայն ինքն էլ վարմունքի մէջ թերանում է: Առաքել արքեպիսկոպոսը մի բարի օրինակ չէ աշակերտների համար, մանաւանդ թէ՝ իր կեանքով գայթակղութիւն է պատճառում նրանց եւ երբ հեռացել է վարժարանից, այնտեղ նորից տիրել է խաղաղութիւն: Լատիներէն, որ գիտեն, սովորել են Գալանոսից, իսկ իրենց ասածը, թէ ինքնաշխատութեամբ են սովորել, զրպարտութիւն է, ինչը կատաղեցրել է Գալանոսին:

Սննդի վերաբերեալ. *Գալանոսի արածը ճիշտ չէ, որովհետեւ կարող էր դիմել Ս. Ժողովին: Ես հանդարտեցրի Առաքել արքեպիսկոպոսին ու աշակերտներին, թէ մի նոր վարժապետ գտնելով՝ ամեն բան պիտի կարգաւորուի: Սակայն հարցը մնում է այդ վարժապետին գտնելը:*

Ուսման վերաբերեալ. *միայն Գալանոսը կարող է դասաւանդել, որովհետեւ գիտի հայոց լեզուն, ուստի աշակերտները պէտք է գիտենան կրել եւ լռել: Յորդորեցի, որ գնան եւ ներողութիւն խնդրեն Գալանոսից, որպէսզի ուսումը շարունակի: Նրանք մերժում են, մանաւանդ թէ, մտնելով խոհանոց՝ կոտրել են ափսէները եւ կերակուրը*

226 Տե՛ս SOCG, vol. 366, f. 19-21:

թափել՝ ասելով, թէ Գալանոսի անունն անգամ լսել չեն ուզում: Աշակերտները պահանջում են առանձին տուն եւ եկեղեցի, կամ տեղափոխուել Ուրբանեան վարժարան, եւ կամ վերադառնալ իրենց հայրենիքը: Չեմ կարող չյիշել կարդինալ Orsini-ի խօսքերը վարժարանը հիմնելիս. «Ս. Ժողովը շուտով պիտի իմանայ, թէ ինչ կերպասից են այս աշակերտները»[227]:

Այս մանրամասն տեղեկութիւնները լսելուց յետոյ ժողովականները որեւէ որոշում չեն կայացրել, այլ հարցը փոխադրել են մի այլ ժողովի, որպէսզի աւելի խորը քննեն եւ ներկայացնեն Հաւատասփիւռի ժողովին: Խոստովանենք սակայն, որ դիւանում չհանդիպեցինք յատուկ ժողովի որեւէ արձանագրութեան: Տարակուսելի կը լինէր նաեւ, եթէ գումարուած լինէր, որովհետեւ այնուհետեւ որեւէ արձագանք չենք գտնում Հաւատասփիւռի սովորական ժողովական նիստերում:

Վարժարանի փակումը

Թէ ինչն է եղել ներքին գժտութեան արդիւնքը, չենք կարող որոշակի մի բան ասել: Այնպէս է թւում, որ վարժարանը շարունակել է գործել աշակերտների նոր թուով մինչեւ 1662 թ. Զատիկը:

Աշակերտներից հաւատարիմ էր մնացել Ներսէս դպիրը, որը ձեռնադրուելու համար խնդրագիր է ներկայացնում՝ նկարագրելով Գալանոսի մօտ կատարած ուսման ընթացքը. նախ՝ սովորել է գրաբար քերականութիւն, ապա՝ փիլիսոփայութիւն՝ «յաղագս գիտութեան Աստուծոյ եւ յաղագս կամացն Աստուծոյ եւ յաղագս կատարելութեան Աստուծոյ եւ յաղագս խորհրդոյ երրորդութեան Աստուծոյ եւ յաղագս մարդեղութեան բանին եւ յաղագս հրեշտակաց, զոր այժմոյս կատարեցաւ: Նա եւս ուսանիմ առ ի վիճաբանութեանցն ի վերայ մոլորութեանցն Հայոց»[228]:

Փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան մի խտացեալ դասընթաց է, որ Գալանոսը անցկացրել է երկու տարուայ ընթացքում՝ աւարտելով 1662 թ. Զատկին: Գալանոսը, ամենայն հաւանականութեամբ, ցանկանում էր, որ վարժարանը շարունակի գործել: Նա Հաւատասփիւռի Ժողովին է ներկայացնում անթուական մի յուշագիր, ուր ասում է, որ Հայոց վարժարանի սակաւաթիւ աշակերտները Զատկին աւարտելու են երկու տարուայ աստուածաբանութեան եւ հակաճառութեան դասընթացը եւ մեկնելու են՝ վարժարանը թողնելով դատարկ: Քառասուն օր առաջ Հայաստանից Հռոմ էր հասել Օգսենտիոս անունով մի հայ պատանի եւ անցել էր Լեհաստան: Նա փափագում էր աշակերտել վարժարանում:

Ուրբանեան վարժարանում 1661 թ. մայիսից ի վեր գտնւում էին երկու հայ աշակերտներ՝ Գրիգոր որդի Եաւրի (Gregorio d'Auria) եւ Պետրոս Պետիկը, երկուսն էլ «Հայ հերձուածող ազգից, որոնք սովորում են միայն լատիներէն: (Գալանոսը) նկատել է տալիս, որ երբ այս աշակերտները Հայաստան վերադառնան, առանց հայերէն կարդալ իսկ իմանալու, առանց իրենց գրական լեզուն ճանաչելու, առանց իրենց ծէսը գործադրելու, ոչ մի օգուտ չպիտի կարողանան անել, ո՛չ պիտի գնահատուին եւ ո՛չ էլ պիտի ընդունուեն իրենց հայրենակիցների կողմից: Ուստի լաւագոյնը պիտի լինէր նրանց տեղափոխել այս վարժարանը, ուր կը կարողանային սովորել ոչ միայն լատիներէնը, այլ նաեւ հայերէնը, եւ հայերէնով միւս գիտութիւնները՝ պահելով իրենց ծէսը, սովորելով իրենց եկեղեցական արարողութիւնները: Այն օրից, երբ այս վարժարանի մէջ դրուի մի լատին մեծաւոր իբրեւ առաջնորդ, ամեն ինչ շատ մեծ խաղաղութեամբ, օրէնքով ու հնազանդութեամբ

227 Տե՛ս Acta, vol. 30, f. 93, n. 1:

228 Հմմտ. SOCG, vol. 223, f. 4:

կարգի կը գայ»[229]: Գալանոսի այս անթուակիր գրութիւնը զեկուցւում է Հաւատասփիւռի 1662 թ. փետրուարի 28-ի նիստում, եւ ոչինչ չի որոշւում, որովհետեւ Ս. Ժողովում արդէն սկսել էին Գալանոսի հետ կապուած տարբեր ծրագրեր մշակել:

Նոր աշակերտներ չունենալու պատճառով, Հաւատասփիւռի Ժողովի բարեհաճութեան նուազման արդիւնքում հայոց վարժարանը փակւում է՝ երկու տարուայ կարճատեւ կեանք ունենալուց յետոյ: Առաքել արքեպիսկոպոսը եղած խռովութիւնից յետոյ խնդրանք է ներկայացնում հեռանալու վարժարանից, ուր բնակւում էր եւ ունէր առանձին սենեակ: Հաւատասփիւռի Ժողովի 1661 թ. դեկտեմբերի 16-ի նիստում որոշւում է ընդունել նրա առաջարկը, մանաւանդ որ՝ կարդինալները համոզուած էին, որ նա էր գլխաւոր պատճառը վարժարանի ներքին խռովութեան: Նրա համար սահմանւում է ամսական երկու սկուդ՝ անձնական ծախսերի համար[230]: Խաչատուր ճգնաւորը, որն ընդունուել էր վարժարանում իբրեւ դռնապան եւ սեղանադիր, 6-7 ամիս յետոյ կամաւոր կերպով հեռանում է՝ առանձնանալու եւ ճգնելու Հայոց հիւրանոցում[231]:

Վարժարանի խոհարար Giulio Baltrini-ն վարժարանի փակուելուց մեկ տարի յետոյ՝ 1662 թ. մայիսին, երբ արդէն 70 տարեկան էր, դիմում է Հաւատասփիւռի Ժողովին՝ ընդունուելու S. Sisto-ի աղքատանոցը, որեւէ ծառայութիւն մատուցելու նպատակով: Խնդրագրում յիշատակում է, որ «երկու տարի գործել է իբրեւ մատակարար եւ խոհարար Հայոց վարժարանում, որ վերջերս փակուեց»: Մի վկայական էլ նրան տալիս է Գալանոսը՝ ներկայացնելով որպէս խղճամիտ եւ հաւատարիմ անձ:[232]

Այս կերպով փակւում է Գալանոսի կողմից Հռոմում հիմնուած Հայոց վարժարանը, որը գուցէ աւելի երկար կեանք ունենար, եթէ Գալանոսը գիտենար սիրաշահել աշակերտութեանը:

Լէոպոլսի Հայոց վարժարանը

Գալանոսի գործունէութեան ուսումնասիրութիւնը աւարտելու համար չենք կարող չանդրադառնալ նրա կեանքի վերջին երեք տարիներին, որ անց է կացնում Լէոպոլսում, ուր գնացել էր գործելու իբրեւ քարոզիչ եւ յատկապէս՝ բացելու Հայոց վարժարան:

Այս վերջին հատուածն ուսումնասիրելը մեր ծրագրից դուրս է, այն հրաշալիօրէն ուսումնասիրուած է Գրիգոր Պետրովիչի մենագրութիւնում[233], ուր կարելի է գտնել մանրամասնութիւններ ոչ միայն Գալանոսի բացած վարժարանի, այլեւ յարակից պատմութեան եւ Գալանոսի գործունէութեան մասին: Ստորեւ համառօտում ենք Հայոց վարժարանի վերաբերեալ ամենակարեւոր տեղեկութիւնները:

Լեհահայոց արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի եւ հայերի խնդրանքին ընդառաջելով՝ Հաւատասփիւռի Ժողովը համաձայնում է, որ Գալանոսը Հռոմից անցնի Լէոպոլիս: 1663 թ. հոկտեմբերին Գալանոսը իր կրօնակից Թէատին Պիդուի եւ Բոնավէնտուրայի հետ մեկնում է Հռոմից: Կրելով ճմռան դժուարութիւններն ու քաղաքական աննպաստ պայմանների հանդիպելով՝ 1664 թ. մայիսի 1-ին մտնում է Լէոպոլիս:

Սկզբնական շրջանում նա չի արժանանում պէտք եղած ընդունելութեանը ո՛չ հայ իշխաններից եւ ո՛չ Թորոսովիչից, որոնք, սակայն, չորս հաւաքոյթից յետոյ,

229 Հմմտ. SOCG, vol. 223, f. 97:
230 Տե՛ս Acta, vol. 30, f. 227, n. 2:
231 Տե՛ս Acta, vol. 30, f. 212, n. 10:
232 Հմմտ. SOCG, vol. 366, f. 33-36:

233 Տե՛ս **Gregorio Petrowitcz**, *L'Unione degli Armeni di Polonia con la Santa Sede (1626-1686)*, Roma, 1950 (Orientalia christiana analecta 135):

փոխում են իրենց վերաբերմունքը Գալանոսի նկատմամբ եւ շահերից մղուած՝ փափագում են, որ Գալանոսը ձեռնարկի հայոց վարժարանի բացումը: Թորոսովիչը յոյս ունէր, որ վարժարանի մատակարարութիւնն իր ձեռքն առնելով՝ նիւթական որեւէ օգուտ կ'ունենար: Սակայն իմանալով եպիսկոպոսի շահասիրութիւնը՝ ժողովուրդը համաձայնում է, որ Հաւատասփիւռի Ժողովն ամբողջովին ստանձնի մատակարարման պատասխանատուութիւնը:

Լէոպոլիս հասնելուց երկու ամիս յետոյ, յաղթահարելով դժուարութիւնները, Գալանոսը Հաւատասփիւռի Ժողովին տեղեկացնում է, որ բացել է հայոց վարժարան՝ 12 աշակերտներով, որոնց դասաւանդում է հայերէն եւ լատիներէն, որպէսզի յաջորդաբար նոյն լեզուներով շարունակեն սովորել գիտութիւններ եւ աստուածաբանութիւն: Վարժարանի տնտեսական մասը պիտի հոգար Հաւատասփիւռի Ժողովը, սակայն, ըստ սովորութեան, Հռոմից գալիք օգնութիւնը ուշանում էր: 1664 թ. նոյեմբերին Գալանոսին գրում են, որ Հաւատասփիւռի Ժողովը 400 սկուդ է ուղարկել նոր բացուած վարժարանի համար, ուր պէտք է պատրաստուէին լեհահայոց ապագայ քարոզիչ վարդապետները՝ Գալանոսի սկսած գործը շարունակելու համար:

Նոյն տարուայ դեկտեմբերին 400 սկուդը հասնում է Գալանոսին: Բայց Հաւատասփիւռի Ժողովը ուզում էր իմանալ իւրաքանչիւր աշակերտի հայմար եղած ծախսը, որպէսզի դրա համաձայն սահմանէր ուղարկուելիք դրամագլուխը միայն սահմանափակ թուով աշակերտների համար: Գալանոսը կատարում է անհրաժեշտ գնումները ու մնացած գումարով կարողանում է պահել սակաւաթիւ աշակերտներ: 1665 թ. մայիսի 6-ի նամակում գրում է Հաւատասփիւռի փոխքարտուղար Manfroni-ին, որ Ս. Ժողովի համար պատուաբեր պէտք է լինէր այդքան երկար տարիներ սպասուած հայոց վարժարանի սկզբնական շրջանում վեց աշակերտից պակաս պահելը: Նոյն թուականին վարժարանում կար հինգ աշակերտ, սպասւում էր վեցերորդը: Նրանք սկսել էին կանոնաւորել կեանքը՝ Հռոմի սրբագրութիւններով յագեցած ամենօրեայ ձայնաւոր պատարագով:

Վարժարանը պաշտօնական կերպով բացւում է 1665 թ. փետրուարի 24-ին: Գալանոսի համար կարեւոր էր աշակերտների թուի աճը, որովհետեւ հայերը տարածուած էին Լեհաստանում, եւ ամեն տեղ պահանջ կար քահանայի եւ հոգեւոր հովուի: Գալանոսի պնդմամբ՝ Հաւատասփիւռի 1665 թ. մայիսի 15-ի նիստում որոշւում է վարժարանի աշակերտութեան թիւը հասցնել 12-ի՝ աւելացնելով մի երրորդ ուսուցիչ եւս: Յատկացւում է տարեկան 600 սկուդ: Գալանոսը բացատրում է, որ կայ նաեւ վարժարանի շէնքն ընդարձակելու կարիք, եւ դրական պատասխան է ստանում 1665 թ. նոյեմբերի 9-ի նիստում:

1666 թ. ապրիլ 15-ին՝ իր մահից մեկ ամիս առաջ, Գալանոսը Հաւատասփիւռի Ժողովին տեղեկացնում է, որ շինարարութիւնն աւարտել են, եւ շէնքի ճակատամասում լատիներէնով գրուած է "Collegiarum Armenorum Alumnorum" (Հայ աշակերտների վարժարան), զետեղուած է երեք զինանշան՝ կենտրոնում՝ պապինը, աջ կողմում՝ թագաւորինը եւ ձախում՝ հայ արքեպիսկոպոսինը:

Վարժարանի էական կենսագործունէութիւնը ապահովելուց յետոյ նրա հիմնադիրը՝ Գալանոսը, անակնկալ կերպով վախճանւում է 1666 թ. մայիսի 14-ին՝ թողնելով գործը իր օգնական P. Luigi Pidou-ին:

Գալանոսի թէաթին գործակիցներից մեկը նոյն օրերին Լվովում հետեւեալ ամփոփել է վերջինիս կեանքն ու գործը. «... յամին 1666 ի 14-ըդի աւուր Մայիսի փոխեցաւ յերջանիկ կեանս ինքն Հ. Գալանոս ...: Էր նա այր արդարեւ առաքե-

լական, յորում զարմանապէս բարեխառնեալ էր բարեպաշտութիւն ընդ ուսման եւ ընդ մեծի յոյժ եռանդեան կրօնից: Յորժամ առաքեալն էր ի պապէն Ուրբանոսէ Ը. ի Վիրս՝ ընթերցմամբ եւեթ գրոց, առանց իրիք օժանդակութեան հրաշիւք իմն ուսաւ զգրաբառ լեզուն Հայոց եւ յայն լեզու շարագրեաց մատեանս բազումս երեւելիս պատմութեանց եւ վիճաբանութեանց: Իբրեւ առաքեցաւ անտի ի քաղաքն Կ. Պոլսոյ ի հունձս արդիւնաւորագոյնս՝ հրապարակական քարոզութեամբք իւրովք արժանի եղեւ շուրջառի վարդապետաց Հայոց, հակառակ հրամանաց իշխանաց. եւ զի պատրիարքս Հայոց բազումս եւ եպիսկոպոսունս եւ զորս խոնարհագոյնք էին՝ դարձոյց ի հերձուածոյն ի ճշմարիտ վարդապետութիւն՝ կալան զնա Տաճիկք եւ դատեցին ի մահ: Այլ ըստ յաջողութեան բաղդի փրկեաց զնա ի մահուանէն դեսպանն Գաղղիացւոց դը լա Հէ (de la Haye)»: Յետ այնորիկ դարձաւ Գալանոս ի Հռովմ, ուրանոր յընթացս քանի մի ամաց մինչեւ ցօրն մեկնելոյ անտի ի Լեհս՝ տքնէր զօրհանապազ վասն ժողովրդեան Հայոց: Ի մեռանելն իւրում ցանկացաւ, զի թաղեսցի մարմին իւր ի գերեզմանս մայր եկեղեցւոյն Հայոց, ուր եւ հանգչի մինչեւ ցայսօր ընդ որմով նորոյ հանդերձատանն, յարեւմտից կուսէ»[234]:

234 Տե՛ս Բոնի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռովմայ. Ժամանակակից յիշատակարանք: Ս. Պետերբուրգ, 1884, էջ 178: Գալանոսի տապանագիրը տե՛ս **X. D. Kajetanowicz**. *Katedra Ormiańska i jej otoczenie (Przewodnik)*, Lwów, 1926, p. 6:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

1. Յովհաննէս արքեպիսկոպոս Եդեսացու նամակը Ուրբանոս Ը. պապին (1627 թ. ապրիլի 5) [235]

Ուրպանոս աւգտավօ

Աստուծոյ հաւր մարդասիրէ էացեալ, Աստուած որդոյ ստեղծագործեալ, յԱստուած հոգւոյն շնորհազարդեալ, եռակի եւ եզական սուրբ երրորդութեամբն ընտրեալ, մաքրեալ եւ կոչեալ վեհափառ եւ գերապատիւ բարձրացեալ գահ, իննակի դասապետութեանց աստիճանի համանման, անլռելի փառաբանչացն դասի, եւ գլուխ քահանայապետական կարգի եւ թագաւորական ճոխութեամբ, վերամբարձ փառաւք փառաւորեալ սուրբ հայրապետ առաքելաշնորհ եւ քրիստոսապսակ փա՛ռ, սուրբ աթոռոյն մեծին Պետրոսի վիմին հաւատոյ փոխանորդ նորին:

Շնորհիւ Տեառն նստեալ ի վեհափառ գահի, մեծանիստ լայնատարած եւ բարձրաբերձ աշտարակաւք, հաստակառոյց բրգամբք եւ գեղեցկազարդ հրաշակերտեալ աստուածաշէն մայրաքաղաքին մեծն Հռոմայ. իմաստուն եւ իմաստութեամբ լցեալ ազգաց լատինացւոց թագ եւ պարծանք հանուրց քրիստոնէից, արեգակնափայլ ճառագայթ տիեզերաց եւ ջահ անշիջանել[ի] կաթուղիկէ եկեղեցոյ, լոյս լուսատու մանկանց նոր Սիովնի, փառք եկեղեցականաց դասուց, գլուխ հայրապետաց, պետ վարդապետաց, կարգ եւ քանոն քահանայից, ուղղիչ սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց. պսակ լուսեղէն եւ պարծանք թագաւորաց, վայելչութիւն իշխանաց, ցնծութիւն արքայից, պետաց եւ կողմակալաց, աւգնական եւ ձեռնտու փոքուց եւ մեծամեծաց, խնամատար տկարաց եւ աւտարաց, սփոփիչ կարաւտելոց եւ աղքատաց, կերակրիչ քաղցելոց եւ ծարաւեաց, բժիշկ հիւանդաց եւ ողջացուցիչ վիրաւորելոց, դեղ ցաւոց եւ քաւիչ մեղուցելոց, փառք եւ պարծանք, ցնծութիւն եւ ուրախութիւն ամենայն հանուրց քրիստոնէից. հոգեղէն լուսեղինաց նմանեալ հրեշտակացեալ ի մարմնի եւ մարդդ երկնային, լուսազարդ եւ լուսազգեաց այր, տիպ պիրական եւ պատկեր տենչալի, շնորհազարդեալ եւ յաւրինեալ ձեռամբ արարչին, լցեալ եւ[թն]արփեան շնորհօք եւ երկոտասան փառաւք որպէս զմարդն առաջին, նախ քան զյանցանելն ի մէջ ատենայ դրախ[տին] եւ այժմ հոգիացեալդ մարմնով. ի սուրբ դրախտացեալ եկեղեցի, դէտ եւ իշխող եւ հովիւ քաջ բանաւոր հաւ[տին] հալածող գայլոց ի հօտէն Քրիստոսի, լեառնդ բարձրացեալ հանգոյն վերնոյն Սիովնի եւ դրախտ ծաղկեալ անթ[...]մելի, ծառ մեծաշուք, տերեւախիտ, անթառամ ծաղկօք ի լի, անմահական պտուղ տրվեալ ի դիպող [...]բեւր քառասուղխ առ ծառովդ հոսեալ ի վտակի, արբուցանելով զերկիր ցամաքեալ, որք են ծարա[...] եւ ազինք առ քեզ ժողովեալ, դու հովանացեալ առ ամենայնի: Այգի վայելուչ պտղով բազմալի, գունա[...] առ երփն, տեսողքն հիասցի, բաժակ բերկրութեան ի քէն բղխեալ յարբումն իմաստի, սգոյ փարատի[...] արար գինի բերկրալի, ով համարձակի զգովեալդ գովել գովեալ յամենայնի, սիրով խօսեցաք զսակաւս առ քեզ. Է՛ աստուածաշէն քաղաք շինեալ ի վերայ լերինն անթաքչելի, տեղի ապաւինութեան տուն եւ տաճար եւ բնակա[ران] սուրբ հոգոյն, սուրբ հայրապետ Հռոմայ քո ի Տէր խնդալ:

Եւ ի հեռաստանէ իբր մաւտոյ ողջոյն սրբազան սուրբ աջիդ, գրկախառն քրիստոսական սիրով, հասցէ առ բարձրագոյն եւ գերաշխարհիկ մեծագոյն [...] ի Հայաստանեայց արամեան ազգի արքեպիսկոպոսէ յԵդեսիոյ Յոհաննէս վարդապետէ: Եւ ծանուցումն [...] եւ անհաս իմաստութեանդ ձերում եւ բարձրագոյն իշխանութեան. վասն բադրէին գաբուչին, որ եկին ի Հ[ալապ] քաղաքն եւ մեք այլ այժմուս աստ եմք ի Հալապ քաղաք, որ եւ մեր տեսեալ զսայ, յոյժ ուրախացաք, որ այդպի[...] եւ բարի մարդ չեմք տեսեալ, բազում մարդասիրութիւն արարին առ մեզ եւ առ ամենեսեանս եւ մեք այլ շա[...]ցաք զսոքայ, ըստ Տեառն Յիսուսի բանին, թէ այսու ծանիցեն թէ իմ աշակերտք էք եթէ սիրէք զմիմեանս, վասն որոյ [...]ցաք զսոքայ եւ հանապազ առ մեզ են եւ մեք առ իւրեանք. գնամք եւ գամք առ միմեանս սիրով եւ յիմ[...] սուրբ գրոց խօսելով ընդ միմեանս մխիթարիմք ի միմեանց

---

235 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 181, f. 195r:

խաւսակցութենէ քաղցրութեանն: Զի թո[...] ընդ իշխանութեամբ սոցայ, իբր ի ծառայութիւն, եւ յորժամ զհամբաւ ի ձերմէ սրբութենէ լսալով մեր ուրա[...]հութիւն եւ փառս վեր առաքեմք մարդասիրին Աստուծոյ, որ պահեալ է հաստատուն զիշխանութիւնն ձեր եւ զթագաւորութիւն, որ [...] կարաւտ եւ փափագեմք սուրբ տեսութեան ձերոյ, բայց հեռաւորութիւնն է պատճառ, որ ոչ կարեմք տեսանել. [...] լնուլ զփափագ սրտից մերոց ի սուրբ տեսութեանց եւ յիմաստութեանց ձերոց. մանաւանդ բազմահաւաք սրբոցն [...]բութեան տեղեաց եւ սուրբ եկեղեցեացն. եւս առաւել սուրբ գերեզմանաց առաքելոցն եւ այլ սուրբ ուխտատեղեացն [...] գրով եւ ի գրոց գիտեմք եւ զոր ի համբաւու լսեմք: Եւ խնդրեմք յԱստուծոյ, որ աւգնականութեամբ աղօթից ձերոց, արժանի լ[ինել] տեսանելոյ զերջանիկ մեծութիւնդ ձեր եւ զտեղիք սրբութեանցն: Բայց այժմ այս բադրէիւքս յոյժ մխիթարիմք եւ ուրախ եմք ի տեսութիւն սոցայ, իբր զձեր սրբութիւնն եւ զմեծութիւնն տեսանեմք: Միթէ Աստուծով քոյին սուրբ աղօթիւքն եւ աւժանդակութեամբ մեծութեանց ձերոց այս բադրէքն գաբուչին շատանան ի մեր աշխարհս եւ սէրն եւս քան զ[...] զառատանայ եւ ավելնայ ընդ միմեանս, ի փառս Քրիստոսի եւ զամենազաւր սուրբ անուան նորա. ամէն:

Գրեցաւ ի Հալապ մայրաքաղաք, ի Կենարարի թուին ՌՈԻԷ[1627]: Եւ Հայոց ՌՀԶ[1076 +551=1627] ապրիլ Ե[5], յօրն Ե[5]շաբթի: Ես նուաստ ծառայ Յիսուսի Քրիստոսի Յոհանէս վարդապետ եդեսացի, որ զգիրս զայս վկայական գրեցի վասն բադրէ գաբուչինին եւ ի Հ[...]:

[Կնքադրոշմ] Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի ծառայ Յովհաննէս վարդապետ. թվ. ՌԾԹ:

2. Յովհաննէս եւ Ստեփանոս Նորընծայ քահանաների նամակը Կղեմէս Գալանոսին (Լէոպոլիս, 1666 թ. փետրուարի 21):[236]

Ուսուցողիս մերոյ Տեառն Կղէմէոս աստուածաբան վարդապետի եւ բարերարի կարճառօտ գրոյս պատճառն այս է, տէր վարդապետ մեր եւ բարերար:

Յայտ առնեմ տէրութեանդ զի դեռ եւս ոչ է սրբագրած զեկեղեցիս մեր եւ ոչ քահանայքն պատարագ կու մատուցանեն մեր հայոց յեկեղեցւոյս մէջ, ոչ տէր Ներսէսնս, ոչ տէր Յակոբն, թէ կու մատուցանեն, բայց ջուր ոչ արկանեն ի բաժակն եւ տէր Ներսէսն քան որ եկեալ է՝ դեռ եւս ոչ է արարեալ պատարագ: Այս շաբաթէս մէկ իշխանուհի թաղեցին տօմինիքեաներուն յեկեղեցին. գնաց տէր Ներսէսն եւ տէր Յակոբն այն տեղն պատարագ մատուցին, բայց չեմք գիտէր թէ ջուր արկին թէ ոչ: Մեք այսպէս մնացաք մինչ որ Պարոնտէրէն պատասխանի գայ, մեք յառաջ անցնինք պատարագ թէ նոքա, խնդրեմք զհրամանք տէր վարդապետ, որ հրամանքդ զայս անփոյթ ոչ առնես ու շուտով աշխատես որ սրբագրի յեկեղեցիս մեր: Խնդրեմք թէ որ Պարոնտէրն ամենա նա մեզ հրամանքդ եւ Պարոնտէրն եւ միւս Յովանէս Պարոնտէրն եւ հրամանքդ գիր առաքես, որ մեք ալ գիտենամք զինչ առնեմք: Բաթէռ Տալօճիին բազում կարօտիւ ողջոյն:

Գրեցաւ Եազլովց: Թվ. ՌՃԺԵ [1115+551 =1666], Փետ. ԻԱ[21]

Յովհաննէս նորընծայ Գասպար որդի Մելքոնենց, ծառայ հրամանուցդ

Ստեփաննոս որդի Էսէր Պէկուն Ֆարուխենց նորընծայ, ծառայ հրամանուցդ:

3. Կղեմէս Գալանոսը Յովհաննէս եւ Ստեփանոս Նորընծայ քահանաներին (1666 թ. մարտի 4):[237]

Իմաստնացեալ սիրելի որդւոց մերոց եւ պատուական եղբարց սրբանուէր քահանայից տէր Յովհաննէսիդ եւ տէր Ստեփաննոսիդ զողջոյն սիրալիր եւ զհամբոյր սրբութեան մատուցանեմ Կղէմէս վարդապետս: Եւ ընդ սմին ծանուցանեմ եղբայրութեանց ձերոց, զի հասին առ մեզ եւ առ երկոսին Պարոնտէրս նամակք ձեր եւ իմացաք զհաւատարմութիւնն ճշմարիտ որդւոցդ լուսոյ եւ զպակասութիւն այլոց ոմանց տկարացելոց, զորս դուք

236 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 224, f. 209r: Նամակը Գալանոսն ուղարկել է Հռոմ, ուր այն թարգմանուել է լատիներէնի (տե՛ս նոյն տեղում, f. 108v): Նամակին Գալանոսը պատասխանել է 1666 թ. մարտի 4-ին (տե՛ս ստորեւ):

237 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 224, f. 109v:

պարտիք հաստատել եւ յորդորել ոչ թէ միայն բանիւ այլ եւս օրինակաւ գործոյն, ըստ խրատին Պողոսի, թէ դուք որ հոգեւոր էք հաստատեցէք զայնպիսիս հոգով հեզութեան եւ դարձեալ ասէ, պարտ է մեզ, որ կարօղս եմք, զտկարութիւն տկարացն բառնալ: Վասն որոյ եթէ սակս իւրեանց երկմտութեանն երկնչին, սկզբնաւորել զերկնային գործն, հրամայեալ յԱստուծոյ եւ յընդհանուր յարեւելեան եւ յարեւմտեան եկեղեցւոյ եւ ի հին աւանդոյն սքանչելագործ սրբոյն Լուսաւորչին մերոյ եւ յայլոց համագումար եւ յայլոց համագումար սուրբ ժողովոցն հայոց առաջնորդն իւրեանց գիտէ զոր ինչ առնելոց է նոցա: Բայց դուք, որ էք իմաստունք եւ գիտակք զիրացն եւ հաստատեալք ի բարին եւ հարազատ որդիք նորին սրբոյ Լուսաւորչին, եւ երկու սիւնք եւ լուսաբերք այդր եկեղեցւոյդ, մի՛ թողուք օրինակաւ ձերով շարժիլ զայլոց ծուլութիւնն եւ յառաջառկել զաստուածային գործն ի կատարումն վճարելով խղճի մտացդ եւ եւ բարեպաշտութեան ձեռում: Յիշեցէք զոր ինչ աստ ուսայք եւ զոր ինչ մեզ խոստացայք: Եւ այսքան բաւականասցի խոհեմութեանցս ձերոց, զորոց քաջութիւնն միշտ լինիցի ներադրեալ եւ տպաւորեալ ի մէջ սրտի եւ յիշողութեանս մերոյ առ ի պահեստ վանսն ապագայ պիտոյից ձերոց եւ եկեղեցւոյդ այդորիկ: Ուղջունեցէք ի մերմէ կողմանէ զբարեկամս մեր եւ ուղղափառութեանն: Եւ դուք սիրելի մեր որդիք ողջ լերուք ի Տէր: Գրեցաւ ի Լէոպոլիս ի թվ. Փրկչին ՌՈԿՁ [1666], ի մարտի Դ [4] ըստ Նոր Թոմարի:

4. Ստեփանոս Նորընծայ քահանայի նամակը Կղեմէս Գալանոսին (Լէոպոլիս, 1666 թ. մարտի 12)[238]:

Յայտ առնեմ վարդապետ իմ եւ բարերար, զի ահա Աստուած ետ որ աղօթիւք քով եղեւ սրբագրեալ յեկեղեցիս մեր ըստ հրամանի Առաջնորդիս մեր, բայց զայն խնդրեմք զի զտէր Յակոբն սիրով ընդունիք եւ բարեխօս լինիք Պարոնտէրին վասն նորա զի թողցէ զամենայն սղալանս նորա, զի բազում պատճառ գոյր, զի ոչ եկաւ այդր, բայց այժմոյս կամի գալ այդր, բայց երկնչի ի Պարոնտէրէն, քանզի այսմ տեղւոջ ասացին թէ եթէ երթալովս նոյն ժամայն զքեզ ի բանտ արկանէ, խնդրեմ զի զսա զերծանես եւ զՊարոնտէրն խնդրես, քանզի եւ քայհանայք այժմոյս ընդունեցին զմեզ եւ սիրով եմք ընդ միմեանս, բադէռ Տալիգնին բազում կարօտիւ ողջոյն գրեցաւ թվ. ՌՃԺԵ [1115+.551=1666] մարտ ԺԹ[19]:

... Ստեփանոս Նորընծայ ծառայ հրամանուցդ:

5. Կղեմէս Գալանոսի նամակը Ստեփանոս Նորընծայ քահանային (Լէոպոլիս, 1666 թ. մարտի 25)[239]:

Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայս Կղէմէս վարդապետս, նազելի որդւոյդ մերում ի տէր եւ պատուական եղբօրդ տէր Ստեփանոսիդ ողջոյն եւ աստուածային օրհնութիւն: Ի յաւուր յայսմիկ, յորում տօնախմբեմք զվերհափառ աւետիսն Աստուածածնի եւ Սրբոյ Կուսին, եհաս առ մեզ բաղձալի թուղթն եղբայրութեանդ քո աւետաբեր զհամաձայնութեան եւ եկեղեցւոյ ձերոց ընդ այսմ աթոռանիստ եկեղեցւոյս Լովայ: Եւ որպէս հրեշտակապետն աւետեալ էր զսրբարարութիւնն բնութեանս մերոյ, զմիաւորութեան աստուծային մարդեղութեան եւ զփրկութիւն ազգի մարդկան եւ այնպիսի աւետեաւքն ուրախացոյց զամենայն տիեզերս: Նմանապէս եւ նմանակն սիրելոյդ աւետեաց մեզ զսրբագրութիւնն եկեղեցւոյդ, զճշմարիտ միաբանութիւն նորա ընդ ուղղափառ եկեղեցիս աշխարհի եւ զփրկութիւնն գերապանծ ժողովրդեանդ այդորիկ. եւ ուրախացոյց զմեզ եւ զբոլոր քաղաքս զայս: Ուրեմն ապա դուք Նորընծայ քահանայք, որ եղէք սկիզբն եւ պատճառ այնչափ բարեացն. դուք ասեմ էք արդար եւ փառք եւ պարծանք ազգին ձերոյ, պատիւ հայրենեացդ եւ մխիթարութիւն մեր եւ առաջնորդ եպիսկոպոսացս. դուք շառաւիղք անեղ լուսոյն եւ մարմնացեալ ճշմարտութեան, նմանօղք առաքելոց եւ իսկական զաւակք Գրիգորի Լուսաւորչին եւ այլոց հին սուրբ հայրապետաց ձերոց: Լցուցեր եւս զմեզ բերկրութեամբ յայտ առնելով զհամաշունչ եւ զանխռով միաբանութիւն ամենայն քահանայիցդ այդոցիկ. եւ որպէս ընկալան զձեզ

238 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 224, f. 103r: Նամակն ուղարկուել է Հռոմ: Սրա լատիներէն թարգմանութիւնը տե՛ս նոյն տեղում, f. 104r:

239 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 224, f. 103v: Նամակն ուղարկուել է Հռոմ: Լատիներէն թարգմանութիւնը տե՛ս նոյն տեղում, f. 105rv:

սիրով ի յեղբայրութիւն յընկերակցութեան իւրեանց: Վասն որոշ ո՛չ պարտ է այժմ պատուական եղբօրն մերում տէր Յակովբայ տարակուսիլ եւ երկնչիլ գալ ի քաղաքս եւ հաշտիլ ընդ եպիսկոպոսին իւրում, քանզի ի բաց բարձաւ պատճառն բարկութեան նորա եւ խոստացաւ մեզ հաստատապէս ոչ նեղացուցանել զնա, այլ ներել եւ ընդունել: Հաւատացէք բանիս իմում եւ ի վերայ այսր բանիս նա եկեսցէ աստ շուտով աներկիւղ յառաջ քան զմտանելն Պարոնտէրիս ի ճանապարհն իւր. թէպէտ միշտ ասէ, եւ կամի մերթ ընդ մերթ գնալ ի յայցելութիւն եկեղեցեաց իւրոց. եւ յետոյ երկարէ զգործն ի միոյ շաբթի առ միւսն: Բայց ամենեւին հարկ է նմա կանկնիլ, եթէ ոչ կամիցի ուղարկել փոխանակ իւրեանն զիւր կորեպիսկոպոսն Յոհաննէս: Սակս այսորիկ յորդորեմք զխոհեմութիւնս ձեր, որդիք, զի եւ զգիրքս եկեղեցականս, եւ մանաւանդ զՅայսմաւուրն եւ զՄաշտոցն լաւ սրբագրեսջիք ըստ որում էիք աստ տեղեկացեալք. որպէսզի ի գալն սոցա յայդր հանդերձ ընկերաւս իմով պատրի Ալոյսիսոսիս յայտ լիցի նոցա իմաստութիւն, քաջութիւն եւ հաւատարմութիւն ձեր եւ մի ինչ գտանիցի ի մէջ սրբոյ եկեղեցւոյդ. որ հաճոյ լիցի բանսարկուն սատանայի եւ անհաճոյ մեծվայելչութեանն Աստուծոյ մերոյ: Ողջունեա՛յիմ կողմանէ ամենայն սիրով եւ բաղձանօք զիմ սիրելին եւ զլոյսն աչացս զտէր Յովհաննէս եւ զայլ մեր գերապատիւ եղբարսն զտէր Ներսէս, զտէր Յակովբ, զտէր Հռըստակէս եւ զայլ եկեղեցականս եւ զբարեկամս մեր ի Քրիստոս: Ողջ լեր ի տէր: Գրեցաւ ի Լէոպոլիս: Ի թվ. Փրկչին ՌՈԿԶ [1666] ի մարտի Իե[25], ըստ նոր տոմարի:

6. Կ. Պոլսի պատրիարք, Ամասիայի Յովհաննէս արքեպիսկոպոսի նամակը Հաւատասփիւռի Ժողովին (Կ. Պոլիս, 1674 թ. սեպտեմբերի 1)[240]:

Սրբագունեղ եւ մաքրագունեղ սուրբ ժողով, ես, Յոհաննէս երբեմն եպիսկոպոս Ամասիոյ իսկ այժմ շնորհիւն Աստուծոյ պատրիարգ Կոստանդինուպօլսի կատարեցի զվեհափառ հրամանն զոր հրամայեալ էիք, ի ներքոյ տետերն դաւանութեան ձեռնագրել եւ զոր ինչ ի նմա պարունակեցեալ է՝ ընդունիլ, զորս ընկալեալ էք զամենեսեան եւ դաւանեալն առաջնում թղթում գրեցելում մեծապատուի սրբութեան ձերում, թէպէտ ոչ ներգործութեամբ, սակայն ամենեւին զօրութեամբ յայնժամ եւ ներգործութեամբ այժմ կատարեցի զվեհափառ հրամանն ձեր, որ է օգուտ եւ փրկութիւն հոգւոյ իմոյ եւ իմոյ ազգիս: Դարձեալ կարի զգոհութիւն մատուցանեմ զեպիսկոպոսէն ձերմէ ուղղափառէ Կալամինու[241], որ է այժմ եպիսկոպոս Ղալաթիու մերձ Կոստանդինու պօլիս, զի որպէս զճշմարտութիւն հաւատոյ ուղղափառի եկեղեցւոյդ Հռոմայ ուսաք եւ ծանեաք ի ձեռն Բարսղի քահանայի եւ վարդապետի երբեմն վարժեցելոյ եւ կրթելոյ ի դպրատան Տէ Պրօպականտա ֆիտէի, նոյնպէս զքաղցրութիւն, զմարդասիրութիւն եւ զսէր քրիստոնէական ի նմանէ տեսաք բանիւ ի ձեռն թարգմանչի վերոյ գրեցելոյ Բարսղի եւ վարդապետի, ըստ կարողութեան իւրում: Դարձեալ յայտնի լիցի ձերում մեծափառութեանդ, զի իմում թղթում նա առաջնում ամում առաքեցելում մեծութեանդ ձերում ոչ պատասխանեցիք, ոչ գիտեմք թէ հայելով ի մեղս եւ յանօրէնութիւնս իմս զանարժան համարեցաք զիս եւ թէ հայելով ի մեծութիւնս եւ յիշխանութիւն ձերս արհամարհեցիք զիս: Արդ եթէ հայեցաք ի մեղս իմ եւ ես իսկ զմեղս զանօրէնութիւնս իմս ինձէն գիտեմ եւ մեղաւոր գոլով իմ վասն այնորիկ հարեցայ առ ուղղափառս եւ ճշմարտասէրս, զի օգնականութեամբ ձերով եւ աղօթիւք քաւիցիմ յանօրէնութեանց եւ ի մեղաց իմոց եւ թէ նայեցաք ի մեծափառս յիշխանութիւնս ձերս, արդարեւ եւ ես յաղագս այնորիկ մերձեցայ, ի սրբափայլս յիշխանութիւնս ձերս. զի փոքր ի շատէ թեթեւանայցեմ ի չքաւորութենէս իմմէ հոգեւորէ եւ մարմնաւորէ:

240 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 446, f. 61rv:

241 Նկատի ունի Կ. Պոլսում 1663-1677 թթ. Հռոմի Աթոռի առաքելական նուիրակին՝ Andrea Ridolfi della Fratta d'Urbino OFM Conv., bishop of Calamine-ին (վերջինիս մասին տե՛ս **Laura Elisabeth Binz**, *Latin missionaries and Catholics in Constantinople 1650-1760: Between local religious culture and confessional determination*, Florence, 2013, p. 52. տապանագիրը տե՛ս **Belin François**, *Histoire de la Latinité de Constantinople*, Paris, 2nd ed., 1894, pp. 354):

Արդ աղաչեմ զձեր իշխանութիւնդ, մի հայիլ յիշխանութիւնդ ձեր, զոր տէր Աստուած զհաստատուն պահեսցէ, մինչեւ ի գալուստն Քրիստոսի: Արդ հայիլ յաղքատութիւնս եւ ի տառապանս մերս հոգեւորըս եւ ի մարմնաւորս զորս կրեմք յանհաւատից, ըստ նմանութիւն բանին Աստուծոյ որ զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի առեալ, զի զծառայս ազատեսցէ ի վշտաց իւրեանց, որպէս յարաժամ արարեալք էք ամենայնում ազգում եւ առնէք այժմ ներկայօրէն, նոյնպէս զիջեալք ի բարձրութենէդ ձերմէ արարէք եւ մերումբ ստրկութեանս զնոյն աստուածանմանութիւնդ ձեր: Դարձեալ յուշ լիցի ձերում մեծութեանդ, զի Բարսեղս այս քահանայս եւ վարդապետս վերոյ գրեցեալն, որ այժմ ի նեղութեան եւ ի հալածանս է ի մէջ ազգիս մերոյ ամբարշտի եւ սոպռի զորս ներկայօրէն կրէլ եւ մանաւանդ յառաջ քան զլինելն իմ զպատրիարգ սաստկապէս կրեաց հալածանս մինչեւ յեկեղեցւոյն վարեցին, առ ի ոչ ասել զժամս եւ ոչ քարոզել զճշմարտութիւն վանեցի ի ձեռն թուրքաց իշխանութեանն շնորհօքն Աստուծոյ: Սակայն քահանայք եւ աշխարհականք յոլովք կան հակառակք, զորս դժուարին է ըմբերանիլ եւ լռեցուցանել ի չարեաց իւրեանց ամենեւին, զի ի նոցանէ պիտոյապրիլ եւ զգեստաւորիլ: Զի որպէս յայտնի. է ձերում իմաստուղիղ խոհեմութեանդ ոչ մեծ ոչ մեծ քաջասրտութիւն է ուղղափառ քարոզել զճշմարտութիւնն հերձուածողաց օգնականութեամբ իշխանութիւն ուղղափառոց: Այլ մեծ քաջասրտութիւն է այն, որ յորժամ յանհաւատս էեւ ի հերձուածողս քարոզեսցէ զճշմարտութիւն ուղղափառութեան եւ տոկասցէ վշտաց եկելոց ի նոցանէ եւ ոչ թուլասցի գործոյ քարոզութեան ճշմարտութեան. զարմանամ զձերմէ բազմախոհեմէ իմաստութենէ, թէ ընդէր թողեալ էք զսա ի ձեռաց, զի եթէ զյանցանս ինչ յանցուցեալ է ձերում մեծութեանդ, զշնորհս արարեալք ինձ յայտնեցէք եւ թէ ոչ ընտիր է այսպէս: Բայց իմ տգէտ դատողութիւնն այնպէս ընտրէ թէ զյանցանս ինչ յանցուցեալ է ձերում մեծութեանդ, պարտք էր ձերում անոխակալութեանդ անյիշաչար լինիլ՝ որովհետեւ ի պարզ թեանդ անյիշաչար լինիլ՝ որովհետեւ ի պարզ ճշմարտութեան կայ եւ ի նոյնում ճգնի. մանաւանդ թէ զիս զգազանս եւ զնմանս իմ քարշէ իւրով հաւանեցուցանողականաւ բանիւ յորդիութիւնդ ձեր եւ յանդամս յօդէ. եկեղեցւոյդ Աստուծոյ: Արդ հայցեմ յանոխակալութենէդ ձերմէ մխիթարիլ ի վշտաց իւրոց զի առաւելապէս ճգնեսցի ի քարոզութիւն ճշմարտութեան: Որոյ ճշմարտութեան վկայքի ես մեղաւորս եւ վերոյ գրեցեալ եպիսկոպոսն Կալամինու եմք: Մանաւանդ դեսպանն Ֆրանսիսու նստող ի Ղալաթիա եւ այլք կրօնաւորք կաբուճիք եւ իզվիթայք որք ի սոյնում քաղաքի գտանիցին, դարձեալ խնդրեմ ի սրբոյ ժողովոյդ, զի շնորհիցէք այսմ Բարսղի քահանայիս իշխանութիւն արձակելոյ ի հերձուածողութենէ զարս եւ զկանայս, որք դառնան ի ձեռն նորա յուղղափառութիւն հաւատոյ: Փոխանակ չի նորքանում ամանակում է Կոստանդինուպօլսում, եպիսկոպոսն Կալամինու արձակէ, ըստ որում բազում անգամ արար, բայց յորժամ ելանէ աստի սակս կարեաց իւրոց, յայնժամ հարկաւորի, որպէս յայտ է ձերում վեհափառութեանդ:

Դարձեալ կամէի ուղարկել զսա նամակօք իմօք աղերսականօք առ մեծ պատրիարք հայոց որ նստի յէջմիածին ի Հայաստան, վասն զի ունի ընդ իս բարեկամութիւն ոչ սակաւ եւ ես ընդ նմա, առ ի ձեռնադրել եպիսկոպոս վիճակի ուրուք, ի նմանէ, ասելով եթէ ոչ լինիցի հրաման ի սրբոյ ժողովոյն ոչ կարեմ ձեռնադրել ի նմանէ: Յաղագս որոյ ի սրբութենէդ ձերմէ խնդրեմ, զի յայտնեցէք զձերս կամք թէ զինչ պարտ է առնել սակս այս իրի: Դարձեալ յայտնի եղիցի ձերում մեծափառութեանդ, զի ոմն տօմինիկան Գրիգոր անուն, քահանայ ազգաւ հայ, որ ի մանկութենէ իւրմէ մտեալ է ի կարգ սուրբ Տոմինիկոսի, բայց յառաջ քան զլինիլն տօմինիկան ի դպրատանն Տէ պրօպականտա ֆիտէի ուսեալ է ժամանակ ինչ, իսկ այժմ ի Ղալաթիոյ մերձ ի Կոստանդինուպօլիս. զքահանայութեան գործք յոյժ սաստկաւ ջերմեռանդութեամբ առնէ, զանձն ի մահ մատնեալ սակս Քրիստոսի, ի մէջ մահաւորաց ընթանայ այսր անդր առ աղքատս, առ գերիս, եւ առ այնոսիկ հիւանդս, յորոց փախչին այլք քահանայք եւ կրօնաւորք ի պատճառս մահու, զայս հայցէ նա եւ ես անարժանս ի սրբութենէդ ձերմէ, զի գիտեցէք եւ մի մոռանայցէք զաշխատանս նորա, որք սակս Քրիստոսի են: Դարձեալ հայցեմ ի սրբութենէդ ձերմէ զի զգործս Կղեմէսի Կալանոյ ի կարգէ թէադինոսաց որք են Վիճաբանութիւնք ընդդէմ Հայոց, առաքեսջիք զշնորհս առնելով մեզ, վասն

զի յոլովք են ոմանք որք փափագին ընթեռնուլ առ ի գիտել զճշմարտութիւն հաւատոյն. եւ այլք ոմանք են, որք հաւանեալք են ճշմարտութիւնս ամենից ընդդիմութեանց ներպարունակեցելոց ի գործս Կղեմէսի, վասն այնորիկ յոյժ հարկաւորք են ուղղափառութեան հաւատոյ եթէ առաքիցէք զնոյն:

Ես աղերսեմ զձեր մեծափառութիւնդ զի եթէ գտանիցի ի նամակին այսմիկ ըստ հաճոյից ձերոց տեառն շնորհ եւ եթէ գտանիցին անպատշաճք բանք, մաղթեմ ներել իմումս տգիտութեան, փոխանակ զի ոչ եմ տեղեակ տակաւին ըստ եղանակի ձերոյ գրել, բայց միայն զաղէրս մեր ցուցանեմք բարբարոսական բանին եւ կերպիւ, դմին իրի աղերսեմ շնորհել բնաւից սղալանաց ներպարունակեցելոցն այսմիկ նամակիս: Ողջ լիցի սուրբ ժողովդ ի հոգին սուրբ: Գրեցաւ ի Կոստանդինուպօլիս ի դրան եկեղեցւոյ սրբուհւոյ Աստուածածնին:

Սրբագունեղ ժողովոյդ

ջերմեռանդագունեղ եւ ստորնագունեղ ծառայ եւ որդի (կնքադրոշմ)

7. Կ. Պոլսի պատրիարք, Ամասիայի Յովհաննէս արքեպիսկոպոսի նամակը Հաւատասփիւռի Ժողովին (Կ. Պոլիս, 1675 թ. յունուարի 11)[242]:

Սրբագունեղ ժողովք

Պատուականագունեղ եւ բարձրագունեղ տեարցդ կառտինալացդ յիսուսական ողջոյն լիցի:

Քանզի ոմն ի մեր ազգէն եւ ժամանակաւ ի մանկանց ձեր սուրբ ժողովն սնեալ եւ մի է ի թիւս ընտրելոցն սրբազան հացիւն փափին հռոմայեցւոց դիացեալ, մօրմես Սարգիս եւ այժմ տօմինիգանս տէր Գրիգոր Կիրակոսենց: Մեք մեզէն հաւանեցանք սորա բարեգործութիւն եւ ջանիցն որ առ հոգեւոր սպասաւորութիւն ի յայս տեղս որ է հանդէպ Կոստանդինուպօլսի ի Ղալաթիայ եւ ի զընտանն մեծ տաճկաց, յորդորելով տեսանելով զհիւանդսն եւ յաւուրս տօնից ի ծառայսն քրիստոնէից որք են ի բազում տեղիս, եւ ընդունակ է բազում լեզուի, այսինքն մառոնի, հապաշի, լեհացի, ուռուսի, ասորւոյ այլ թէպէտ ի ձէնջ ոչ է հարկաւորեալ եթէ զայս չարչարանքս կրեսցէ՝ բայց անձամբ անձին ինքն զմահն յանձն առնելով զամենեսեան յորդորէ (եւ ամենեցուն կու սպասէ) եւ մանաւանդ վկայեմ ես բոլորովիմբ որ կու սպասէ եւ կու ծառայէ մահու հիւանդաց, ի հիւանդանոցն ի սուրբ Յովհաննէս Մկրտիչն, որ ի Ղալաթայ վասն որոյ եւ մեք պարտաւորեցանք աղաչել ի ծունր անկանիլ եւ աղերսել զձեր սրբազան ժողովն գերագունեղ ընդ ձերոյ որ գերագունեալ էք, խնդրեմք բոլորովիմբ խոնարհութեամբ զձեր բարձրագունեղութիւնդ զի արժան առնիցէ ընդունիլ զայս խնդիրս մեր, այսինքն գրել եւ հաստատել, որ այս խղճագոյն պատրիս ոչ շարժիլ ի յայս տեղացս որ կայ, այսինքն ի Ղալաթիա: Քանզի ամենեքեան վկայեցին եւ մեր ինքնին աչօք մերօք տեսաք որ առաքելաբար կու շրջի եւ կու ուսուցանէ եւ կու յորդորէ զամենեսեան յուղղափառութիւն: Եւ դարձեալ զի արասցին զսա որդի տանս այսմ սրբոց գլխաւոր առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի: Եւ զայս գիրս հաստատել տացէք իւրեան մեծաւորին որպէս որ սովորութիւն է տօմինիգաներում: Ահա խնդրեցաք զի տացէք:

Գրեցաւ սակաւ գիր հայոց թվին ՌՃԻԴ [1675], յունվար ամսոյ ԺԱ [11] օրն, Բ[2]շաբաթի ի Կոստանդինու պօլիս:

Ծառայ Հռոմայ եկեղեցւոյն եւ պատրիարք Կոստանդինուպօլսի տէր Յոհաննէս եպիսկոպոս:

8. Նախիջեւանցի հայ կաթողիկէների խնդրագիրը դոմինիկեան միաբանութեան մեծաւորին (Կ. Պոլիս, 1681 թ. յուլիսի 23)[243]:

Պայծառագոյն եւ պատուականագոյն երջանիկ եւ սրբազան Հօրդ մերոյ դոմինիկանաց ջէնէրէլիդ երկրպագութեամբ յայտարարութիւն եւ ողջոյն ի Քրիստոս Յիսուս:

Մեք նուաստք եւ տառապեալք որդիք սրբոյ եւ մեծի Աթոռոյդ Հռոմայու գրել հարկաւորեցաք մեծապատիւ տէրութիւնդ զայս աղերս մաղթանաց: Զի մեք ամենեքեան աւելի քան ըզեճ[500]

242 Բնագիրը տե՛ս SOCG, vol. 446, f. 391r:

243 Բնագիրը տե՛ս SC Romania, vol. 2, f. 245r: Բարսեղ Բարսեղեանի ձեռքով արուած լատիներէն թարգմանութիւնը՝ նոյն տեղում (f. 244rv+246r):

անձն, կամք ցրուեալք ի կողմանս Կոստանդնուպօլսոյ, Պրուսայու եւ յիԶմիւռնիոյ լիկէացւոց, ոչ ունելով ուսուցիչս եւ խոստովանահայրս, որ տեղեակ իցէ լեզուաց հայոց եւ թուրքաց, որ հովվիցէ զմեզ կրելով զաշխատանս առ ի շրջիլ ի գիւղորայս եւ ի գիւղաքաղաքսս յորս կամք մեք ցրուեալք, բաց ի պատէր Գրիգորէն Ջիրաչէնսիս որ ի կարգէն դոմինիկանաց եւ կայ ի վանս սրբոյ Պետրոսի եւ Պօղոսի որ ի Ղալաթիայ. որ սա յամենայն տարուոջ երեք անգամ յանձն առեալ զվիշտս ճանապարհի ծախիւք իւրովք, տասն աւուրբք հեռաւորութեամբք եկեալ խոստովանեցուցանէր զմեզ եւ հաղորդէր եւ մխիթարեալ զմեզ զամենեսեան, աստուածային բանիս, դառնայր ի վանս իւր: Իսկ այժմ յուսահատեալ չքաւորութեան աղագաւ բարձի թողի արար զմեզ, ընդ որս ամենեքեան Բ եւ Գ տարօվ մնամք առանց խոստովանութեան եւ առանց հաղորդութեան եւ բազումք եւս մեռանեն այսպէս իբրեւ զհեթանոսս: Վասն որոյ հայցեմք ի հայրական գթութենէ ձերմէ կարգել զմեզ վերստին վերակացու զվերոյ ասացեալ պատէր Գրիգորն, զի կառավարեսցէ զմեզ ըստ առաջին սովորութեանն, տալով սմա ոլուֆայ ի սուրբ Աթոռոյդ, զի մի այսպէս հեթանոսաբար մեռեալ իջցուք ի դժոխս եւ կորիցուք եւ լիցի վտանգ հոգւոյ ձերոց, վասն որոյ եւ որք կայաքն պատրաստ, կնքեցաք կնքաւ մերով առ ի հաստատութիւն կնքոյս, վասն զի եմք ամենեքեան ծառայք մեծի տէրութեանդ եւ որդիք ըստ հաւատոյ սրբոյ Աթոռոյդ:

Գրեցաւ ի թուին Քրիստոսի ՌՉՃՉ յուլիսի ամսոյ ԻԳ, ի Կոստանդինուպօլիս մայրաքաղաքուոջ:

[տ.կ.] Ես Պետրոսս խնդրեմ:

[տ.կ.] Ես Ճահկեցի Վելիջանի որդի Յակոբճանս խնդրեցի:

[տ.կ.] Ես Ճահկեցի Ամիրճանի որդի Շաղավաթս խնդրեցի:

[տ.կ.] Ես գաղեցի Միրիճանի որդի Սարգիսըս խնդրեմ:

[տ.կ.] Երեւանցի Խաչատուրըս խնդրեմ:

[տ.կ.] Ես Ոհանէս խնդրեմ:

[տ.կ.] Արզրումցի Սարգիսըս խնդրեմ: